



ԵՐԵՎԱՆ

1969

ՄԻՈՆ

ԽԳ. ՏԱՐԻ-ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

SION

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM
A BIMONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

VOL. 43

NO. 11 - 12

1969

Նոյեմբեր - Դեկտեմբեր

Թիւ 11 - 12

ՎԱՍՆ ԽՄԱԳՐԱԿԱՆԻ

ՍԽԱԼ ԵՒ ՄԵՐԺԵԼԻ

(Խմբագրական «Էջմիածին» ամսագրի, 1969, Բ. Ժ - ԺԱ)

Սոյն քուի Սեպտեմբեր ամսի վերջերին Մայր Աթոռում ուտացուեց 31 էջերից բաղկացած հայերէն լեզուով մի գրքոյկ՝ «Նշումներ հոգեւորականներու ամուսնութեան եւ կուսակրօնութեան մասին», որի հեղինակն է Տ. Տիրան Արք. Ներսիսեանը։ Գրքոյկի վրայ չեն նշուած ո՛չ քուականը, ո՛չ էլ տպագրութեան վայրը։ Գրքոյկը քարգմանութիւնն է հեղինակի անգլերէն լեզուով գրած համանուն գործի, որը լոյս է տեսել հայերէն քարգմանութիւնից քիչ առաջ։

Խմբագրութիւնն տխրութեամբ ծանօթացաւ սոյն գրքոյկի բովանդակութեանը։ Ասում ենք տխրութեամբ, որովհետեւ այն գրուել է Նիւ-ձըրքիի (Նիւ-Եորք) Հայոց եկեղեցում, այս տարի Փետրուար ամսին կատարուած Հայ մի վարդապետի ամուսնութեան ծանօթ պարագայի առնչութեամբ։ Յայտնի է բոլորին, թէ Ամենայն Հայոց Հայրապետը, խնդրանքով Միացեալ Նահանգաց Արեւելեան Թեմի Առաջնորդ Տ. Թորոս Արք. Մանուկ-



եանի, 12 Ապրիլ 1969 թուակիր հայրապետական իր վճռով՝ «Ոչ յօրինակ ալյոց» բանաձեռով հրահանգեց, որ դադարեն ամեն կարգի թեր ու դեմ հրապարակային արտայայտութիւնները, կատարուած կանոնական խախտումի վերաբերեալ: Վեհափառ Հայրապետը նոյն ոգով հանդէս եկաւ նաեւ վերջին եպիսկոպոսաց ժողովում, հարցը փակուած համարելով:

Գոհունակութեամբ պէտք է արձանագրել, թէ բոլորը յարգեցին Հայրապետի հեղինակութիւնը, թէ՛ եպիսկոպոսական դասը, թէ՛ Միացեալ Նահանգաց վերջին թեմական պատգամաւորական ժողովը եւ թէ՛ Հայ մամուլը: Միմիայն Տ. Տիրան Արք. Ներսիսեանը չանսաց Հայրապետի յորդորին եւ հրապարակ հանեց վերալիշեալ գրգոյլը, անգլերէն և հայերէն լեզուներով: Խմբագրութիւնս եւս իրեն թոյլ չի տայ անդրադառնալու Նիու-Ճըրքիում կատարուած եկեղեցական խախտումին, սակայն անհրաժեշտ է համարում մի քանի ճշդումներ կատարել հրապարակուած «ճշումներ»-ի վերաբերեալ, որովհետեւ հեղինակը փորձում է Նիու-Ճըրքիի եկեղեցում կատարուած ակտը կանոնական համարել եւ այն ընդհանրացնել, եւ մոյճիսկ ժխտել հայրապետական իշխանութեան իրաւասութիւնը վնիւ տալու մնաց արարքի նկատմամբ:

Ա. Տ. Տիրան Արքեպիսկոպոսը իր ամբողջ տրամաբանական կառոյցը հիմնում է Անկիւրիայի ժողովի մի կանոնի եւ Ս. Գրքի Լուսաւորչին վերագրուած մի այլ կանոնի իւրայատուկ մեկնաբանութեանց վրայ, եզրակացնելով թէ՛

«Երբ վանական մը (սարկաւագ կամ քահանայ) կը բաժնրւի եւ կը հեռանայ վանական կարգէն, լինի իր կամով եւ կամ իր մեծաւորին նախաձեռնութեամբ, առանց սակայն կարգաւոյժ ըլլալու, այդ պարագային՝ անոր համար թէպէտեւ ի գորտ կը մնայ ամուսնութեան արգելքը, բայց ան պէտք է ազատ արձակուի վանական իր ուխտէն» (էջ 9):

«Վանականին վանքէն գառուած ըլլալու արարքն իսկ ինքնին գայն ազատ կը կացուցանէ իր վանական ուխտէն» (էջ 9):

«Առաջնորդ մը իրաւունք ունի իր ուխտէն ազատ արձակելու նախկին վանական մը» (էջ 9):

«Եպիսկոպոս մը իրաւունք ունի ի հարկին արձակելու հոգեւորական մը իր կուսակրօնութեան պարտաւորութենէն, մասնաւոր կամ բացառիկ տնօրինութեամբ մը»:

«Կաթողիկոս-Պատրիարքն իսկ չի կրնար առաջին առիթին վնիւննր տալ այսպիսի պարագաներուն» (էջ 15):

Ուրեմն, ըստ հեղինակի, կուսակրօն քահանան (աբեղայ, վարդապետ) կարող է ամուսնանալ, մի եպիսկոպոսի արտօնութեամբ, որի իշխանութեան ներքեւ է անցել նա, վանքից հեռանալուց յետոյ:

Նախ պէտք է ասել, թէ Անկիւրիայի ժողովից մէջքերուած կանոնը բաւարար հիմք չի տալիս մնաց մեկնաբանութեանց եւ ընդհանրացումների յանգելու, որովհետեւ կան նաեւ հակառակ իմաստով կանոններ, որոնց ակնարկում է նաեւ Տիրան Արքեպիսկոպոսը եւս: Օրինակ՝ Երկրորդ Առաքելական կամ «Կանոնք Կղե-

մայ» կանոնախմբի ԻԴ հնագույն կանոնը ասում է՝ «Ի՜նչ չամուսնացած ժառանգաւորութեան (կուսակցութեան) մէջ մտածներից, ամուսնամալ ցանկացողներից հրամայում ենք ամուսնանալ միայն զրակարացներից եւ սաղմոսասացներից» («Կանոնագիրք Հայոց», ԻԴ կանոն, էջ 80)։ Ապա պէտք է նշել, թէ Անկիւրիայի յիշեալ ժողովը, որը տեղի է ունեցել 314-315 թթ., տեղական մի ժողով է, որը չունի տիեզերական ժողովի հեղինակութիւն, եւ որին Հայ եկեղեցին չի մասնակցել, թէեւ՝ քրիստոնէական եկեղեցիների կողմից համարւում է տեղական օրինաւոր ժողովներից մին։

Կարելոյ է նշել, թէ գուտ տեղական բնոյթ ունեցող այդ ժողովի կանոնները առնչւում են Դ Դարի սկիզբներում տեղի ունեցած պատմական քացառիկ իրադրութեանց հետ։ Անկիւրիայի ժողովը նկատի է ունեցել Դիոկղետիանոս կայսեր հալածանքների առիթով կատարուած ուրացումները եւ ապաշխարութեամբ եկեղեցու գիրկը դարձողների պարագան։

Առաւել կարեւորն այն է, սակայն, թէ ոչ մի քրիստոնէական պատմական եկեղեցի չի գործադրում Անկիւրիայի ժողովի յիշեալ կանոնը ցոյց տրուած մեկնաբանութեամբ, ո՛չ արեւել-ում, ո՛չ արեւմուտքում։

Ինչպէ՞ս կարելի է խորհել, թէ Հայ եկեղեցու, Օրթոդոքս եկեղեցիների եւ Կաթոլիկ եկեղեցու հայրերը, վարդապետներն ու աստուածաբանները տասնվեց դարեր շարունակ գլխի չեն ընկել ու չեն կարողացել յայտնարել Տիրան Արքեպիսկոպոսի մեկնաբանութիւնը ու եպիսկոպոսներին չեն տուել եւ այսօր էլ չեն տալիս նման արտօնութիւն։ Միմիայն այս պարզ եւ յստակ իրողութիւնը բաւարար հիմունք է որեւէ ողջմիտ մարդու համար, հաստատելու Տիրան Արքեպիսկոպոսի մեկնաբանութեանց շփոթը։

Բ. Յայտնի է, թէ պատմական զարգացման ընթացք է ապրել կուսակրօն քահանայութեան դրութիւնը։ Գ եւ Դ Դարերում բոլորովին ա՛յլ էր ըմբռնումը եւ իրադրութիւնը եկեղեցու մէջ, ամէն տեղ, թէ՛ արեւմուտքում եւ թէ՛ արեւելքում։ Միայն Դ Դարի վերջերից, եւ մասնաւոր Ե Դարում է, որ նուիրագործում է կուսակրօնութեան կարգը եկեղեցու հոգեւոր պաշտօնեաների, խոսնման՝ եպիսկոպոսի եւ քահանայի եւ սարկաւազի նկատմամբ։ Փոքր Ասիայի մէջ կուսակրօն վանականների դրութիւնը սկիզբ է առնում Սեբաստիայի եպիսկոպոս Եւստաթէի օրօք, 350 թուականից յետոյ, ապա տարածւում է Մեծն Բաքսեղի, Կապադովկիայի մետրոպոլիտի օրով, Դ Դարի վերջերին։ Ե Դարում է, որ կուսակրօնութիւնը դառնում է ընդհանուր դրութիւն թէ՛ արեւելքի եւ թէ՛ արեւմուտքի համար։ Արեւմուտքը անխի արմատական է լինում, կուսակրօնութեան կանոնը անխիստօրէն պարտադիր դարձնելով բոլոր հոգեւորական աստիճանների համար (385-ին՝ Հռոմի Սիրիկիոս եպիսկոպոսի (Պապի) եւ 450-ին Հռոմի Լեոն Ա եպիսկոպոսի (Պապի) կանոնական վճիռներով)։ Մինչդեռ արեւելքը պահում է միաժամանակ նաեւ ամուսնացեալ քահանայութեան դրութիւնը։

Որով Տիրան Արքեպիսկոպոսի յիշած մէկ-երկու կանոնները Դ Դարի սկիզբներից, հետագայ զարգացումներով եւ վերջնապէս հաստատուած կանոնական դրութիւններով՝ *դարձել են և մնացել՝ ժամանցուած, այսինքն չգործադրուած կանոններ, Ե Դարից սկսած մինչև մեր օրերը*։

Գ. Ընդհանուր եկեղեցու պատմութեան մէջ Դ Դարից սկսած, բացի տիեզերական ժողովներից, բազմաթիւ տեղական ժողովներ են եղել, թէ՛ արեւելում, թէ՛ արեւմուտում, եւ բազմապիսի կանոններ հաստատուել։ Հետագային այդ կանոններից ստանալ վերափոխուել են, ժամանցուել են, անգործածելի են դարձել եւ կամ ժխտուել։ Մի ամբողջ պատմութիւն կարելի է գրել այդ մասին։

Այդ իսկ պատճառով, Օրթոդոքս եկեղեցիները (Յոյն, Ռուս, Ռումին եւ այլն), ինչպէս եւ Հռովմէական Կաթոլիկ եկեղեցին, ունեն իրենց յստակօրէն կազմուած կանոնագրքերը, որտեղ դասաւորուած կերպով արձանագրուած են բազմաաւարիւր հին կանոններից ֆաղուած այն կանոնները, որոնք ի գործ են համարուել, գործադրելի եւ պարտադիր, տուեալ եկեղեցու համար։

Տ. Տիրան Արքեպիսկոպոսը մտաւում է, որ Հայաստանեայց եկեղեցին նման կանոնագիրք չունի այսօր, եւ շատ վաղուց է, որ չունի։ Վերջերս երեսնում լոյս տեսած «*Կանոնագիրք Հայոց*»-ը, ինչպէս եւ Մելիք-Թանգեանի «*Հայոց եկեղեցական Իրաւունքը*» իրականում պարզապէս կանոնների հաւաքածոներ են՝ ֆաղուած հին ձեռագրերից։ Այս պայմանների մէջ ինչպէ՞ս կարելի է յայտարարել՝ «կանոնը ասում է», այն էլ Դ Դարի սկիզբներից տեղական բնոյթ կրող ո՛չ-հայկական մի ժողովի՝ շատ վաղուց ժամանցուած մի քանի կանոնների մասին։

Երեսնում հրատարակուած «*Կանոնագիրք Հայոց*» հաւաքածոն թղթատուղ որեւէ ընթերցող կարող է նկատել, թէ այնտեղ կան շատ կանոններ, որոնք վաղուց դադարել են գործադրելի լինելուց, եւ նաեւ այնպիսիներ, որոնք միմեանց հակասում են։ Բերենք մի քանի օրինակներ։

1. «Եթէ եպիսկոպոսը կամ երէցը և կամ սարկաւազը պատարագի ժամանակ չհաղորդուեն, պատճառը թող ասեն, ապա թէ ոչ՝ թող մերժուեն եկեղեցուց» (Ը կանոն, էջ 76-77)։

2. «Տարուան մէջ երկու անգամ եպիսկոպոսական ժողով լինի» (ԼԵ կանոն, էջ 84)։

3. «Հրեայի կամ հեթանոսի հետ յարաբերութիւն ունեցողը, մերժուի եկեղեցուց» (Է կանոն, էջ 76, ԽԴ կանոն, էջ 87, ԿԵ կանոն, էջ 92)։

4. «Մեծ պահէր չպահող եպիսկոպոսը կամ քահանայ կարգալոյծ լինեն» (ԿԴ կանոն, էջ 92)։

5. «Վայելուչ է որ աշխարհի բոլոր եպիսկոպոսների համաձայնութեամբ, առաջնորդ-եպիսկոպոս նշանակուի» (Դ կանոն, էջ 119, Զ կանոն, էջ 120)։

6. «Աղեքսանդրիայի, Անտիոքի, Հռովմի եպիսկոպոսները թող իշխանութիւն ունենան ամբողջ եկեղեցու վրայ» (Զ կանոն, էջ 120)։

7. «Եպիսկոպոսը ձեռնադրուի երկու կամ երեք եպիսկոպոսներից» (Ա կանոն, էջ 75):

8. «Իր արգանդի պտուղը ոչնչացնող կինը 10 տարի ապաշխարի» (Գ կանոն, էջ 170):

9. «Քահանան ձեռնադրուի 30 տարեկան հասակում» (ԺԶ կանոն, էջ 186), եւ այլն:

Այո, դժբախտաբար մեր եկեղեցին իր կանոնագիրքը չունի մինչեւ այսօր: Մայասելի էր, որ մեր եկեղեցական իշխանութիւնները այդ կարեւոր գործին ձեռնարկած լինէին գէթ վերջին հարիւր-հարիւր յիսուն տարիների ընթացքում, երբ Արեւելահայաստանում «Պաշտօնի»-ով եւ Արեւմտահայաստանում «Ազգային Սահմանադրութեամբ» Հայ եկեղեցին, մեր ժողովրդի հետ միասին, ազգային զարթոնք ապրեց:

Այսօր մենք բարի մախանձով պէտք է նայենք մեր Օրթոդոքս եւ կաթոլիկ մեր եկեղեցիներին, որոնք իրենց օրինաւորապէս եւ ժողովականօրէն կազմուած կանոնագրքերը ունեն, որտեղ կարելի է գտնել ուզածդ յստակ կանոնը որեւէ եկեղեցական հարցի վերաբերեալ: Այդ կանոնագրքերը ժամանակ առ ժամանակ վերանայւում են, փոփոխութիւններ են կրում կամ նրանց մէջ լրացումներ են կատարւում:

Այսպէս օրինակ, վերջերս, Հոկտեմբեր ամսում, Հռոմում տեղի ունեցած եպիսկոպոսաց արտակարգ սինոդը որոշեց վերաճնութեան ենթարկել Հռոմէական-կաթոլիկ եկեղեցու արդի կանոնագիրքը:

Մեր եկեղեցու առաջ դրուած սեպուի խնդիրներից մէկն է կազմել Հայաստանեայց եկեղեցու կանոնագիրքը, քաղուած հին կանոնների հաւաքածոյից, կարգաւորուած, դասաւորուած եւ ներդաշնակ մի ամբողջի վերածուած, դուրս թողնելով ժամանցում, անգործադրելի եւ ժամանակավրէպ կանոնները, հաշուի առնելով մեր եկեղեցու եւ ժողովրդի հոգեւոր-եկեղեցական եւ վարչա-կազմակերպական կեանքի արդի պայմանները:

Մինչ այդ, մենք ամենայն աշարջութեամբ պէտք է պահպանենք այն կանոնական կարգը, որ *նուիրագործուել է զարերի փորձով*, տիեզերական երեք ժողովներով, Հայ եկեղեցու կարեւոր պատմական ժողովներով եւ *աւանդութեամբ*: Այլապէս, եթէ կանոնների հաւաքածոյից մի «կանոն» հիմք առնենք եւ իւրովի մեկնաբանենք, կարող կը լինենք ամէն ինչ ապացուցել և շփոթութիւն եւ փռս ստեղծել մեր շուրջ:

Օգտագործեցինք «դարերի փորձով մուիրագործուած» եւ «աւանդութեամբ» հասկացողութիւնները, որոնք մենք վեռական լինելու չափ կարեւոր ենք համարում: Տրուած լինելով, որ մեր եկեղեցին չունի այսօր իրական մի կանոնագիրք, *երբ հարկին հերքել ենք գտնուում հին մի կանոնի վաւերականութիւնն ու գործադրելիութիւնը ճշդելու, պէտք է գիմենք մեր եկեղեցու զարերի փորձով նուիրագործուած կարգին ու աւանդութեան*:

Դ. Սիսաւում է Տ. Տիրան Սրբազանը, հեգնամքի արժանի դարձնելով *աւանդութիւն* հասկացողութիւնը, երբ այն բնորոշում է իրրեւ «քանձր մշուշ» (էջ 15): Այդ ոչ միայն հակակրօնական

եւ հասկանկեղեցագիտական է, այլ առհասարակ հակագիտական: Ներքի չէ մի հոգեւորական մտածողի՝ մերժել եւ հեզմել *աւանդութիւն* հասկացողութիւնը: Արեւելիի եւ արեւմուտի բոլոր պատմական եկեղեցիները իրենց աստուածաբանական ուսմունքով եւ նւիրապետական կարգով, հիմնուած են նաեւ աւանդութեան վէմին վրայ: Աւանդութիւններ կան, որոնք երբեմն աւելի զօրաւոր ու անշարժելի են, քան կանոններն ու օրէնքներն իսկ. աւանդութիւններ կան, որոնք կանոն կը քանդեն եւ կան, որ կանոն կը շինեն: Ծանօթ եւ տարրական նշարտութիւններ են սրանք:

Պօզոս Առաքեալը Տիմոթէոսին պատուիրում է «պիկդ պահել աւանդութիւնը» (Բ Տիմթ. Ա 12-15, Ա Կորնթ. ԺԱ 2, Բ Թե-սաղ. Բ 14-15):

Տերտուլիանոսը, եկեղեցական նշանաւոր հայրը, Բ Դար, վկայում է. «Նքէ որեւէ եկեղեցական մի կանոն գրաւոր կերպով չի որոշուած, բայց ամէն տեղ պահուում է, նշանակում է, որ այդ հաստատուած է սովորութեամբ, հիմնուած աւանդութեան վրայ: Նքէ մէկը ասի որ, աւանդութեան համար էլ պէտք է որեւէ մի գրաւոր վկայութիւն, այն ժամանակ մենք մեր կողմից ցոյց կը տանք բազում կարգեր, որոնք առանց որեւէ գրութեան, լոկ աւանդութեան հեղինակութեան շնորհիւ եւ սովորութեան ուժով պահպանուած են»:

«Նքէ առաքեալները -գրում է Ս. Իրենիոս Հայրապետը, Բ Դար-, բոլոր շինէին մեզ գրութիւններ, միքէ՞ պիտի չհետեւէինք այն աւանդութեան կարգին, որ տրուած է նրանց, որոնց յանձնուած են եկեղեցիները»:

Ս. Բարսեղ գրել է այս մասին. «Նքէ սկսեմք մերժել անգիր սովորութիւնները, իբրեւ մեծ ուժ չունեցող, այն ժամանակ աննկատելի կերպով կը վնասենք Աւետարանին, նրա գլխաւոր մասերի մէջ»:

«Եկեղեցական պատմութիւնը երբ աւելի հաստատուն փաստեր չգտներ, կը գոհանայ առաւելագոյն հաւանականութեան փաստերով, աւանդութեանց վրայ հիմնուած պատմաաբանութիւններով եւ շարունակութեամբ հաստատուած եղելութիւններով» (Օրմանեան, «Հայոց Եկեղեցի», Կ. Պոլիս, 1912, էջ 19):

Տիրան Սրբազան աւանդութիւն հասկացողութիւնը ժըխտելով, չի նկատում սակայն, թէ լուրջ հակաաւթեան մէջ է գրեւորում իր իսկ յայտնած մէկ ուրիշ տեսութեան հետ: Այսպէս, հեղինակը զարգացնում է այն միտքը, թէ «որեւէ ընկերութեան յօրհնուածքին մէջ յառաջ եկած փոփոխութիւնները սկիզբ չեն առնէր իշխանութեան բարձր աթոռներուն վրայ բազմած օրէնսդիրներու նախաձեռնութեամբ: Այդ ընթացքով չէ որ տեղի կ'ունենայ եզափոխութիւնը մարդկային հաստատութիւններուն մէջ: Փոփոխութիւնները յառաջ կու գան իբրեւ հետեւանք այն ճնշումներուն, որ կ'ըլլան վարէն՝ արմատի ուժերէն, այսինքն ժողովուրդէն, որ իր ամենօրեայ ապրումներուն մէջ փորձառութեամբ կը զգայ օրէնքներուն եւ սովորութիւններուն անբաւականութիւնը: Ասիկա է այն ժայռը որուն վրայ հիմնուած է ժողովրդավարութեան սկզբունքը» (էջ 16): Տիրան Սրբազանի այս յեղափոխական տե-

սուքեան մեծ առարկութիւն չունեմ, եթէ խօսքը վերաբերի «մարդկային հաստատութիւններուն», ինչպէս ինք էլ նշում է արդէն: Սակայն, արդեօք ուղի՞ղ է եւ ընդունելի՞ց նման ընկերա-գաղափար տեսութիւն ամբողջապէս կիրառելի համարել հոգեւոր եկեղեցական կեանքի եւ կանոնական դրութեան:

Եւ միւս կողմից, ի՞նչ են աւանդութիւնները եւ պատմականօրէն նուիրագործուած դրութիւնները, եթէ ոչ՝ հաստատուած եւ թանձրացած մտայնութիւններ, վիճակներ, յարաբերութիւններ, իբրեւ հետեւեալ այն ձգտումներին, այն երևոյթներին, որ «կ'ըլլան վարէն՝ արմատի ուժերէն, այսինքն ժողովուրդէն, որ իր ամենօրեայ ապրումներուն մէջ փորձառութեամբ կը զգայ տիրող օրէնքներու եւ սովորութիւններու անբաւականութիւնը»: Ճիշդ այսպէս կազմաւորուած ու կեանքի են կոչուած նաեւ աւանդութիւնները, որոնք երբեք «սկիզբ չեն առներ իշխանութեան բարձր արժաններուն վրայ բազմած օրէնսդիրներու նախաձեռնութեամբ», ինչպէս պիտի ասէր Տիրամ Սրբազանը: Ահա հակասութիւնը, որի մէջ է գտնուում հեղինակը, որի բմբռնումը *աւանդութիւն* հասկացողութեան մասին, յատկապէս կրօնական-եկեղեցական տեսակետից, սխալ է եւ հակագիտական:

Եւ Գրեյլիի հեղինակը ա՛յլ միշդ է ներկայացնում նաեւ Գէորգ Զ Կաթողիկոսի օրով տեղի ունեցած շեղումները կուսակցութեան կանոնից, նկատելով դրանք նախընթացներ: Ճիշդ է, թէ նման մէկ-երկու շեղումներ տեղի են ունեցել խանգուցեալ Կաթողիկոսի օրօք, սակայն, դրանք հայրապետական բացառիկ սնօքիմութեամբ համարուել են ներուած խախտումներ՝ «ոչ յօրինակ ալյոց» բանաձեւով: Այդպէս տնօրինեց նաեւ Տ. Վազգէն Ա Կաթողիկոսը, Նիւն-ձըրգիի կանոնական խախտումի պարագային:

«Ոչ յօրինակ ալյոց» բանաձեւը կարելի չէ նախընթաց նկատել կամ կանոնից շեղուելու արտօնութիւն. *այլ եղածը ներքեւ՝ Հաստատել կանոնը*:

Զ. Տիրամ Արքեպիսկոպոսը իրեն յատուկ տրամաբանութեամբ հասնում է մինչեւ այնտեղ, որ ժխտում է Հայոց ընդհանրական Հայրապետի իշխանութեան նկարագիրն ու սահմանները: Բոլորովին անհիմն կերպով ասում է՝ «Կաթողիկոսը նախ եւ առաջ եպիսկոպոս է երեսանի թեմին» (էջ 17) եւ յանգում է այն եզրակացութեան, թէ Նրա իշխանութիւնն ու իրաւասութիւնները իբր թէ հաւասարապէս չեն տարածուում բոլոր թեմերի վրայ, այլ իւրաքանչիւրի նկատմամբ յատուկ իրաւասութիւններով:

Տիրամ Սրբազանն ասում է. «Պէտք է գիտնալ որ էջմիածնի Կաթողիկոսը որոշապէս երեք տարբեր հանգամանքներ կամ պաշտօններ ունի, իւրաքանչիւրն իր յատուկ իրաւասութիւններով» (էջ 17) եւ շարունակում է իր խօսքը այնպիսի ձեւով, որ միամիտ ընթերցողը կարող է տպաւորուել, թէ էջմիածնում մի կաթողիկոս կայ, որ նախ եւ առաջ առաջնորդն է «Նրեւանի թեմի»—ն լրիւ իրաւասութիւններով. յետոյ Նա ներքին թեմերի վրայ որոշ յանդիման իրաւասութիւններ ունի, եւ յետոյ է, որ «էջմիածնի Գահակալը», «Պատրիարք-Կաթողիկոս է Ամենայն Հայոց բովանդակ աշխարհի» (էջ 18):

Պատմական իրողութիւնն այն է պարզապէս, թէ եկեղեցիները ի սկզբանէ իրենց այսօրուան կազմակերպչական մուկրապետական կառոյցը չեն ունեցել:

Եղի են նախ եկեղեցական համայնքներ, տեսուչներով (եպիսկոպոս) ու երէցներով: Ապա ժամանակի ընթացքում եկեղեցիները կազմաւորուել եւ համախմբուել են որոշ եպիսկոպոսների շուրջ (յատկապէս մայրաքաղաքի եպիսկոպոսների), դրանք համարելով կենտրոն տուեալ մի երկրի կամ մի երկրամասի վրայ գործող եպիսկոպոսական շրջանների (թեմերի): Այդ եպիսկոպոսները ապա կոչուել են նախ միտրապոլիտներ (մայրաքաղաքների եպիսկոպոսներ) եւ ապա պատրիարքներ: Մօտաւորապէս այսպէս յառաջ են եկել ու պատմականօրէն զարգացել բոլոր այսօրուան պատրիարքական, կաթողիկոսական Աթոռները:

Յայտնի է, թէ Գ եւ Դ Դարերում ըմբռնումը՝ եպիսկոպոսի, միտրապոլիտի եւ պատրիարքի եւ նրանց եկեղեցական պաշտօնների եւ երկրամասային (տերիտորիալ) իրաւասութեանց սահմանների մասին, չի համապատասխանում հետագայ դարերի վերջնական ըմբռնումին եւ իրավիճակին:

Դ Դարի սկիզբներին, երբ տեղի ունեցաւ Անկիւրիայի տեղական բնոյթ կրող ժողովը, տակաւին վերջնապէս չէր կազմաւորուել եկեղեցու մուկրապետական կարգը, չէին բիրեղացել՝ եպիսկոպոս, միտրապոլիտ, պատրիարք հասկացողութիւնները եւ նրանց իրաւասութիւնների բնոյթն ու սահմանները:

Ե Դարի կէսերին միայն, Քաղկեդոնի ժողովի նախօրեակին, իբրեւ հետեւանք պատմական երկար զարգացումների և ներքին պայքարների, վերջնապէս կազմաւորուել եւ հաստատուել են մուկրապետական դրօշիւները, համապատասխան իրաւասութիւններով եւ իշխանութեան սահմաններով, կանոնական հեղինակութեամբ:

Այսպէս, Ե Դարում է որ Հռոմի, Անտիոքի եւ Ազեֆսանդրիայի եպիսկոպոսները կոչուում են եւ իրաւապէս ճանաչուում իբրեւ միտրապոլիտներ (ապա պատրիարքներ) եւ աւելի ուշ Կ. Պոլսի եւ Երուսաղէմի եպիսկոպոսները, որպէս միտրապոլիտներ (ապա պատրիարքներ): Նոյնիսկ դրանից յետոյ էլ վէները շարունակուում են մինչև Ե Դար: Միայն Զ Դարում է որ Կ. Պոլսի պատրիարքը ստանում է տիեզերական պատրիարքի տիտղոսը:

Որով Հռոմէական-Կաթոլիկ եկեղեցու գլուխը՝ Պապը, ի սկզբանէ եղել է Հռոմի եպիսկոպոս, եւ մինչեւ այսօր էլ պահում է այդ տիտղոսը իբրեւ պատմական իր տիտղոսներից մէկը: Ռուսաց Օրթոդոքս եկեղեցու պատրիարքը կոչուում է «Մոսկուայի եւ համայն Ռուսիայի Պատրիարք»: Վրաց Կաթողիկոսը համարուում է նաեւ Սուխումիի թեմի միտրապոլիտ: Ռուսինիայի պատրիարքը՝ նաեւ «Բուխարեստի արքեպիսկոպոս» եւ այլն: *Բայց այս տիտղոսները ոչ մէկ չափով չեն նուազեցնում յիշեալ գահակալների հայրապետական ամբողջական, լիբրաւ իշխանութիւնը եւ եկեղեցիների վրայ:*

Հետեւաբար, նոյնիսկ եթէ Ամենայն Հայոց Հայրապետը լինէր նաեւ «Երեսանի եպիսկոպոս», այդ պարագան որեւէ հիմք

չէր ներկայացնում Տիրան Սրբազանի պաշտպանած տեսակետին ի նպաստ: Սակայն Հայ Եկեղեցու եւ Հայոց Կաթողիկոսի պարագային հիմնովին սխալ են Տիրան Արքեպիսկոպոսի ասածները: Նախ պէտք է հաստատել, թէ Հայ Եկեղեցու եւ նրա մուկրապետութեան կազմաւորման շրջանում եւ հետագայ բազում դարերի ընթացքում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը երբեք չի եղել և չի համարուել «Երեւանի եպիսկոպոս»: Տիրան Արքեպիսկոպոսը չի կարող ցոյց տալ որեւէ կանոն, որեւէ յիշատակութիւն, որեւէ արձանագրութիւն, որեւէ պատմական փաստաթուղթ, որտեղ Հայոց Հայրապետը կոչուէր կամ յիշատակուէր որպէս «Երեւանի եպիսկոպոս»: Եւ չէր էլ կարող այդ լինել. որովհետեւ հնում Երեւանը Հայաստանի մայրաքաղաք չի եղել երբեք: Եթէ Հայոց Հայրապետը Հայաստանի մայրաքաղաքի անունով պիտի յիշուէր (ինչպէս Հռոմի, Կ. Պոլսի եպիսկոպոսները), այդ պարագայում Նա պէտք է յիշուած լինէր Վաղարշապատի կամ Դուինի կամ Անիի եպիսկոպոս: Բայց այդ էլ չի եղել երբեք: Ամենայն Հայոց Հայրապետը ի սկզբանէ եղել է «Հայոց Մեծայ», այսինքն Մեծ Հայաստանի եպիսկոպոս: Մեր բոլոր եկեղեցիները իրենց յայտնաւորման հետքերն ունենալով ի վեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը կոչում են *Մեծ Հայաստանի եպիսկոպոս* կամ *հայրապետ*:

Հայ Եկեղեցին Դ Դարից իսկ ճանաչուեց ինքնազուրի եկեղեցի, իր միակ Գլուխը ունենալով էջմիածնի Աթոռի եպիսկոպոսապետը կամ Հայրապետը:

Օրմանեան Սրբազանը վկայում է. «Ս. Լուսաւորչի մահուրնէ 32 տարի ետք, Մեծն Ներսէսի օրով, 364-ին որոշեցին Հայքէ Հայոց Աթոռն ինքնազուրի եւ անկախ Հայրապետութիւն է եւ ուրիշ պատրիարքութեան ենթակայ չէ. Հայ եպիսկոպոսաց գլուխը պարտաւոր չէ Կեսարիոյ Աթոռէն ձեռնադրութիւն առնուլ եւ նախընթաց սովորութիւնը խափանուեցաւ բոլորովին» (Օրմանեան, «Աթոռ Հայաստանեայց», էջ 31):

Դ Դարի եկեղեցական պատմիչ Եւսեբիոս Կեսարացին վրկայում է՝ «Այնուսիկ որք էին ի Հայաստան, որոց յայնժամ *հայրապոս էր Մեհրուժան*»: Նոյնը վկայում է նաեւ Օրմանեանը Մեհրուժանի մասին, իբրեւ *Հայոց Մեծայ*, այսինքն Մեծ Հայաստանի եպիսկոպոս:

Նիկիայի (325 թուին) ժողովին Ս. Արիստակէսը մասնակցել է որպէս ներկայացուցիչ Հայաստանի եկեղեցու: Եւ ժողովին ներկայ եպիսկոպոսների շարքում նա յիշատակում է «Արիստակէս Հայոց» («Վանոնագիրք Հայոց», էջ 133-141):

Այնուհետեւ, յաջորդ դարերում Հայոց հայրապետները «կամօքն Աստուծոյ եւ ընտրութեամբ համօրէն ազգիս Հայոց կոչեցեալ են յԱյրարատեանս Աթոռ կաթողիկոսութեան Ամենայն Հայոց» (Կանոն ձեռնադրութեան Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Վաղարշապատ, 1876, էջ 4):

Այստեղ «յԱյրարատեանս Աթոռ կաթողիկոսութեան Ամենայն Հայոց»-ը պարզ է, թէ որեւէ կապ չունի «թեմ» գաղափարի հետ, այլ երկրի, Արարատեան աշխարհի: Միջանկեալ ասեմք, թէ՛ «Երեւանի թեմ» անունը գործածուեց 1836-ից յետոյ, իբրեւ

հետեւանք ցարական իշխանութեան (Պոլոժենիայով) հաստատած վարչական բաժանումների, ըստ որում Արեւելեան Հայաստանը կոչուեց «Երեւանի եւ Նախիջեւանի նահանգ» Ռուսաստանի, եւ «Երեւանի թեմ»-ը համարուեց «Հայրապետական թեմ»:

Այսօր էլ պահում ենք «Հայրապետական թեմ» պատուաւոր տիտղոսը ի պատիւ մեր հայրենիքի նոր մայրաքաղաքի: Սակայն այս բոլորը ոչ մի կապ չունեն Հայոց Հայրապետի կանոնական-պատմական տիտղոսի եւ նրա իրաւասութեանց ընդթի եւ սահմանների հետ:

Է. Բոլորովին անհիմն է Տիրան Արքեպիսկոպոսի նորելուկ տեսութիւնը «Էջմիածնի կաթողիկոս»-ի մի տեսակ երկրորդ աստիճանի իրաւասութիւնների մասին, որոնք ըստ հեղինակի վերապահուած են Արարատեան թեմից դուրս, հորհրդային Միութեան մէջ գործող միւս թեմերին: Այսինքն, ըստ Տիրան Սրբազանի՝ Վրաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի Հայոց թեմերը մի երկրորդ դաս են կազմում «Էջմիածնի կաթողիկոս»-ի իշխանութեան եւ իրաւասութիւնների տեսակէտից, իսկ արտասահմանի թեմերը՝ մի երրորդ դաս:

Ուղիղ դատազութիւններ չեն սրանք եւ վնասաբեր մեր Եկեղեցու միութեան: Տիրան Արքեպիսկոպոսը ակամայից հանդիսանում է Հայոց ընդհանրական Հայրապետութեան հեղինակութիւնը տկարացնող, կենտրոնախոյս ոգու սերմնացան:

Բազմադարեան իրողութիւնն այն է, թէ Ս. Գրիգոր Լուսաւորչի օրերից գոնէ Հայ Եկեղեցին եղել է եւ մնացել՝ մի նը-իրապետական ժամին եւ մի ժողովուրդ, իր գլուխը ունենալով մի Հայրապետ, մի Եպիսկոպոսապետ, որ ժ Դարից ստացել է Կաթողիկոս Ամենայն Հայոց տիտղոսը եւ այդպէս էլ մուրազործուել, պահելով նաեւ հին տիտղոսները, իբրեւ պատմական յիշատակներ:

Եւ երբ մի որեւէ այլ եպիսկոպոս փորձել է իր եպիսկոպոսական իշխանութեամբ չենթարկուել Եպիսկոպոսապետին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին, նա կարգի է հրաւիրուել կամ պատժուել, իսկ կաթողիկոսի իշխանութեան հակադրողները նկատուել են հակաթառներ:

Յիշենք մի քանի հին կանոններ կաթողիկոսի եւ եպիսկոպոսի իշխանութեան մասին:

«Կաթողիկոսը դէտ են գլուխ եւ օրէնսդիր լինի ժողովուրդին. նրա խօսքը վերջնական լինի վիճելի բոլոր հարցերում, ինչպէս Մովսէսինը և Ահարոնինը» («Կանոնագիրք», Զ կանոն, էջ 31-32, Դ կանոն, էջ 119, Զ կանոն, էջ 121, նաև՝ Դ կանոն, էջ 159):

«Թեմի եպիսկոպոսը պիտի ղեկավարի իր վիճակի եւ իրեն հնթակայ տեղերը: Իսկ մնացած խնդիրներում ոչինչ պէտք չէ անի առանց Գլխաւոր Եպիսկոպոսի» («Կանոնագիրք», ԼԲ կանոն, էջ 83-84, Թ կանոն, էջ 210):

Հայ Եկեղեցու բոլոր թեմերում անխտիր, կաթողիկոսական իշխանութեան եւ իրաւասութեան տեսակէտից, չկայ ոչ մի տարբերութիւն, ոչ մի աստիճանաւորում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը լիակատար եւ ամբողջական իշխանութիւն ունի թէ՛

Արարատեան Թեմի, Թէ՛ Սորհրդային Միութեան Թեմերի եւ Թէ՛ արտասահմանի Թեմերի վրայ, հաւասարապէս այժմ եւ միշտ:

Ոչ ոք թող չշփոթուի, ոչ ոք թող չթափառի, ոչ ոք թող չսայթափի:

Ը. Կարևոր մի պարագայ ևս, որը Տիրան Արքեպիսկոպոսին դնում է մի այլ հակասութեան մէջ: Սրբազանը կուսակրօնութեան ուխտի եւ մի եպիսկոպոսի կողմից այդ ուխտը փակելու իրաւատւութեան իր տեսութեանց մասին խօսելուց յետոյ, շարունակում է.

«Բաց աստի միշտ պէտք է յիշենք որ քրիստոնեայ եկեղեցիներու շարքին կողիացած ազանդ մը չենք մենք: Մենք կը պատկանինք Արեւելեան ուղղափառ եկեղեցիներու ընտանիքին: ... Հետեւաբար բացարձակ անհրաժեշտութիւն է որ շարունակ նայինք մեր շուրջ եւ տեսնենք թէ բարեշրջութիւնը ինչ ընթացք կ'առնէ մեր բոյր եկեղեցիներու մէջ», ... «Թէպէտ չունինք այսօր պաշտօնական մեքենականութիւնը որ համակարգէ մեր եւ անոնց ջանքերը, այնուհանդերձ պէտք է դիտենք եւ սորվինք անոնց փորձառութենէն եւ զգոյշ պէտք է ըլլանք տիրող օրինաչափութիւններէն չհետանալու» եւ այլն (էջ 26 եւ 27):

Այստեղ, այո՛, ողջմտութիւնն է խօսողը: Սակայն չի՞ նշկատում Տիրան Սրբազանը հակասութիւնը, որի մէջ է գտնուում: Այս տողերը ոչ միայն հակասում են Սրբազանի շարադրած տեսութեանց, այլ նոյնիսկ մի տեսակ մեղադրանք են հանդիսանում նրանց դէմ:

Իրօք, արգար է եւ բացարձակ անհրաժեշտութիւն, որ «յիշենք թէ քրիստոնեայ եկեղեցիներու շարքին կողիացած ազանդ մը չենք», յիշենք թէ «կը պատկանինք Արեւելեան ուղղափառ եկեղեցիներու ընտանիքին», յիշենք «թէ պէտք է նայինք մեր շուրջ եւ տեսնենք թէ ինչ ընթացք կ'առնէ բարեշրջութիւնը մեր բոյր եկեղեցիներուն մէջ»:

Մեր բոյր եկեղեցիներից ո՞ր մէկը Անկիւրիայի ժողովի կանոններն է ընդունում եւ մեկնաբանում այնպէս, ինչպէս Տիրան Արքեպիսկոպոսը: Մեր բոյր եկեղեցիներից ո՞ր մէկը երբեւիցէ արտօնած է կամ արտօնում է, որ մի եպիսկոպոս իր իշխանութեամբ փակի կուսակրօնութեան ուխտը եւ կուսակրօն փառանքի դարձնի ամուսնացեալ փառանայ, եւ այդ վաւերական եւ ընդունելի նկատուի:

Տիրան Սրբազանը չի կարող ոչ իսկ մի օրինակ ցոյց տալ նուիրապետական կարգ ունեցած մեր քոյր եկեղեցիների կեանքից, որոնք ցարգ ամուր պահպանում են կուսակրօնութեան կարգի աւանդական դրութիւնը:

Վերջացնելուց առաջ, կրկնում ենք, մեր սոյն գրութիւնը չի վերաբերում Նիու-ձըրքիի եկեղեցում կատարուած խախտումին, այլ միմիայն Տիրան Արքեպիսկոպոսի յիշեալ հրատարակութեան ոգուն, նրա փաստարկման կերպին ու եզրակացութեանց, որոնք համարում ենք սխալ եւ մերժելի, եւ չենք էլ ցանկանում, որ Տիրան Արքեպիսկոպոսի այս գրքոյկի առիթով վեճերը շարունակուեն:

Նայմալէս այս գրութիւնը մեր Եկեղեցու կուսակրօնութեան դրութեան վերաբերեալ դիրք մշտնադէպ բնոյթ չունի: Այդ առանձին հարց է եւ ապագայի խնդիր է: Աւանդական կարգը վերաբնութեան ենթարկելը եւ, ի հարկին, որոշ բարեփոխումներ ընդունելը, վերաբերում է Եկեղեցու օրինաւոր եւ պաշտօնական իշխանութեան՝ եպիսկոպոսաց ժողովին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ ազգային-եկեղեցական ժողովին:

Մենք մի փոքրիկ Եկեղեցի ենք, աշխարհի վրայ ցիր ցամ մեր ժողովրդի հետ միասին, մի Եկեղեցի՝ տկար իր ներկայ հոգեւորականների համաբաժնով եւ որակով, մի Եկեղեցի, որը գտնուում է դժուարութիւնների եւ ներքին պառակտումների վրտանգի առաջ: Իրաց այս կացութեանց մէջ, արդեօք այժմէականում է գրադուել անկիրական կանոններով:

Բարեբախտաբար, ունենք հաւատաւոր, ողջամիտ եւ աւանդապահ, այո, աւանդապահ մի ժողովուրդ, եւ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, որ ճշմարիտ ու ապահով ժայռն է, որի վրայ կանգնած է մեր Սուրբ Եկեղեցին իր նուիրապետական կարգով եւ Ամենայն Հայոց Հայրապետութեամբ:

Հայ ժողովուրդը սպասում է իր հոգեւոր սպասաւորներից կենդանի Աւետարան, շինարար գործ, ներքին միութեան ամրապնդում, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հեղինակութեան գորացում:

Ինչքան յուզիչ է եւ այժմէական հնչում, եպիսկոպոսաց ժողովում մեր Հայրապետի բացման խօսքի վերջաբանը.

«Մեր լուսաբնակ նախնիք, բազում դարերու հերոսական մաքառումներով եւ բազում սերունդներու ստեղծարար ճիգերով, մեզի թողուցին նուիրական ժառանգութիւն մը, գերագոյն սրբութիւն մը, տառնվեց դարեր շարունակ պաշտպանուած ու պահպանուած՝ ամբողջ, անբաժան ու անաղարտ: Այդ մեր Սուրբ Եկեղեցին է՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, հաստատուած Միաձնի Իման տեղին վրայ, սուրբ գրական Արարատի ըստորոտին, որ եղաւ ու մնաց, Ս. Գրիգոր Լուսաւորչի երանելի օրերէն մինչեւ այսօր՝ գերագոյն կեդրոնը մեր եկեղեցւոյ, գերագոյն կեդրոնը Հայոց կրօնական եւ ազգային ոգեկանութեան, գերագոյն երաշխիքը Հայ քրիստոնէական հաւատքի վաւերականութեան, Հայ Եկեղեցւոյ միութեան եւ Հայ հաւատացեալ ժողովուրդի ազգային միասնութեան:

Արդ, մենք այսօրուաններս, պիտի չկարողանա՞նք զայն պաշտպանել ու պահպանել, այնպէս, ինչպէս մեր նախնիք զայն յանձնեցին մեզի:

Մենք կը մնանք լաւատես: Այո, կրնանք երբեմն տկարանալ, երբեմն տարակուսիլ, երբեմն շփոթիլ, սակայն վստահ ենք թէ մենք բոլոր, մէկ ոգեկան մարմին կազմած, իրաւ հաւատքով զօրացած եւ Ս. Էջմիածնի հաղարամեայ ջարերու խորհուրդով ներշնչուած, կարող պիտի ըլլանք խորհիլ, ծրագրել ու գործել ուղիղ ճանապարհով, պտղաւոր առդիւնքներով»:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա՛լ»:

Ս. ԳՐԱԿԱՆ

Գ Ե Թ Ա Ն Ո Ս Ա Յ Ա Ռ Ա Ք Ե Ա Լ Ը

Գ Լ Ո Ի Խ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

Պօղոս Երուսաղէմէն կը մեկնէր Տարսուսն, որ Կիւթնոսի ջուրերու ափին եւ Տարսուսի շուքին բազմած կը յօրանար: Եօթը տարիներ սահեր անցեր էին այն օրէն ի վեր, երբ Տաւարին մէջ իրեն երեւցաւ Տէրը, կըրակի եւ չոյսի ոտայնի մը մէջ, իր աւանջներուն հնչեցնելով երկնքէն կաթող ձայնը. «Հեռացիր Երուսաղէմէն, որովհետեւ հեթանոսներուն բարոյելաւ պիտի զըրկեմ Քրիստը: Եթէ տարիներէ ի վեր ամէն օր Պօղոսը կ'ապաստար պատգամի իրաւորածման:

Իր այս առաքելութեանը պարաստուելու համար, երբեք ճակատագրուած կ'զգար ինքզինքը, հետեւեցաւ Տարսոսի նշանաւոր ուսումնաբանի դիշերային դասերուն, անդոսնելով Հրէից աւանդութիւնը եւ Ռաբինութիւնը պատուէրները: Կարճ ժամանակաշրջանի մը մէջ ուշադրաւ անձնաւորութիւն մըն էր արդէն դպրոցէն ներս: Իր ուսուցիչները, յայտնի խմատասերներ Աթէնքէն եւ Ադեֆսանդրիայէն, կը հիանային իր մտքի ճկունութեան եւ թափանցողութեան: Հոս բարեկամացաւ Տիտոս անունով Անտիոքացի Յոյնի մը, որ Տարսոս եկած էր հետեւելու ստոյիկեան խմատասերութեան: Այս բարեկամութիւնը պիտի փոխէր Տիտոսի մասածումներուն առանցքը:

Տիտոսի մտերմութիւնը իրական սփոփանք մը եղաւ Պօղոսին համար, որ իր հայրենի Քաղաքին մէջ ինքզինքը տարւելով զգար: Դիտէր թէ այս աղուն դարձը փորձաքարն ու սկիզբն էր հեթանոս աշխարհի դարձին եւ Մեսիայի ընդունելութեան: Կաթիլ մը

ովհիանոսէն, սակայն այդ կաթիլին մէջ կը բովանդակուէր ի զօրութեան եղող օրէնքը օվհիանոսի ջուրերուն: Տիտոսը իր հողեւոր առաջին զաւակն էր որ իր միջոցով կ'առաջնորդուէր Մեսիայի փարախը:

Իրիկուն մը երբ Տարսուսի շուքը կ'երկարէր Կիւթնոսի ջուրերուն վրայ, Պօղոս խօսեցաւ իր երկրորդ բարեկամին Աւագ Ուրբաթ օրուան անմոռանալի իրադարձութիւններէն: Յուդիչ պատկերացումներով նկարագրեց Աստուծոյ ընտրելի մահուան ժամերը, երբ հռովմէական զինուորներու առաջնորդութեամբ Գողգոթա կ'առաջնորդուէր, ծառ խաչի ծանրութեան ներքեւ: Յետոյ պատմեց Տիրոջ Մահուան, Թաղման եւ Յարութեան մասին, եւ ից աշակերտներու հետ անցուցած օրերէն, Յարութենէն վերջ: Այդ խօսեցաւ իր դարձին շուրջ, Դասական ժամերու ծամրուն վրայ, երբ Յարուցեալը հողէ անօթի մը պէս կը փլուէր դէնքը, այդ կտորներով վերադառնալիս յօրինելու համար նոր Պօղոսը: «Այժմ ես իր ծառան եմ եւ կ'ապաստեմ ինձի խոտաւորուած պատգամին, սկսելու նախնական գործը որուն ճակատագրուած եմ»:

— Ես ալ կ'ուզեմ լուծառաւ ըլլալ, ըսաւ Տիտոսը, հրամայէ եւ պիտի հնազանդեմ»:

— Այժմ ծառայ, այլ սերելի եղբայր մը Յիսուսով շահուած, յարեց Պօղոս, որկեւ լով իր երկրորդ բարեկամը:

Պօղոս Տարսոս պալէն ի վեր իր եւ Հըրոսակ համայնքին միջեւ պաղովութիւն մը կար:

Հեթանոսներու հետ իր յարաբերութիւնները հաշտ աչքով չէին դիտուեր սինակոկի պատասխանատուներէն: Յետոյ հակառակ իր ծնողաց փափաքին եւ հրէական օրէնքի պարտադրանքներուն, Պօղոսը հեռու կը մնար ամուսնութեան դադափարէն: Հայրը մեռած էր, իսկ մայրը որ այնքան մեծ յոյսեր կապեր էր դաւկին, երբ տարիներ առաջ պիտի երուսաղէմ կը զրկէր ուսանելու, բնկուած էր իր ամենէն քաղցր սիրոյն եւ ապականութիւններուն մէջ: Օրերով կույար տղու գլխուն եկած այս դժբախտութեանը համար:

Իրիկուն մը, հոգէ ճրագի տմոյն յոյսին ներքեւ եւ մաղաղաթնեքու դէպի մը առջեւ նստած կ'աշխատէր Պօղոսը: Սենեակի միւս անկիւնը մայրը ճախարակին առջեւ թել կը պատրաստէր: Մօր եւ տղուն շուքերը դիմացի ճերմակ պատին վրայ հսկայական համեմատութիւններով դիքար կը խաչածեւէին: Սենեակ մը ուր չկայ հոգիներու քողացրի հաղորդակցութիւնը, աւելի լալին է քան մեր աշխարհը: Իրերը հոն օտար են եւ անդրաշարժային:

— Իս եւ ողորմած հայրը կ'սպասէինք որ Սուրբ երկրէն վերադառնալիք իրբի Իսրայէլի ռաբի մը, չըջապատուած աշակերտներով, սակայն գուն եկար մինակ ու թշուառ: Տունէն մեկնեցար զալար ու ծաղկուն ծառի մը պէս, իսկ ինծի վերադարձար ծառէն անջատուած չոր ճիւղի մը նման: Դուն մեր սոհմին հպարտութիւնը եւ ընտանիքին յոյսն էլի, իսկ այժմ մտարուած Իսրայէլի համայնքէն, հեթանոսներու բնկերութեան մաս կը կաղմես:

Պօղոս լուսթևամի կուլ տուաւ մօր կըլտամբանքները: Կ'զար խեղճ կնոջ ցաւը, քայլ թն: Կրնար ընել: Իր մտքին մէջ հրէ-չեցին Տիրոջը լսողերը, «Ի՞նչ են իմ մայրս եւ եղբայրներս»: Դիմացինը սակայն իր ժայռն էր, իրեն միւս եւ արիւն տուող հաբաբար:

— Մայր, դուն լաւ դիտես պատճառը այս բոյրին: Ես չէի Դամասկոսի ճամբան ընտրողը, Տէրը դրաւ զիս այդ ճամբուն

մէջ, Թնչպէս կրնամ լքել այն ուղին՝ որ Տիրոջ կողմէն իմ ոտքերուս կը բացուի:

— Մոռցիր, տղաս, մոռցիր Դամասկոսի կոյմարը, չար ուղի մը կողմէն նիւթուած: Լերթնցիր այդ խօլ ցնորքէն եւ վերադարձիր դիտակցութեանդ յիշող դնա եւ դիր ճապատդ սինակոկի շնորհ եւ թողութիւն խնդրէ մեղքերուդ համար:

Պօղոս յուզումով նայեցաւ մօրը արցունք-բէն պլտորած աչքերուն խորը, որոնք հորը ինկած կանթեղներու նման հաղիւ կը պըլպլային, որովհետեւ անոնց յատակը հրդեհ մը մարած էր: Երեսներուն վրայ դարուկ կար, իսկ այտոսկորներուն՝ չարագուշակ չորութիւն մը, մտհոտան նայող: «Որդիական սէրս եւ յարգանքս քեզի, մայր, սակայն իմ կեանքս այլեւ ինծի չի պատկանիր, այլ Անոր՝ որ պիտի գործին կանչեց: Քու մէջէդ սահմանուեցայ այդ դործին, քու մարմինէդ շինուած է պատրոյդը որ իր շունչէն կայծ առաւ: Պիտի աղբբեմ Ամենակալին որ բանայ քու աչքերդ երկնային յոյսին, անոյ տեսնելու համար թէ ինձմով ինչ անօթ ես պատրաստեք, որպէսզի քու վիշտիդ ուրախութեան վերածուին:

Մայրը չպատասխանեց, Պօղոս տեսաւ որ քն կույար անձայն եւ իր ուսերը կը ցնցուէին յուզումէն ու վիշտէն:

Առտուն երբ դուրս ելաւ տունէն, փոխանակ սովորականին պէս իր գործատեղին երթալու, ուղղուեցաւ դէպի նաւահանդիսար, Երուսաղէմէն եւ Անտիօքէն եկող ճամբորդներէն լուրեր առնելու: Հոգին յեցուն էր ծանրութեամբ, սակայն քաղցր զգացում էր թեւ կը բանար իր ներքը: Ամէն ծառ ու ծաղիկ իրենց ծաղկումի ժամանակը ունին, կը մասնէր Պօղոս, փտահ էր թէ իր ժամանակն ալ պիտի գար: Կ'զար թէ դժուար հասկնալի էր խորհուրդի լեզուն, սակայն շատ անգամ մօթ երեւցած բաները ամենէն պայծառ դէմքը կը կրէին:

Իրիկուն մը երբ տուն վերադարձաւ, նշմարեց մէկը որ անկիւնը նստած իրեն կը նայէր, կարծես տեսիլքի մը մէջէն: Թեւեւ եօթր տարիներ անցեր էին երկու բարեկամ

ներու բաժանումէն ի վեր, սակայն Բաբ-Նարասը օտարականի մը պէս կ'երեւար: Միտիք Հրապոյր մը կը շողար իր դէմքին՝ իրրեւ նախերկանքը աստուածային փառքին: Միշտ սանտրուած եւ զողորմ օրութիւն ուսած էր անտառամոյն թուի գանդուածով մը: Մազերը շէին օծուած ու հարթարուած, եւ անկնամ ու խիտ գետակներով կը կախուէին իր ուսերուն: Միայն աչքերը կը մշտային նոյն, վճիռ ու քաղցր, որոնց մէջ կը խորանար կեանքի ճշմարիտ իմաստն ու նպատակը:

Տարբեր էր նոյնպէս Բաբ-Նարասին կըրած տպաւորութիւնը իր տղայութեան բարեկամէն, որ իր առջեւ կեցած էր, յանկարծ ծերացած երիտասարդի մը պէս, զարնուած կարծես աշխարհի ցաւի խորշակէն: Թափած էին մազերը, աչքերուն մէջ փոխան երբեմնի կրակին, սպասումի մը պատրանքը կը ծփար:

Երկար առնէ երկու բարեկամները կեցած իրարու նայեցան անխօս, յետոյ յանկարծ իրարու գրկի նետուեցան:

— Եղբայր իմ Պողոս:

— Եղբայր իմ Բաբ-Նարաս:

— Եկած եմ քեզի Հետո Անտիոք տանելու, սիրելիք իմ Պողոս: Երուսաղէմի մեր եղբայրները ինծի հոն զրկեցին, կաթնահերպետ եւ զօրացնելու տեղույն քրիստոնէայ Համայնքը, որ օր աւուր կ'աճէ եւ կը բազմանայ: Այդ մեծ գործին միակ ատակ մարդը դուն ես, ընտրեալ անօթը, որուն մէջ կը հանգչի Աստուծոյ հոգին, առաջնորդութեան ճշմարիտ ուժը:

— Դիտէի թէ պիտի դատ, եղբայր իմ Բաբ-Նարաս, որովհետեւ Տէրը ընտրած ու վերապահած էր զիս այս օրուան համար, որհնեալ ըլլայ իր կամքը: Պօղոս կը դողար իր յուզումէն երբ կ'արտասանէր այս բառերը: Պատգամին արտակարգ պայծառութիւնը կը թանձրացնէր տարակալ քոյց ստոյգ խաւովը իր հոգիին: Կան պահեր ուր բաց կ'ըլլան երկնքին դռները, լսելու չափ արձագանքները կապուաւորին: Կեանքին մէջ

ժամեր կան, ուր հսկայ եղբուրթեանց մուտքին մէջ կը տեսնենք իրերը վճիռ ու թափոնցիկ, նման առտուան լոյսին:

Երկու բարեկամները ամբողջ գիշերը ուշ պէտք իրարու պատմեցին եօթը տարիներու իրենց կեանքի անցուղարձերը: Պօղոս Հետաքրքիր էր մանաւանդ գիտնալու Երուսաղէմի համայնքի մասին: Բաբ-Նարաս պատմեց Հերոդէս Ագրիպայի հալածանքը, Յակոբոս Զերեզիլայի մահը, եւ Պետրոսի քանոնադրութիւնն ու հրաշքով ապատիր: Պօղոս խոր հետաքրքրութեամբ կը լսէր այս բոլորը: Ճառ ու բողոք իրար կը յրացնէին Բաբ-Նարասի շրթներէն:

Յաջորդ օրը յուզումէն թրթռացող ձայնով Պօղոս յայտնեց իր մօրը թէ հնչած էր ժամը իր մեկնումին, Տէրը կը կանչէր զինքը իր ծառայութեան:

Մայրը կարծես նախ շփուկաւ քուտածը, յետոյ սեւեռելով իր նայուածքը տղու երեսին, յորեց յուսարեկ ձայնով. «Ո՛ր կ'երթաս, զաւակ»: Կարտ կար իր ձայնին մէջ, յիշեց օրերը անոր մանկութեան, երբ ինքն ու հայրը իրենց գիշերները կը կիսէին անոր օրօրոցին վերեւ: Հայրը որ կը համբուրէր տղուն մազերը, լալու չափ զոտցուած, կարծես կանուխէն նախազգայով ազէտը որուն սահմանուած էր իր տղան:

Պօղոս քաղցր աղապատանքով կը դիտէր իր մայրը, եւ իրեն այնպէս կու զարթէ առաջին անգամ ըլլալով լուսաւորուած էր անոր դէմքը:

— Ո՛ր կ'երթաս կրկնեց մայրը, կարծես ակամայ:

— Կ'երթամ այն ճամբայէն զոր Աստուած նախաահմանած է ինծի համար:

— Տէր երկնաւոր, կրկնեցին մօր շրթները, շատ կուգար իրեն տղուն այս զոհ պատրանքի մը հաշտին, նման գաշաւուած երազի մը, կամ ծաղիկին՝ որուն առէջին կարիճի խայթ ըլլար Հեղինուած: Անհուն էր անձուկը անոր երեսին, հաբած պաղաւանք էին իր աչքերը: Սակայն ինչ որ յուսովէ կը դարձնէր այս բոլորը, օգնութիւն ըստ պատգի իր նկուն վիճակն էր:

2

Յարժեք տալու, երբ վարդապետն լույս կը բացուէր կիւթնոսի ջուրերուն, Բար-Նաբաս եւ Պօղոս Տարսոնէն Սելւեկիա մեկնեցան, Նաւով, եւ անկէ Անտիոք: Իրենց կ'ընկերանար նաեւ Տիոտոքը: Անտիոքը երբորդ քաղաքն էր կայսրութեան, առանց սակայն Տիւբոսի, Սիւտոնի եւ խոյնիսկ Տարսոնի նըման վաճառաշահ ըլլալու: Աւելի զինուորական կեդրոն էր, քան ճարտարարուեստի եւ արդիւնաբերութեան վայր: Վաճառականներ, կայսերական պաշտօնականներ, կրկէսի խաղարկուներ, ծաղրածուներ, Իսիսի քուրմեր, քաղաքացի մողեր, կախարդներ, պերճադիմներ, կը լեցնէին ասիական նկարադիր ունեցող այս ոստանը: Կային նոյնպէս մեծ թիւով գերիներ, որոնց ուսերուն կը ծանրանար վերոյիշեալ դատարկասուններուն բեռը: Քաղաքը հարուստ էր իջեւաններով, հաճոյքի վայրերով, կրկէսներով, պալատներով եւ կախալ պարտէզներով: Սակայն ամենէն ուշադրաւք Աստարգէի շէրդ մեհնանն էր, որ իր շուրջը կը խորէր Նեթանոս ուխտաւորները, մասնաւոր հրապոյր եւ կենդանութիւն տալով քաղաքի ելեւէջքին: Ան ալն վայրը, ուր կուգային Բար-Նաբասն ու Պօղոսը, լծուելու հողիներու փրկութեան գործին:

Հինէն, բաւական լաւ կազմակերպուած հրէական դադութ մը կար, սիրիական այս մայրաքաղաքին մէջ, սերտ յարաբերութեամբ կապուած Երուսաղէմի: Այդ էր պատճառը անտարակոյս որ նոր կրօնքը Ս. Երկրի մէջ հազիւ սկիւր առած, կը ճառագայթէր հոս, որ Երուսաղէմէն յետոյ քրիստոնէական երկրորդ կեդրոնը պիտի հանդիսանար: Հրէական համայնքը, ինչպէս ամէն տեղ, խորուած էր սինակոկիին շուրջ: Հոն կը յաճախէին նոյնպէս հեթանոս նորադարձները:

Պօղոսի եւ Բար-Նաբասի Անտիոք ժամանած ըլլալու լուրը տարածուած էր արդէն հաւատացեալներու մէջ: Ամէնուրեք կը խօսուէր Երուսաղէմէն եկած երկու նոր քարոյզիչներու մասին: Բոլորն ալ հետա-

բերիւր էին տեսնելու եւ լսելու դիրենք: Իրիկուն մը, Պօղոս առաջնորդուեցաւ խօսելու հաւաքուած բազմութեան մը, գերիներէ, Հրեաներէ եւ հեթանոսներէ բաղկացած, Երբ ոտքի ելաւ խօսելու, տօգոյն էր իր դէմքը եւ շրթները պրկուած:

— Աշխարհը կը քուրի այսօր ապակաշուութեան սահանքէ մը, մութ ու պղտոր: Անասնական սէրեր, որկրաժէտ ցանկութիւններ, այրող բայց անյաղ, դժոխքի են վերածեր կեանքը: Անարդարութիւն, ատելութիւն, յակիտակութիւն եւ նենգութիւն, ձեռք ձեռքի, կը յառաջանան, կղզիանք եւ արցունք չաղարկուած ձիւթի մը մէջէն: Իրենց հողին տատանային փոխ տուած մարդեր, մարմնական տխտերէն ու ցանկութիւններէն տրորուած եւ անբանացած, աւելի յոռի կը թուին ըլլալ քան վազանները: Անոնք որդերու պէս կը դեռան իրենց գոյացուցած տիգրիսի մէջ: Աշխարհի վերջը եկած պիտի ըլլար, եթէ Աստուած չմեղքար իր արարածներուն եւ չըրկէր Մեսիան, իր Որդին, փրկելու մարդկութիւնը եւ խմբիկը բոլորը երկնքի Թագաւորութեան մէջ: Այս պատուաւորէն ականջներուս կը հնչէ ձայնը Անոր՝ որ տարիներ առաջ կ'ընտրէր զիս իրբեւ պատգամաւոր իր Աւետարանին: Եկած եմ ձեզի բերելու վկայութիւնն ու պատգամը այդ ճշմարտութեան, եւ մխիթարութիւնը կեանքի բարիքներէն զրկեալներուն: Չկայ ցաւ մը, խռովք մը, մարդոց վերաբերեալ, որուն խաթոցը չունենայ աշխարհ եկած Փրկիչը իր մորթին վրայ եւ հողիին խորը: Անկա կամօքին իր վրայ առաւ մեր մեղքն ու ամօթը, տառապեցաւ, շարչարուեցաւ եւ մեռաւ, փրկելու համար մեզ մեղքի դերութեանէն: Աստուած յարուց զինքը, եւ այժմ նստած աջ կողմը Երկնքիներու տիրոջ, մեղի, մեղքերու եւ ցտեղութեւ աշխարհին մէջ նստողներու կը նայի անմկուսութեամբ: Անիկա աստուածային լարեկամն է բոլոր մարդերուն, իրեն կապուող գերծ կը մնայ աշխարհի չարէն, ժառանգելով յաւիտենական կեանքը:

— Ընդարձակ է իր Թագաւորութիւնը, որ մենաշնորհը չէ ցեղի մը եւ կամ դասա-

կարգի մը, «Տոգիտի աղքատներ»ը, որոնք իրենց մեղքին զգացումովը կ'արտասուեն, պիտի ժառանգեն այդ Թաղաւորութիւնը որ Աստուծոյ հոգեւոր պարգեւն է հաւատացեալներուն: Փրկութիւններու եկեղեցին որ երկրի վրայ կը կազմուի, երկնքի մէջ պիտի գտնէ իր փառաւոր ճապարակները: Թաղաւորութիւնը ապագայ ժառանգութեան գրաւտկանն է, զոր հասարակարգաբար կը վայելեն բոլոր կանչուածները»:

— Մեսիայի գալուստով վերջ գտած են ստրկութեան եւ տգիտութեան ժամանակները: Օրէնքն ու մարդարէշները կանգ կ'առնեն այլեւս, եւ կ'սկսի սիրոյ եւ շնորհաց օրէնքըն ու յարոյսականը, որ Լիթ թաղաւորութիւն հինին հետ, պիտի նմանի իր ուժէն ճարձատող նոր դիւինին, զոր անխոհեմութիւն պիտի ըլլար կարկտուած տիկերուն մէջ դրնել: Մեսիայի գալուստով կը հաստատուի նոր Ուխտը, Գողգոթայի վրայ իր արեանը հեղումով: Մարդիկ գերինքերէն, որոնք պիտի չկրնային գնալ առանց փոխարէնի մը: Արժէքը այլ պարտէին, որոնք յանգաւորը անկարող էր վճարելու, Մեսիան ինքը տը-

ւաւ իր մահովը: Փրկչին արեւնն է որ շնորհաց դաշինքին մէջ մարդուն կ'ապահովէ զէրնէւկան ներումը»:

— Մարդկութեան ներկայ կարգը իր վախճանին կը մօտենայ, այդ վերջը պիտի ըլլայ անսահման յեղափոխութիւն մը, «անձկութիւն» մը, նման երկունքի ցաւերուն: Վերածնութիւն մը, կանխուած միջին արհաւիրքներով եւ ծանուցուած արտա-կարք երեւոյթներով: Վերջին օրը երկնքին մէջ պիտի պայթի Մեսիային նշանը, Սի-նայէն աւելի զոգտալից եւ լուսաշող տեսիլքի մը մէջ, ամպերը պատուող ահաւոր փոթորիկ մը, ակնթարթի մը մէջ արեւելքէն արեւմուտք ժայթքող կրակէ գիծով: Մեսիան պիտի գայ ամպերու վրայ բաղմամբ, փառք եւ վեհութիւն հաղած, փողերու ձայնով, հրեշտակներէ շրջապատուած: Ան առեն յարութիւն պիտի առնեն մեռեալները եւ պիտի սկսի դատաստանը»:

Բար-Նարաբար քաղցրութեամբ եւ հիացումով կը նայէր իր բարեկամին: Նոյն կրքոտ եւ նախանձայնոյց Պօղոսն էր, միայն երբեմնի ատելութեան բոցին փոխարէն, այժմ սիրոյ եւ նուիրումի բոցէն էր բռնկեր:

(Շար. 8)

Ե.

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

1.- Ընդհանուր Յատկանիշներ.- Աւետարանին շեղինակը արտասովոր ձերքն ունի տմեկաբար գաղափարները զգեստաւորելու մանկական պարզութեամբ լեզուով մը: Իր պարզափարները աւելի խորունկ են քան Ս. Պօղոսինները, բայց արտայայտուած են շատ աւելի պարզ կերպով: Առէջ օրինակի համար Աստուծոյ բնութեան մասին իր նշկարագրութիւնը. «Հոգի է Աստուած, եւ երկրպագուացն նորա հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պազանել» (Գ. 24), կամ Բանին նախադասութիւնը եւ աստուածութիւնը. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն» (Ա. 1). կամ Բանին մարդեղութիւնը. «Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ» (Ա. 14):

Աւետարանը պատմութիւն մը չէ լոկ, այլ նաեւ այլաբանութիւն մը: Ատրկա գործին է միտաբան հոգիի մը, որ Ս. Գրքը այլաբանօրէն կը մեկնէ եւ կ'ակնկալէ որ իր գործն ալ մեկնուի նոյն կերպով: Աւետարանին այս խորհրդապաշտ նկարագիրը անոր կու տայ իր խորհրդաւոր հրապօրը: Մանաւորապէս յստակ եւ ուշագրտաւ օրինակներ են, բացուած երկինքը (Ա. 51), լաւ գինին (Բ. 10), Գրիստոսի մարմնին տաճարը (Բ. 21), բարձրացուած օձը (Գ. 14), կենդանի ջուրը (Դ. 10), հասունացած արտերը (Դ. 35), կենաց հացը (Զ. 35), ոչխարաց դուռը (Ժ. 7), բարի հովիւը (Ժ. 11), ճանապարհը (ԺԳ. 6), ճշմարիտ որթը (ԺԵ. 1), Գրիստոսի առականոր խօսքերը (ԺԶ. 25), արիւնը եւ ջուրը (ԺԺ. 34), ձուկերու որսը (ԻԱ. 11):

2.- Թուական.- Չորրորդ Աւետարանի գրութեան թուականը մեկնիչներ ընդհան-

րապէս կը դնեն Ա. Դարու վերջերը կամ Բ. ին սկիզբները: Այսպէս. 75-115 W. Lock, 90-110 A. E. Brooke, 90-100 A. H. McNeile, 90-95 B. H. Streeter, չ. 90 J. R. Dummelo: Լուսոյցուն է թերեւս Streeter-ի տուածը 90-95:

Արտաքին վկաներուն առաջինն է Ս. Իգնատիոս, 110 թուին: Ան գրեթէ բառացի մէջ կը բերէ Գ. 8էն «նա դիտէ ուտիի գայ կամ յո երթալ»: Ան Գրիստոսը կը կոչէ Բան (Logos) Աստուծոյ, Դուռն Հօր, եւ Ջուր կենդանի: Ան կը կոչէ Սատանան «իշխան աշխարհիս այսորիկ»: Այս բացատրութիւնները Յովհաննէսին յատուկ են:

3.- Հեղինակ.- Պաղեստինցի հրեայ մըն է հեղինակը, որ Երուսաղէմը եւ Տաճարը լաւ ճանչցած է Տիտոսի ձեռքով կործանուելէ առաջ, ինչպէս կը մակարեթուի իր ցոյց տուած ծանօթութիւններէն: Ան կը ներկայանայ իրբեւ ականատես մը Փրկչի կեանքին՝ գրելով, «եւ տեսաք զփառս նորա» (Ա. 14):

Շեղինակը երբեք չի տար Ձերեղեան Յովհաննէսի անունը, իսկ Մկրտիչը կը կոչէ պարզապէս Յովհաննէս: Երբ պէտք ըլլայ Առաքեալը յիշել կը գործածէ ինքնապատուկ բացատրութիւններ, ԺԳ. 23, ԺԼ. 15, 16, ԺԺ. 26, Ի. 2, 3, 4, 8, ԺԱ. 7, 20, «Ժիւս Յիսուս» եւ այլն: Ակնարկուած այս աշակերտը կը նկատուի Յովհաննէս Ձերեղեան եւ կը համարուի Աւետարանին հեղինակը:

Մենք Ղուկասի տուած տեղեկութիւններէն զխենք որ Պետրոս եւ Յովհաննէս մօտիկ բարեկամներ եւ սրտակիցներ էին եւ այս պարճան գաղափարակից գործակիցներ (Ղկա. Ե. 1-11, ԻԲ. 7-13, Գործք, Գ. 1-10,

Դ. 13-22, Ը. 14-25) : Հետևաբար բնական
կը թուի Դ. Աւետարանին մէջ Պետրոսի հետ
յիշուող անանիոսն աշակերտը նոյնացնել
Յովհաննէսի հետ :

Այս բոլոր նկատողութիւնները քով քող
վի զայով կը կազմեն կարեւոր կշիռ մը ի
նպաստ Դ. Աւետարանի Յովհաննէսեան հե-
ղինակութեան, ինչ որ Եկեղեցւոյ հնագոյն
և բնդհանուր ասանդութիւնն է եղած ար-
դէն :

4.- ՎԱՅՐԸ.- Ըստ հնագոյն աւանդու-
թեան իփիսոս ճաղաքն է Դ. Աւետարանի
դրութեան վայրը : Շատ մը արդի մեկնիչ-
ներ ալ (A. E. Brooke, J. R. Dummelow, եւ
այլն) նոյնը կ'ընդունին :

5.- ԼԵԳՈՒՄ.- Յովհաննու Աւետարանը,
թէեւ Արամերէն մօթածողութեան նշաններ
կը պարունակէ, սակայն առհասարակ ըն-
դունուած տեսութեամբ՝ դրուած է Յունա-
րէն : Արամերէնի նշաններուն գոյութիւնը

կը բացատրուի հեղինակին ազգով հրեայ
մը ըլլալուն իրողութեամբ :

6.- ԱղԻՐԱՐ ՀԱՄԽԱՏԵՈՒՅԻՄԷ ԻԵՍՒ.- Դ.
Աւետարանի նիւթերու փոքր մէկ մասը մի-
այն նոյն է Համատեաներու բովանդակու-
թեան հետ, որոնք կը գտնուին Յովհ. 2.
ԺԲ. 1-19), ԺԳ. 21-38, ԺԸ. եւ ԺԹ. դուիւ-
ներուն մէջ, մնացածը նոր է բոլորովին :
Յովհաննէս Համատեաներէն կրնայ ճանչ-
ցած ըլլալ, ըստ ոմանց, Մարկոսի եւ Ղու-
կասի Աւետարանները :

7.- ԽՈՐԻՐՈՂԱՆԻՉ ԵՒ ԿԱՐԳ.- Եղեկիէժեան
ռեսիլիքի (Ա. 10) կենդանիներէն արծիւն է
Յովհաննէսի խորհրդանիշը, որ կը պատկե-
րացնէ անտուածաբան Աւետարանին
բարձրաթիւշ ոճը : Յովհաննէսի Աւետարա-
նը չորբորդ դասուած է հետեւելով նոյն
տեսիլքի թշուառքած կարգին, յայտնի -
Մարգ=Մատթէոս, Աւիւծ=Մարկոս, Եղ=
Ղուկաս, եւ Արծիւ=Յովհաննէս :

Ն. Ե.

Ո՞վ ՊԻՏԻ ԹԱՐԳՄԱՆԷ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԸ

Թերեւս ինծի պէս մտածողներ, եթէ ոչ հրապարակաւ, բայց ներքեալ պէս վերագրեալ շատ կարեւոր հարցումը ուղղեն իրենց իրենց, թէ ո՞վ կամ որո՞նք պիտի ըլլան ընտրեալ թեկնածուները Աւետարանի աշխարհաբար թարգմանութեան:

Այս հարցումը կը թելադրուիմ ընելու հրապարակաւ եւ այն մտահոգութեամբ, որ ներկայ Հայ Հոգեւորականութեան մէջ, բացառելով քանի մը համեատ Հեղինակութիւններ, գոնէ ես չեմ գտներ մէկը, որ ոչ միայն ըլլայ մեր Հին եւ նոր լեզուներուն հմտօրէն տիրապետած մտաւորական մը, Գուրեւան եւ Գուշակեան գրագէտ Սրբազաններու բարձրորակ մակարդակով, այլի ծանօթ ըլլայ բնագրի լեզուին, որպէսզի կարենայ տալ մեզի գրաբարէն աւելի հարազատ եւ աշխարհաբար թարգմանութիւններէն անելի ընտիր հայերէնով՝ Նոր Կտակարանի նոր թարգմանութիւն մը:

Յանդուղն ու յաւակնոտ արտայայտութիւն մը գուցէ նկատեն ոմանք, եթէ ըսեմ թէ գրաբար Աւետարանը՝ կարծեաւ չեմ հարազատ չէ: Ան ալ ունի իր ստուերները, եւ կրնամ ըսել, տեղ տեղ թանձր ստուերներ, երբ բռնագրին հետ կը բազմաթիւ գայն:

Յանձնախումբը, որ պիտի կազմուի մօտիկ յառաջիկային, մեծագոյն «խալը պիտի դործէ եւ յումպէտս իր ջանքն ու ժամանակը պիտի սպառէ, եթէ գրաբար Նոր Կտակարանը որպէս բնագիր ընդունելով ձեռնարկէ թարգմանութեան գործին:

Մինչեւ հիմա, հրատարակուած աշխարհաբար թարգմանութիւններուն մէջ՝ գրաբար թարգմանութեան շահ՝ յունարէն բնագրին հաւատարիմ կըրնանք նկատել Աստուածաշունչի Աւետարանական Ընկերակցութեան հրատարակութիւնը: Բայց կը ցաւինք ըսելու, որ գործածուած մեր աշխարհաբար լեզուն ո՛չ մէկ գրքի մէջ այնքան շնորհազուրկ եւ անփառունակ տարադոյլ յայտնուած է՝ որքան այդ թարգմանութեան մէջ:

Նոյնպէս, Գարեգին եւ Շնորհ Պատրիարքներու գրաբար Նոր Կտակարանէն կատարած ազատ թարգմանութիւնները, ազատ ու անհարազատ ըլլալով հանդերձ, չեն յաջողած իրենց զրազէտի գրչով տալ մեզի պրական թարգմանութիւն մը:

Աստուածաշունչի օտար լեզունով հրատարակութիւններն ալ՝ հարազատութեան տեսակէտէն վիճելի նկատուած են Յոյն բանասէրներու կողմէ:

Կրնամ սակայն խղճի մտօք յայտարարել՝ թէ հազար Հինգ հարիւր տարի առաջ՝ մեր հելլենիսպէտ Թարգմանիչները, հակառակ որ ո՛չ մասնեալ գարան ունէին, ո՛չ բառարան, ո՛չ թուղթ, ո՛չ լոյս եւ ո՛չ մէկը այն բազմաթիւ դիւրութիւններէն, զորս ունինք մենք այսօր մեր տրամադրութեան տակ, դարձեալ բարձրօրէն շնորհաւորելի ու բարձրօրէն գնահատելի են, որ կըրցան տալ մեզի Նոր Կտակարանի թարգմանութիւնը, գրեթէ կատարելու-

թևամբ, եւ այնքան հարագատ, որքան մեր ժամանակի օտար թարգմանութիւններն են:

Յոյն աստուածաբաններու վկայութեան համաձայն՝ քնադիրն ամենէն հարազատ թարգմանութիւնը ասորականն է, որ կատարուած է Երկրորդ Դարուն սկիզբը: Անոր յաջորդած է զպտերէն թարգմանութիւնը Երրորդ Դարուն վախճանին: Իսկ հայերէն դրաբար թարգմանութեան մասին, որ կատարուեցաւ զերեւոյս գիւտէն անմիջապէս ետք, ոչ մէկ կարծիք եւ յիշատակութիւն կը գտնենք Յոյն հին պատմութեան մէջ:

Մարկոսի Աւետարանի Ա. Գլխուն 14-րդ համարին մէջ՝ բառ մը կայ, որ թէ՛ հայերէն եւ թէ օտար թարգմանութիւններուն մէջ երեք տարբեր բառերով թարգմանուած է, բոլորովին տարբեր՝ քնադիր բառին արտայայտած իմաստէն:

Գրաբար Աւետարանը կ'ըսէ. եւ յետ մատնելոյն...

Աշխարհաբար թարգմանութիւնը՝ մատնութեմէն ետք...

Անգլերէն թարգմանութիւնը՝ ձերբակալութեմէն ետք...

Ուրիշ թարգմանութիւններ՝ բանտարկութեմէն ետք...

Իսկ յունարէն քնադիրն եւ նորագոյն յունարէն վերածումին մէջ, բառն է յանձնուելէն ետք:

Բնագիրը կ'ըսէ. Մէղա՛ տէ դօ քարաւոք-ի/մէ, իսկ աշխարհաբար յունարէնը՝ Ափո՛ւ տէ քարա՛ւոք-ի, որ կը նշանակէ՝ երբ յանձնուեցաւ:

Յունարէն քարաւոք՛ւտօ կը նշանակէ յանձնել, իսկ քրօտի՛ւտօ՝ մատնել, դաւաճանել:

Նոյնպէս Մարկոսի Աւետարանին Ա. Գլխուն 17-րդ համարին մէջ, մարդոց որսորդ, պէտք է ըլլայ՝ մարդոց ձկնորս, քանի որ Քրիստոս իր աշակերտներուն արհեստէն թելադրուած ուղղեց անոնց այդ խօսքը: Թէ՛ յունարէն նորագոյն լեզուին եւ թէ՛ օտար թարգմանութիւններու մէջ պահուած է քնադիրն ձկնորս բառը, քանի որ աշակերտները արհեստով ձկնորս էին եւ ո՛չ թէ որսորդ:

Յունարէն լեզուն -ինչպէս հայերէնը- ունեցեր է եւ ունի իր բարբառները, որոնք Աթէնքի մէջ խօսուած աստիկեան լեզուէն բոլորովին տարբեր էին այն օրերուն, երբ Քրիստոս յայտնուեցաւ երկրի վրայ:

Հաստատուած է թէ՛ Նոր Կտակաբանի յունարէնը՝ Աղեքսանդրիոյ մէջ լորժածաձաձ բարբառն է և չունի հելլէն դասական լեզուին շարագրական գեղեցկութիւնը:

Պատմութենէն գիտենք, որ Մեծն Աղեքսանդր, երբ տիրեց Եգիպտոսի եւ Ասիոյ մէկ մասին, իր աշխարհակալութեան ենթակայ երկիրներուն մէջ ներմուծեց յունարէն լեզուն եւ մշակոյթը: Հիմնեց նոր քաղաքներ, գրաւ նոր օրէնքներ եւ մինչեւ իսկ ստիպեց իր հպատակներուն յունարէն սորվիլ՝ եթէ կ'ուզէին հասարակութեան եւ պետութեան մէջ բարձրագոյն գիւրգիւր գրաւել:

Յունարէն լեզուն եւ զրականութիւնը այնքան ծաւալ դասած էին ժողովուրդներուն մէջ, որ երբ Հռովմէական Կայսրութեան թաւադրութեան տակ մասն Մեծն Աղեքսանդրի նուաճած երկիրները, յունարէն լեզուն փոխանակ ջնջուելու կամ տկարանալու՝ աւելի զօրացաւ, որովհետեւ Հռովմէացի տիրապետողները բաց պահեցին իրենց պալատներուն դռները Յոյն իմաստասէրներու առջեւ և անոնց յանձնեցին իրենց զաւակներուն դաստիարակութիւնը:

Պապիրոսները, աթինքն այդ շրջանի գերբերը կը վկայեն, թէ Հռոմ-

մէական կայսրութեան սահմաններուն մէջ յունաբէն լեզուն միակ իստուող ժողովրդային լեզուն եղած է :

Քրիստոսի յայնուամենայնիւ Երեւան եւ անկէ ետք, յունաբէնը դեռ կը պահէր իր տիրապետութիւնը արեւելքի եւ արեւմուտքի, ինչպէս նաեւ Հիւսիսային Աֆրիկէի մէջ :

Նոր Կտակարանի քանեօթը զիրքերը Առաջին եւ Երկրորդ Դարերուն՝ առաւելապէս զրուեցան Աղեքսանդրիոյ յունաբէն բարբառով :

Կ'ընդունինք թէ լեզուի անյաղթելի դժուարութիւններ ունի Նոր Կտակարանը, եւ վստահօրէն որքան ալ քաջամուտ ըլլայ մէկը, բնագրի լեզուին պիտի չկրնայ տալ հարկէր տոկոսով հարազատ թարգմանութիւն մը : Եւ որոշուն փորձինք բժախնդրօրէն հաւատարիմ մնալ բնագրին, այնքան պիտի տուի թարգմանութեան լեզուն իր վայելուչ արտայայտութենէն :

Թէեւ մեր անդուպական թարգմանիչները ամէն բժախնդրութիւն ի պործ դրին մէն մի բառը իր հարազատ նշանակութեամբ թարգմանելու, եւ եթէ կատարելապէս չյաջողեցան, բայց կրցան տալ՝ աշխարհի այդ յետամուտ օրերուն Աստուծոյ Գիրքը՝ հայերէն այնպիսի լեզուով մը, որ կրնանք ըսել կ'ը գերազանցէ բնագիրը իր յատկութեամբ, իր քերականութեամբ եւ իր արտայայտութեան հրապուրով :

Մեր զխաղութիւններուն մէջ կրնայ ըլլալ, որ տեղ տեղ մենք ալ մտաւորած ըլլանք, քանի որ մեր ալ ըրածը փութամակի ուսումնասիրութիւն մըն է, բայց ինչ որ ըրինք ներկայ գրութեամբ կրնայ օգտակար ըլլալ ուրիշներու, եւ մասնաւորաբար անոնց՝ որոնք յառաջիկային պիտի կոչուին նորադարէն հայերէնով Նոր Կտակարանի թարգմանութեան պատասխանատու զործը ստանձնելու :

Ստորեւ կու տամ Մարկոսի Աւետարանին մէջ եղած չեղումները, ներկայ տեսնելով միայն զբարբար Նոր Կտակարանը :

Գլուխ Ա. համար 6-ին մէջ՝ Եւ կերակուր նորա, պէտք է ըլլայ՝ եւ ան կ'ըստէր :

Գլուխ Ա. համար 14-ին մէջ՝ Զաւետարան Աստուծոյ, պէտք է ըլլայ՝ Աստուծոյ Թագաւորութիւնը :

Գլուխ Ա. համար 15-ին մէջ՝ Հասնալ է, պէտք է ըլլայ՝ մօտեցալ :

Գլուխ Ա. համար 20-ին մէջ՝ Զինտ նորա, պէտք է ըլլայ՝ առոր ետեւին :

Գլուխ Ա. համար 24-ին մէջ՝ Որ աղաղակեաց, պէտք է ըլլայ՝ եւ առաղաղակեց :

Գլուխ Ա. համար 27-ին մէջ՝ Հծծել ընդ միմեանս, պէտք է ըլլայ՝ կը զիծէին իրարու հետ :

Գլուխ Ա. համար 28-ին մէջ՝ կը պակսի ամմիքապէս մակարայր :

Գլուխ Ա. համար 31-ին մէջ՝ նոյնպէս կը պակսի շուտով մակարայր :

Գլուխ Ա. համար 34-ին մէջ՝ Եւ բռնակեաց բազում Հիւսիսային, պէտք է ըլլայ՝ եւ բռնակեց շատեր :

Գլուխ Ա. համար 36-ին մէջ՝ Եւ գնաց զհետ նորա, պէտք է ըլլայ՝ վազեցին կամ շտապեցին անոր հետեւն Սիմոն եւ իրեն հետ եղողները :

Գլուխ Ա. համար 38-ին մէջ՝ Նկայք երթիցում, պէտք է ըլլայ՝ երթամք առանց Նկայքի :

Գլուխ Ա. Համար 45-ին մէջ՝ Մատոյ վանք սրբութեան քո պատարագ, պէտք է ըլլայ՝ տուր մաքրութեանդ համար ինչ որ հրամայեց Մովսէս:

Այս նկատողութիւնները յատուկ են միայն Մարկոսի Աւետարանին Գլուխ Ա-ին մէջ եղած շեղումներուն: Նկատի չենք առած բառերու եւ բայերու հոլովման եւ խոնարհման տարբերութիւնները, որ թարգմանութեան մէջ կ'երևին: Շատ մը համամանական Ներկան եղած է Անցեալ Անկատար, կամ Անցեալ Կատարեալ եւ կամ Ապոկալիպս:

Ժիշք է թէ Վիեննա տպուած Աստուածաշունչի Աւետարանական Ընկերակցութեան՝ յունարէն բնագրէն թարգմանուած՝ Նոր Կտակարանի աշխարհաբար հրատարակութեան մէջ բնագրին հաւատարիմ ըլլալու բծախնդրութիւնը նկատելի է, բայց դժբաժնուած հայերէնը ո՛չ քերականութիւն ունի, ո՛չ շարահարկութիւն, ո՛չ խօսքի միութիւն եւ ո՛չ ալ դադափարի յատկութիւն:

Կը ներկայացնենք յունարէն բնագրէն թարգմանելով Մարկոսի Աւետարանին Ա. Գլուխը, միեւնոյն ատեն տալով իւրաքանչիւր համարին մեկնութիւնը:

Կը խոստովանենք թէ մենք ալ հարիւր տոկոսով չկրցանք հաւատարիմ մնալ բնագրին եւ հարկադրուեցանք որոշ տեղեր՝ ընդգծուած բառերով, որ մերն են, բացառապէս չհամարին մէջ նկատուած դադափարի անսրբութիւնը:

Ա Ե Տ Ա Ր Ա Ն Ը Ս Տ Մ Ա Ր Կ Ո Ս Ի

Գ Լ Ո Ւ Խ Ա.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՈՐՊԵՍ ՅԱՌԱՋԸՆԹԱՅ: ԳՐԻՍՏՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՐԿԱՅՏՈՒԹԻՒՆԸ: ԶՈՐՍ ԱՇԱԿԵՐՏԵՆՐՈՒ ԿՈԶՈՒՄԸ: ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒ ԵՒ ԴԻՒԱՀԱՐՆԵՐՈՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ:

Թ ա ր գ մ ա ն ու թ ի լ ը

Մ ե կ ն ու թ ի լ ը

1. Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Փրփրաւորի Աւետարանին սկիզբը:

2. Ինչպէս գրուած է մարգարէներուն մէջ, Ահա ես կը գրկեմ քեզմէ⁽¹⁾ առաջ իմ դեսպանն որ քու ճամբադ պիտի պատրաստէ քու առջեւեղ:

Աստուծոյ մարգարեացած Որդւոյն Յիսուս Քրիստոսի դաշտեան բերկրալից բուրբ, առաջին անգամ տրուեցաւ երկրի բնակիչներուն Յովհաննէսի կողմէ:

Աւետարանին սկիզբն եղաւ Յովհաննէս Բերկաւոր, որ համաձայն Մատթեոսի մարգարէի գուշակութեան, կ'ըսէ. Ահա ես եմ, ես իմ պատգամաւորս կը գրկեմ նախապէս եւ քեզմէ առաջ, որ պիտի պատրաստէ իւրեզոյց հոգիները, որպէսզի անոնք ընդունին քեզ որպէս իրենց Փրկիչը:

Եւ այդ դրութեանը Ռուբէ մէկը չէ, եթէ ոչ այն, որուն մասին Շառլի մարգարէն իսկ, հետեւեալը, Պատարասութեան համարն

3. Անապատին մէջ ձայն մը կը կանչէ, Պատրաստեցէ՛ք Տիրոջ մամբա՛ն, եւ հարթեցէ՛ք անոր շաւիղները:

Ահա է կրօնիկ, պոքոնիկ, չափաւոր քրոսոսը կը նշանակէ անձ, դէմք. պէտք թէ իսկ ճանճող տրոպ, քեզմէ առաջ:

4. Յովհաննէսն էր, որ անապատին մէջ կը մկրտէր ու կը քարոզէր ապաշխարութեան մկրտութիւնը մեղքերու քաղութեան համար:

5. Եւ Հրէաստանի ամբողջ երկիրը ու Երուսաղէմացիները կ'երթային անոր եւ իրենց մեղքերը խոստովանելով բոլորը կը մկրտուէին Յորդանան գետին մէջ:

6. Յովհաննէս հազած էր ուզտի մագ ու մէջքին ունէր կաշիէ գօտի մը, եւ կ'ուտէր մարախ ու վայրի մեղր:

7. Կը քարոզէր ու կ'ըսէր. իմ ետեւէս կու գայ ինձմէ աւելի զօրաւորը, որուն ես արժանի չեմ ծնելու եւ փակելու իր կօշիկներուն կապը:

8. Թէեւ ես մկրտեցի ձեզ ջուրով, բայց ան պիտի մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով:

9. Ու եղաւ, որ այն օրերուն Յիսուս եկաւ Գալիլիոյ Նազարէթէն ու մկրտուեցաւ Յովհաննէսէն Յորդանանի մէջ:

10. Ու երբ շտապով ջուրէն դուրս կ'ելլէր տեսաւ երկինքը պատռուած եւ Հոգին ազաւնի պէս կ'իջնէր իր վրայ:

11. Ու երկինքէն ձայն մը եղաւ. Դուն ես իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ:

ուրկէ պիտի գայ Տէրը: Հարթեցէք իր շաւիղները ուրկէ պիտի անցնի ձեր փրկութեան Առաջնորդը, այսինքն արմատախիլ ըրէք ձեր հոգիներուն մէջ անած աւերիչ կիրքերու փռչերը, եւ ապաշխարութեամբ ու հաստքով դիմաւորեցէք Փառաց Թաղաւորը:

Եւ Յովհաննէս եղաւ Գրիստոսի Աւետարանին սկիզբը անապատին մէջ մկրտելով ու քարոզելով ապաշխարութեան մկրտութիւնը:

Եւ Հրէաստանի բոլոր բնակիչները ու Երուսաղէմացիները իրեն կ'երթային ու իրենց մեղքերը խոստովանելով կը մկրտուէին Յորդանան գետին մէջ:

Յովհաննէսի ամբողջ կեանքն ու արտաքին երեւոյթը կը կազմէին ներդաշնակութիւն մը իր քարոզութեան հետ: Ան հազած էր ուզտի մագէ Հիսուսած հագուստ եւ մէջքին կապած էր կաշիէ գօտի մը: Իր սնունդը կը կազմէին Արարիոյ անապատներէն հովիւն բերած մարախը եւ Ժայռերու ծերպերուն մէջ ամբարուած մեղրը:

Յովհաննէս կը քարոզէր ու կ'ըսէր. ինձմէ յետոյ կու գայ զօրագոյնը, որ իր աստուածային բնութեամբ անհամեմատօրէն գերազաւ է ինձմէ, ու ես արժանի չեմ նոյնիսկ անոր առջեւ ծնելու եւ քակելու անոր կօշիկներուն կապերը:

Արդարեւ, ես մկրտեցի ձեզ ջուրով, բայց ան պիտի մկրտէ ձեզ Սուրբ Հոգիով, որով դուք պիտի վերածնիք ու սրբուիք ձեր հոգեկան յերթերէն:

Ու այն օրերուն այնպէս պատահեցաւ, որ Յիսուս Նազարէթէն եկաւ ու մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ Յովհաննէսէն:

Ու երբ արտաքինօք ջուրէն դուրս կ'ելլէր, տեսաւ երկինքը պատռուած եւ Սուրբ Հոգին ազաւնակերպ կ'իջնէր անոր վրայ:

Երկինքէն ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. Դուն ես իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ: Սիրեցի քեզ որպէս մարդ եւ ամէն կերպով դու՛ն ապաւնիս անոր ինձի:

12. Եւ Հոգին իսկոյն անապատի մէջ հանեց զայն:

13. Եւ քառասուն օր այնտեղ էր, անապատին մէջ ու կը փորձուէր սատմայելն: Գազաններուն հետ էր եւ իրեշտակները կը սպասարկէին իրեն:

14. Երբ Յովհաննէս իշխանութեանց յամենայնեայ, Յիսուս Գալիլիա եկաւ եւ կը քարոզէր Աստուծոյ քաղաքութեան Աւետարանը:

15. Կ'ըսէր թէ ժամանակը լրացած է ու մօտ է Աստուծոյ արքայութիւնը, ապաշխարեցէ՛ք ու հաւատացէ՛ք Աւետարանին:

16. Երբ Գալիլիոյ ծովուն մերձակայքը կը պտըտէր, տեսաւ Սիմոնը և Սիմոնի եղբայրը՝ Անդրէասը, որոնք ուռկանը ծովուն մէջ կը ձգէին, ուրովհետեւ ձկնորս էին:

17. Եւ Յիսուս ըսաւ անոնց. իմ ետեւէս եկէ՛ք ու ես պիտի ընեմ, որ դուք մարդու ձկնորս ըլլա՛ք:

18. Եւ իսկոյն իրենց ուռկանները քողովով հետեւեցան իրեն:

19. Եւ տակաւ ատկէ յառաջանալով՝ տեսաւ Զբեդիթան Յակոբոսը եւ իր եղբայրը՝ Յովհաննէսը, որոնք մաւռն մէջ ուռկանները կը նորոգէին:

20. Իսկոյն զամոնք ալ կամչեց. եւ անոնք իրենց հայրը՝ Զբեդիթոսը աշխատաւորներուն հետ մաւռն մէջ քողովով՝ գացին անոր ետեւէմ:

Յիսուս մկրտուելէն անմիջապէս ետք, Սուրբ Հոգիին մղումով առաջնորդուեցաւ անապատ:

Գառաւորներն օր անապատին մէջ մնաց, փորձուեցաւ ու յաղթեց սատանային հրապարակ մատուցումներուն: Գազաններուն հետ ապրեցաւ, բայց վայելեց Հրեշտակներու ընկերակցութիւնն ու սպասարկութիւնը:

Յովհաննէս իշխանութեանց յանձնուելէ ու բարտը դրուելէ ետք, Գալիլիա եկաւ ու սկսաւ քարոզել, թէ մօտ օրէն պիտի հաստատուի Աստուծոյ քաղաքութիւնը:

Եւ կ'ըսէր թէ այլեւս լրացած է ժամանակը Աստուծոյ կողմէ նշանակուած Մեսիայի ժամանումին եւ օրերը մօտեցած են: Մեսիան երկրի վրայ իր սուրբ ու երկնային կեանքով պիտի հաստատէ իր Հոգեւոր առնը, իր եկեղեցին, որովք պիտի զայն փրկուի թեան ըսյը բոլոր ապաշխարողներուն եւ իր Աւետարանին հաւատացողներուն:

Երբ Յիսուս Գալիլիոյ ծովուն մօտիկը կը պտըտէր, տեսաւ Սիմոնը եւ Անդրէասը, որոնք երկու եղբայր ձկնորս էին եւ զրազած էին այդ պահուն ուռկանը ծովուն մէջ նետելով:

Յիսուս ըսաւ անոնց. ինձի հետեւեցէ՛ք որպէս իմ աշակերտներս ու ես մարդոց ձրկնորս պիտի ընեմ: Այնպէս պիտի ուսուցանեմ ձեզի, որ դուք Աստուծոյ քարոզութեան ուռկանով կարենաք զբաւել ու բերել մոլորածները Տիրոջ Հոգեւոր Քաղաքութեան մէջ:

Եւ անոնք հնազանդեցան ու անմիջապէս իրենց ուռկանները ձգելով անոր ետեւէն գացին:

Եւ Յիսուս քիչ մը յառաջ երթալով տեսաւ Զբեդիթոսի տղան Յակոբոսը իր եղբոր Յովհաննէսին հետ, որոնք նոյնպէս նաւուն մէջ էին սկսել երկրագործութիւնը եւ ուռկանները:

Եւ Յիսուսի կոչին անոնք իսկ ընդառաջելով իրենց հայրը աշխատաւորներուն հետ նաւուն մէջ թողուցին ու իրենք հետեւեցան Յիսուսի:

21. Ու կը մտնեն կափառնայում: Եւ Յիսուս անմիջապէս Շաբաթ օրն իսկ ժողովարան մտնելով կը քարոզէր:

22. Եւ կը գարմահային անոր վարդապետութեան. որովհետեւ կը քարոզէր իշխանութիւն ունեցողի պէս եւ ոչ թէ դպիրներու նման:

23. Եւ անոնց ժողովարանին մէջ պիղծ հոգիով մարդ մը կար, որ աղաղակեց:

24. Եւ ըսաւ. Թող զիս, ի՞նչ կայ մեր և քու միջեւ Յիսուս Նազովրեցի, դուն մեզ կորստեալ մատնելու եկար, գիտեմ դուն ով ես, Աստուծոյ Սուրբը:

25. Եւ Յիսուս սաստեց անոր ու ըսաւ. Պապանձէ՛ եւ դո՛ւրս ել անկէ:

26. Ու պիղծ ոգին ուժգին գայն ղցնելէ ետք, մեծաձայն գոչումով դուրս ելաւ անկէ:

27. Եւ բոլորը զարմացան, այնպէս որ իրարու հետ կը վիճէին ու կ'ըսէին. Ի՞նչ է այս, ի՞նչ նոր վարդապետութիւն է ասիկա: Որովհետեւ իշխանութեամբ կը հրամայէ եւ դեւերն անգամ կը հնազանդին իրեն:

28. Եւ շուտով իր համբաւը ելաւ Գալիլիոյ ամբողջ շրջանին մէջ:

29. Եւ փութով ժողովարանէն ելելով եկան Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ Սիմոնի եւ Անդրէասի յովներ:

30. Եւ անմիջապէս ըսին իրեն Սիմոնի. գոհանջի՛ն. մասին, որ քերական պառկած էր:

Ու երբ Շաբաթ օր կափառնայում կը մտնեն, Յիսուս ուղղակի ժողովարան կ'երթայ ու կը քարոզէ:

Յիսուսի վարդապետութիւնը մեծ զարմանք ու հիացում կը պատճառէ իր ունկնդիրներուն: Որովհետեւ ան կը քարոզէր ոչ թէ բարբիներու կողմէ ընդունուած վկայութիւններու հիման վրայ, այլ կ'ուսուցանէր անոնց ճշմարտութիւնը իր աստուածային բնութենէն ներշնչուած իրեն հեղինակաւոր ու վաւերական աղբիւր:

Եւ ժողովարանին մէջ մարդ մը կար, որ կը պոռուէր պիղծ ու խորամանկ ուժի իշխանութեան տակ եւ որ բարձր ձայնով դոչեց:

Եւ ըսաւ անոր. Ախոս, ի՞նչ հասարակաց բան կայ մեր եւ քու միջեւ, Յիսուս Նազովրեցի: Դուն մեզ կործանելու եկար: Դիտեմ դուն ով ես, մարդաբէրացած Մեսիան, Աստուծոյ Սուրբը:

Եւ Յիսուս սաստեց ու ըսաւ անոր. Բեռանդ գոցէ ու դուրս ել անկէ:

Ու պիղծ ոգին զայն ուժգին ցնցելէ ետք, սաստիկ ձայն մը արձակելով դուրս ելաւ անոր մէջէն:

Եւ բոլորը ի տես այս հրաշագործութեան մեծ զարմանքով կը հարցնէին իրարու թէ ի՞նչ արտակարգ հրաշք է ասիկա, ի՞նչ նոր վարդապետութիւն է որ կը քարոզէ մեզի: Եւ ոչ միայն իշխանաւորի հեղինակութեամբ կ'ուսուցանէ, այլեւ կը հրամայէ պիղծ ոգիներուն եւ անոնք ալ կը հրաշագործին իրեն:

Եւ անկէ ետք իր մեծ վարդապետի ու հրաշագործի համբաւը տարածուեցաւ Գալիլիոյ բոլոր շրջաններուն մէջ:

Եւ իսկոյն ժողովարանէն ելան ու գացին Յակոբոսի եւ Յովհաննէսի հետ, Սիմոնի եւ Անդրէասի տունը:

Պետրոսի պահանջը, անոր խնդրանքով իրարմէն խնայեցին Յիսուսի:

31. Յիսուս անկողնին մօտեցնալով՝ բռնեց անոր ձեռքը ու վերցուց, անմիջապէս ջերմը թողուց գայն, եւ ան կը ծառայէր անոնց:

32. Երբ արեւը մարը մտաւ ու իրիկուն եղաւ, իր քով բերին բոլոր հիւանդներն ու դիւահաքները:

33. Եւ ամբողջ ֆաղաքը հաւաքուած էր դրան առջեւ:

34. Եւ շատեր բժշկեց, որոնք գանգաւ հիւանդութիւններէ կը տառապէին: Բազում դուեր դուրս հանեց եւ չթողուց որ պիղծ ոգիները խօսին, որովհետեւ անոնք գիտէին, որ Բարիստոսն է ինք:

35. Եւ առտուն՝ մթնշաղին՝ կանգնեցաւ, ելաւ ու գնաց ամալի տեղ մը եւ հոն կ'ազօթէր:

36. Անոր ետեւէն վագեցին Սիմոնը եւ իրեն հետ եղողները:

37. Եւ գայն գտնելով ըսին, թէ բոլորը քեզ կը փնտռեն:

38. Յիսուս ըսաւ անոնց. երբ անք մօտակայ գիւղաքաղաքները, որ հոն ալ ֆարգեմ, քանի որ ասոր համար դուրս ելալ քաղաքէն:

39. Եւ կը ֆարգէր ամբողջ Գալիլիոյ անոնց ժողովարաններուն մէջ ու դուերը կ'արտաքսէր:

40. Եւ անոր քով բոլորս մը կուգայ, ծունկի եկած կ'աղաչէ ու կ'ըսէ անոր. Եթէ դուն ուզես, կրնաս զիս մաքրել:

41. Եւ Յիսուս գոցաց, ձեռքը երկարեց ու դպաւ անոր, եւ ըսաւ. Կուգեմ, մաքրուէ՛:

42. Եւ այս ըսելով բորոտութիւնը անմիջապէս գնաց անկէ ու մաքրուեցաւ:

Եւ Յիսուս անկողնին մօտեցաւ, հիւանդին ձեռքը բռնեց ու վերցուց զայն: Եւ նորի վայրկեանին տաքութիւնը անցաւ եւ առողջութիւնը բոլորովին վերագտնելով, սկսաւ ծառայել անոնց:

Իրիկունը երբ արեւը մարը մտաւ, իրեն բերին բոլոր հիւանդներն ու դիւահաքները:

Եւ քաղաքին ամբողջ բնակիչները հաւաքուեալ էին Պետրոսի տան առջեւ:

Եւ Յիսուս շատ մը հիւանդներ բուժեց, որոնք կը տառապէին տեսակ տեսակ ախտերէ: Եւ նոյն ատեն այստեղներուն մէջէն արտաքսեց դուերը:

Եւ առաւօտ կանուխ, լուսաբացէն առաջ, կանգնեցաւ ու դնաց ամալի տեղ մը եւ սկսաւ հոն ազօթել:

Յետոյ Յիսուսի ետեւէն շտապեցին Սիմոնը եւ իր ընկերները:

Եւ երբ դտան զայն, ըսին թէ ամէնքը քեզ կը փնտռեն, եկուր եւ խօսէ ժողովուրդին, որ խանդավառուած է քեզմով ու լրսել կ'ուզէ քեզ:

Եւ Յիսուս ըսաւ անոնց. երբ անք այս շրջանի գիւղաքաղաքները, որոնք ալ հոն ալ ֆարգեմ, քանի որ քաղաքէն դուրս ելալ միայն այդ նպատակով:

Յիսուս կը քարոզէր ամբողջ Գալիլիոյ ժողովարաններուն մէջ եւ նոյն ատեն կը զարմանէր իրեն բերուած դիւահաքները:

Եւ անոր մօտեցաւ բոլորս մը, աղաչեց ու ծունկի եկաւ անոր առջեւ եւ ըսաւ. Եթէ դուն ուզես, կրնաս զիս բուժել:

Եւ Յիսուս մեղքեցաւ ու ձեռքը անոր վրայ դնելով ըսաւ. Կուգեմ որ մաքրուես:

Ու երբ Յիսուս ըսաւ թէ կ'ուզեմ որ մաքրուիս, շուտով բորոտութիւնը դնաց իրայն ու մաքրուեցաւ:

43. Եւ խստութեամբ սաստելէ ետք, իսկոյն դուրս հանեց գայն ու ըսաւ անոր.

44. Զգուշացի՛ր, մէկուն չըսես, այլ գնա՛ եւ ցոյց տուր դուն քեզ քահանային եւ տո՛ւք անոր մաքրութեանդ համար ինչ որ հրամայեց Մովսէս որպէս վկայութիւն անոնց:

45. Բայց ան՝ երբ դուրս ելաւ, սկսաւ շատ քան յայտարարել եւ Յիսուսի խօսքը տարածայնել, այնպէս որ այլևս չէր կրնար յայտնապէս քաղաք մտնել, այլ կը մնար ամայի տեղեր ու ամէն կողմէ կու գային իրեն:

Երեսու խստօրէն ազդարարելէ ետք, որ չտարածայնէ կատարուած հրաշագործութիւնը, դուրս հանեց գայն իր եղած տեղէն:

Եւ Յիսուս ըսաւ անոր. Զգոյշ եղի՛ր, որ մարդու բան չըսես, այլ ուղղակի դնա քահանային եւ տուր անոր դարձանումիդ ընծան, զոր պատուիրեց Մովսէս Հրեաներուն վկայութեան համար, որ դիտնան թէ դուն ալ կրնաս մաքրուիլ:

Բայց անիկա երբ դուրս ելաւ, մոռցաւ Յիսուսի ազդարարութիւնը եւ սկսաւ ամէն կողմ տարածայնել անոր խօսքը, այնպէս որ Յիսուս ա՛լ չէր կրնար յայտնի կերպով քաղաք մտնել, որովհետեւ իր երեւումը առիթ պիտի տար ժողովրդային ազմկալից ցոյցերու: Մնաց քաղաքէն դուրս ամայի տեղեր, ուր ամէն կողմէ մարդիկ կու գային:

ՎԱՐԴԱՆ ՔՀՆԹ. ՏԻԻԼԿԵՐԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԼՈՒԹԸ

«Եկե՛ք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորած-
ններ, եւ ես ձեզ պիտի համոզեցնեմ: Իմ լուծս ձեր
վրայ առէ՛ք, եւ ինձմէ՛ ստրկեցէ՛ք» որ եեզ իմ աւ-
ստով խոմարի, եւ ձեր ամենքուն համգտութիւն
պիտի գտնէ՛ք, վստճի իմ լուծս քաղցր է, եւ իմ
բնա՛ք քեքեւ: (Մատթ. ԺԱ. 28-30):

Մատթէոս Առաքեալի արձանագրած Յիս-
տուսի յիշեալ խտաբերուն քննարկումը երեւ-
ւան կը քերէ անոր ունեցած խոր ճանաչո-
ղութիւնը մարդկային հոգեբանութեան եւ
դիտակցութեան:

Քրիստոսի հրաւերը եզակի կոչ մըն է
համայն մարդկութեան, որու նմանին կա-
րելի չէ հանդիպիլ ո՛չ սուրբերու, ո՛չ իմաս-
տասէրներու եւ ո՛չ ալ գիտնականներու
գործերուն մէջ: Աստուածորդին միայն
կարող էր ուղղել այսպիսի հրաւեր մը:

Եիսուս կոչ կ'ընէ բոլոր անոնց՝ որոնք
ծարաւի են ճշմարտութեան, որոնք զԱստ-
ուած կը փնտռեն: Մարդկային միտքը վաղ
ժամանակաշրջանէն, փնտռած է զԱստուած:
Յորի գրքին մէջ Զօֆար հարց կու տայ.
«Փնտռելով կարելո՞ք է Աստուած գտնել»: Ծառերու համար դժուար է Աստուած գըտ-
նել, իսկ անոնք որոնք դառած են Աստուած,
կը դժուարին զԱյն նկարագրել: Ահաւասիկ,
Քրիստոս հրաւեր կ'ուղղէր Աստուծոյ ճա-
նաչողութեան ծարաւի հոգիներուն, որոնց
անձերը յոգնած էին զԱնիկա փնտռելէն:

Մենք Աստուած կը գտնենք երբ մեր ու-
շագրութիւնը կեդրոնացնենք Յիսուս Քրիս-
տոսի վրայ. քանի որ Յիսուս կ'ըսէր. «Ան
որ դիս տեսա՛ւ՝ Հայրը տեսաւ: Աստուած
եւ Քրիստոս մի են. անոնք ունին նոյն բը-
նութիւնը եւ անձնաւորութիւնը: Հետեւա-
բար երբ ուսումնասիրենք Յիսուսի կեանքն
ու վարդապետութիւնը, հասու կը դառ-

նանք Աստուծոյ էութեան:

Աստուածորդին յոգնած ու բեռնաւոր-
ուած մարդկութիւնը իրեն հրաւերելէ յե-
տոյ, կը խոտտանայ նաեւ հանգչեցնել ա-
նոնց խռոված հոգիներն ու տառապած
սրտերը: Անիկա իրագործելու համար պար-
տաւոր ենք սակայն մեր ուսերուն առնել
Քրիստոսի լուծը:

Իւրաքանչիւր կրօնքի հիմնադիր որոշ
պարտաւորութիւններ սահմանած է իր հե-
տեւորդներուն վրայ: Անոնք պարտաւոր են
հետեւել իրենց վարդապետին դրած կանոն-
ներուն՝ որպէսզի կարենան վայելել այդ
վարդապետութեան խոստացած բարիքները:
Հրէական կրօնքին լուծը՝ օրէնքն էր:
Հրեայի մը համար կրօնքը համապատաս-
խան էր ծանր բեռի մը. ան հաղել կրնար
իր ուսերուն վրայ շաղկել դայն: Հրեայ Ժո-
ղովորդը իր ամէն մէկ քայլափոխին կաշ-
կանդուած կը մնար օրէնքի պահանջներով:
Հասարակ մարդիկ, իրենց վիճակէն յուսա-
հատ, կը փնտռէին Աստուած մը որ Մով-
սիսական օրէնքներէն թեթեւ լուծ ունենար:
Քրիստոս այս տեսակի մտախնթիւն ունե-
ցող մարդոց կը խոստանար իր լուծը՝ որ
աղցր էր ու թեթեւ:

Իարբնական օրէնքներուն անխարկելով,
Եիսուս կ'ըսէր. «Մանր եւ տանելու դժուար
բեռներ կը կապեն ու կը դնեն մարդոց ու-
սերուն վրայ եւ իրենց մատով չեն ուղեր
գանոնք շարժել: Քրիստոս իր մեծ հրաւե-

բով շարժեց Հրէական կրօնքի հիմը և մարդկութիւնը ձերբազատեց օրէնքի նեղ կաշկանդումներէն:

Աւանդութիւնը կ'ըսէ թէ հիւսն Յիսուս ամենալաւ լուծ շինողն էր ամբողջ Գալիլիոյ մէջ: Գիւղացիներ հետու վայրերէ կուգային Յիսուսի մօտ, անոր շինել տալու համար իրենց եղներու լուծերը: Անկասկած որ վարդապետը իր լուծին պատկերը վեր առած է Նազարէթի իր խանութէն:

Քրիստոսի լուծը մարդկային բնութեան յորժարող բնութիւնն է: Ան մեզի չի մատնէր անբնական դոյալիճակներու: Քրիստոնէական լուծը դառնութիւն չէ մեր կեանքին, բողոքականակը՝ ան բնութեան յորժարող լուծ մըն է: Քրիստոսի լուծը սիրոյ և հաւատքի լուծն է: Ան մեր վրայ դրուած է իրրեւ արտայայտութիւն աստուածային սիրոյ:

Քրիստոսի լուծը երգի կը վերածուի երբ մենք իրարու կապուինք և զիրար սիրենք աստուածային սիրոյ: Ան որպէս օրէնք չի ներկայանար մեզի, այլ իրրեւ կեանքի չորհորհրդ: Քրիստոսի լուծը հաւատքի ու սիրոյ կեանքն է, որ խաղաղութիւն կու տայ մեր հոգիներուն:

Այս այն խաղաղութիւնն է զոր Տանգէ որոնած էր: Կը պատմուի թէ օր մը հանճարեղ բանաստեղծը և մեն միտիկը վանքի մը դուռը կը բախէ: Ճգնաւոր վանական մը դուռը բանալով հարց կու տայ. «Ժո՛նջ կ'ուզես»: «Նաղաղութիւն» բառը կ'ըլլայ Տան-

գլի միակ պատասխանը: Մենք պէտք չունինք վանքերու մէջ փնտռելու խաղաղութիւնը, որովհետեւ Քրիստոս այդ վանքերը մեր ներսիցին փոխադրած է. այլ խօսքով, մենք խաղաղութիւն կ'ունենանք երբ Քրիստոսի ներկայութիւնը ունենանք մեր անձերուն մէջ:

Հեղիաթի մը համաձայն, նախապէս թոշունները առանց թելի էին. երբ Աստուած դանդաղ թելերով օժտեց, ըմբոստութիւն յառաջ եկաւ, քանի որ նոր թելերը ծանր ընդ թուեցան անոնց. բայց երբ թոշունները ընդունեցին այդ բոլոր, անոնք թոշկով երկինք բարձրացան:

Քրիստոնէական կրօնքը զոր մենք կը դաժանինք, որով պարտաւորութիւններ կը դնէ մեր վրայ: Մենք ստիպուած ենք գործադրել Յիսուսի վարդապետութեան սկիզբունքները, եթէ երբեք կ'ուզենք անոր բարեգործութիւնը ապագային վայելի: Եթէ Քրիստոսի լուծը դարձնենք մերինը և հետեւինք անոր կեանքի օրինակին, վստահ եղէք որ մտնանկից կ'ըլլանք Քրիստոսի Յարուսթեան:

Քրիստոսի լուծը մեզմէ կը պահանջէ խոնարհ սիրտ և հեղ հոգի: Ան կ'ամբար պնդէ մեր նկարագիրը ու կ'ամբողջացնէ մեր անհատականութիւնը: Աստուածային սիրով յեցուած, մեր անձը կը պայծառ կերպով և մենք կը դառնանք գործօն անգամները Հայաստանեայց եկեղեցւոյ, ի փաստ Ամենասուրբ Երբորդութեան:

ԲԱՆԳԻՆՆ ՎՐԴ. ԹՕՓՃԵԱՆՆ

ՅՈՒՆԵՍԿՈՒՆԵՐ

ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՀՈՄԵՐՈՍԸ

ԺԹ դարի շատ երգահաններ են դիմել ժողովրդական երաժշտությանը: Մեծ մասի համար ժողովրդական երաժշտությունը եղել է ինքնատիպ նիւթ, որը նրանք օգտագործել են սեփական երկերը ստեղծելու համար: Իսկ Կոմիտասը խորապէս հաւատացել է ժողովրդական արուեստի ինքնուրույն գեղարուեստական արժէքին: Նրան վիճակուած է եղել ժողովրդական երգը հասցնել համաշխարհային երաժշտութեան պատմութեան մէջ՝ դրեթէ անսխալագույն բարձունքի:

Ժողովրդական արուեստի կատարեալ իմացութիւնը եւ արուեստագէտի հանճարեղ կանխազգացումը Կոմիտասին թոյլ են տւել ժողովրդական ստեղծագործութեան անյատել ծովից ընտրել գեղարուեստօրէն առաւել վառ եւ ինքնատիպ նմուշները: Դրանցից նա ստեղծել է ժողովրդական կեանքի մի ամբողջ երաժշտական վիպերգութիւն, ի տոնականութեամբ եւ ուժով, հետաքննող ոգեւորականութեամբ եւ խոստովանող ոգեւորականութեամբ, ամենաբնորոշ քնարերգութեամբ եւ անկաշկանդ ժողովրդական հիմնորով: Այդ առումով Կոմիտասին կարելի է թերեւս համարել Հայ երաժշտութեան Հոմերոս...:

Երաժշտական արուեստի պատմութեան մէջ Կոմիտասը արտասովոր կերպար է: Նա եղել է հիւնասիկ գիտնական եւ միաժամանակ նրբազգաց, անզուգական ստեղծագործող արուեստագէտ: Ընդ որում Կոմիտասի ստեղծագործական անհատականութեան երկու կողմերը ներհակ չեն եղել, այլ ընդհա-

կառակը, փոխադարձաբար լրացրել ու հարստացրել են մէկը մէկու:

Առաջին հայեացքից, նա ասես իր առջեւ եղած շատ հետաքննողի, քան արուեստագէտի խնդիր է դրել: Այն ժամանակուայ Հայ երազանութեան համար բնորոշ՝ երաժշտական երեւոյթների խայտաբղետ յորձանջում, որտեղ ամենէն արտառոց կերպով միահիւսում էին զանազան դարաշրջանների ու դասական ժողովուրդների ազդեցութիւնները, նա փորձում էր գտնել ազգային ամենամաքուր, ոչնչով չաղարտուած ազգային լիքի: Հայրենի երաժշտութեան «աւետեաց» այդ հիմքը գտնելու ձգտման մէջ էր նա տեսնում իր գլխաւոր կոչումը, կեանքի նպատակը:

Որպէս անխռն հնագէտ կամ թերեւս նորոգող արուեստագէտ, նա խնամքով ճառարում էր զարեբրով կուտակուած խորթ լերատաւորմանը՝ բացառապէս համար ազգային երաժշտութեան նախնական էությունները: Եւ նա այդ գտնելու ժողովրդական գիշերակապ մեղմում:

Իրաւամբ Կոմիտասին է պատկանում ժողովրդական երաժշտութեան այդ հսկայական եւ ամենէն արժէքաւոր մարդի՝ գեղը-կական երգը յանձնում էր իր ամբողջ լիարժէքութեամբ:

Դժուար է գերազնահատել Կոմիտասի



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

(1869 - 1935)

դործունէութեան այդ կողմը. նրա ջանքերի շնորհիւ մոռացութիւնից եւ անդամ կորստից փրկուել է անցեալի ազգային հոգեւոր մշակոյթի անդին մարգարտը:

Ինքնորոշութեան այդ փաստը բաւական էր՝ Կոմիտասին վերապահելու ամենէն պատուաւոր տեղը ազգային մշակոյթի մի շարք խոշորագոյն գործիչներին շարքում: Բայց նա արել է աւելին: Նրա զբաղումը բանահիւսութեամբ եւ տեսական հարցերով չի կրել նեղ, ակադեմիական բնոյթ: Դրանք հետաքրքրել են նրան, ամենից առաջ, որպէս արուեստագէտի, որը ձգտում էր վերածնել անցեալ դարերի ազգային արուեստի Հայ երաժշտական աւանդոյթները, վերածնել նոր մակարդակով, արուեստաւոր երաժշտական մշակոյթի արդի պատկերացումներին համապատասխան:

Կոմիտասին յաջողուել է փայլուն կերպով լուծել այդ դժուարին ստեղծագործական խնդիրը: Նա ստեղծել է ինքնատիպ երաժշտական ոճ, որն անմիջականօրէն կապուած է գեղջկական երգի եւ Հայ միջնադարեան արուեստաւոր երաժշտութեան բնոյթի հետ:

Կոմիտասի ոճը, ժողովրդական երգի հանդէպ նրա մօտեցումը զգալիօրէն տարբեր են եղել այն սկզբունքներից, որոնք ձեւաւորուել են ԺԹ դարի եւրոպական դասական երաժշտութեան մէջ եւ մօտ են եղել արդիականութեան առաւել առաջաւոր երպահանքի որոնումներին: Ընդհանրացնելով եւ քննադատաբար վերամշակելով իր նախորդներին փորձը, Կոմիտասը բոլորովին

նոր որակ է տուել Հայ երաժշտութեանը: Կոմիտասի ստեղծագործութիւնը ասես բացել է ազգային երաժշտութեան անցեալ դարերի աներևոյթ հեռուն, տարել զէպի նրա սկզբնաւորման բուն ակունքները եւ միաժամանակ ուղղուած եղել զէպի ապագան, անխղճօրէն կապուած համաշխարհային եւ բաժնական արուեստի դարգացման նոր դարաշրջանի հետ: Դրանում է հենց Կոմիտասի կատարած դերի պատմական անանց նշանակութիւնը, որով նա դարձաւ Հայ դասական երաժշտութեան հիմնադիրը:

Կոմիտասը ստեղծագործական ասպարէզ է մտել երաժշտական արուեստի համար մի շատ դժուարին ժամանակ՝ սկսուող ճգնաժամի, աւանդական շատ պատկերացումներին բեկման շրջանում: Այդ պայմաններում նորը միշտ չէ որ եղել է առաջաւորի հոմանիշ, իսկ նորի որոնումները մասամբ կրել են ձեւական-ինքնաբաւ բնոյթ, երաժշտական արուեստը տանելով զէպի անէլանելի փակուղիներ: Նորարարութիւնը յանուն նորարարութեան՝ բարոյական վնաս իտէալներ ունեցող այնպիսի արուեստագէտի համար, ինչպիսին միշտ եղել է Կոմիտասը, ի հարկէ ոչ մի իմաստ չի ունեցել: Երաժշտական նիւթի կազմակերպման նոր սկզբունքները բխել են ժողովրդական արուեստի, ժողովրդական երաժշտութեան էութենայից աւել լրիւ եւ խոր կերպով հասնելու եւ այն արտայայտելու ձգտումից: Եւ ինչպէս ցոյց է տուել պատմութիւնը, դա եղել է մեր ժամանակի երաժշտական արուեստի իսկական նորոգման ամենազորեղ ուղիներից մէկը:

ԳԷՈՐԳ ԳԵՕՐԴԱԿԵԱՆ

Երեւան

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Վաստակաբեկ ժողովրդի տրտունջը կայ քո երգերում,
Կեանքի, սիրոյ յաւերժական շունջը կայ քո երգերում:

Հորովելները թախծալուր, զնգոցն ու փայլը գերանդու,
Մեր լեռնային արշալոյսի գով շունջը կայ քո երգերում:

Անմեղ ծիծաղը, որ ազի արտասուքով էր ոռոգուած,
Մեր արնացօզ ծաղիկների վառ փունջը կայ քո երգերում:

Զկայ գիշեր առանց լուսնի, չկայ հնձուր առանց եարի,
Մեր լեռնային արշալոյսի գով շունջը կայ քո երգերում:

Սրնգի ձայնը մեղրածոր, հաքսանիքի ազմուկն ուրախ,
Ազգատութեան ու կարիքի մռունջը կայ քո երգերում:

Պանդուխտների անդարձ ուղին, հաքսի մորմոքը մենաուր,
Անհառ, անմար կարօտների մրմունջը կայ քո երգերում:

Դու տփնաւթեան սիրոյ երգիչ, դու խորթ էիր հին աշխարհին,
Ոսկաւ գահեր հաստատող մի տուն չկայ քո երգերում:

Դու հաբազատ ես իմ ճարտար ու տփնաջան ժողովուրդին.
Դարերի գանձը մեզ բերող կամուրջը կայ քո երգերում:

Ազբիւրի պէս կարկաչելով կ'երթաս քո ծովն ապագայի,
Անմահական գարուն ես դու, աշուն չկայ քո երգերում:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

«Այն ամբողջ կոնսերվատորիա է նա».
այսպիսի էին ընտելացրել ժամանակակիցները
կոմիտասին:

Ինքնատիպ կոմպոզիտոր, երաժիշտ-մը-
տաժող, ժողովրդական երգերի անխնջ
հաւաքող, ոգեմնչուած երգիչ եւ երգչախմ-
բի վարիչ, մանկավարժ եւ լուսաւորիչ-
արտակարգ բազմաշնորհ էր Կոմիտասի ըս-
տեղծարարական անձը: Նրա բազմաբեղուն
եւ արդիւնաշատ գործունէութիւնը Հայ ե-
րաժշտութեան պատմութեան մէջ մի ամ-
բողջ դարաշրջան կազմեց եւ իր նշանակու-
թեամբ երաժշտական սահմաններէջ հեռու
տարածուեց:

Կոմիտասը խորապէս գիտակցել է ժո-
ղովրդական երաժշտութեան՝ որեւէ ժողո-
վուրդի մշակութի ինքնատուութիւնը հաւ-
տասող նշանակութիւնը: Ժողովրդական ե-
րաժշտութիւնը նա բարձր էր գնահատում
նաեւ որպէս կոմպոզիտորական արուեստը
զարգացնելու միջոց: «Ժողովրդական երգը
կոշտած է մեծ դեր խաղալու ապագայի ու-
ղիւ երաժշտութեան ճանապարհը գծելու
գործում»,- գրել է նա, արդէն իսկ ճանա-
շած լինելով ԶԻ-րդ զարաւակիցի եւրոպա-
կան երաժշտական արուեստը:

Դեռեւս պատանեկան տարիներէջ, ար-
տասովոր եռանդով տրուելով ժողովրդա-
կան երգեր հաւաքելուն, նա բացայայտեց
Հայ ժողովրդական երաժշտական ստեղծա-
գործութեան անճանաչ շերտեր, յարմար-
եցուեց այդ վաղեմի արուեստի զարգախա-
նական-յուզական բովանդակութեան եւ ար-
դայաբոլորմիջոցներէ ողջ բազմապատե-
թիւնը, նրա ոճը: Իր ազգայրական ժառան-
գութեամբ Կոմիտասը խոշորագոյն աւանդ-
մունեց Հայագիտութեան բնագաւառը եւ
զգալի ներդրում կատարեց նաեւ համաշ-
խարհային երաժշտական ֆոլկլորում, հա-
լոտացնելով այն մի պատկանելի հատուա-
ծով՝ աշխարհի բազմազգ ժողովուրդներէջ
մէկի երաժշտութեամբ, որն օժտուած է
սպիտակի վառ նկարագրով:

Հպարտութեան ֆոլկլորի մի շարք
հնազոյն եւ բարձրարուեստ նմուշներէ վե-

րականդունացումը Կոմիտասի կողմէջ՝ ի-
րաւացիօրէն հաւասարեցում է պատմա-
մշակութային խոշոր յայտնագործութիւն-
ների: Երաժշտական ազգագրութեան ընա-
զաւառում Կոմիտասի նշանակութիւնն ա-
ռանել եւս մեծացաւ նրանով, որ Հիմնովին
իմաստաւորելով ժողովրդական երաժշտու-
թեան օրինաւորութիւնները, Հայ երաժ-
տական ֆոլկլորի մասին գրած իր յօդուած-
ներով նա սկզբունքային նոր ու կարեւոր
շատ բան մտցուց ժողովրդական ստեղծա-
գործութեան վերաբերող գիտութեան բնդ-
հանուր մեթոդաբանութեան մէջ:

Ժողովրդական երաժշտութիւնը հիմք
ծառայեց Կոմիտաս-կոմպոզիտորի ստեղ-
ծագործութեան համար: Կոմիտասը տոտա-
կարգ կերպով բարձրացրեց ժողովրդական
երգի մշակումը կոշտող դեղադիտական նը-
շանակայելութիւնը: Նրա մենեբրգային ու
խմբերգային մշակումներում նկատելի է ժո-
ղովրդական ստեղծագործութեան կենսա-
կան դորութեան եւ բնորոշ առանձնաշատ-
կութիւնների զգացողութիւնը, բայց եւ
յարդգ զւուրմ է՝ ժողովրդական նիւթի վը-
րայ կոմպոզիտորի ստեղծագործական անդ-
հատականութեան զօրեղ ներգործութիւնը:

Դրա շնորհիւ ժողովրդական պարզուկ
երգերը Կոմիտասի գրչի տակ վերածուել են
զրամատիկական մենախօսութիւնների (Աւ-
տուրի, Միրաբի ծառ, Ալագեազ բարձր աւ-
րին), ոգեբերական կամ, հակառակ՝ ու-
րախ սերային պատմաների (Գարուն ա,
ձուն ա արել, Քելէր, ցալէր իմ Խարը, Հօյ
Նազամ), պեղնուկի աշխատանքին նուիր-
ուած ձօների (Գութանիբ, Կալիբ Էւ
սայլիբ, Լուռ Խորովի), նահապետական
ձէսերը նկարագրող ծաւալուն կտաւների
(Առաւօտուն բարի լալ, Հարսանեկան շա-
րերգեր, Վիճակի երգեր), ինչպէս նաեւ՝
կենցաղային բնութագրական պատկերների
(Գեղընկ պարերգերի շարքը) եւ այլն:

Գեղընկաստական բարձր արժէք ունեն
նաեւ Կոմիտասի՝ Հոգեւոր երգերի մշակում-
ները, երգեր՝ որոնք նա գրի առել կամ վե-
րականդնել էր իրենց երբեմնի ժողովրդա-

կան կերտումներով (այդ մշակումները մէջ է նրա «Պատարագ»ը, արական խմբի համար դրուած ընդարձակ մասան)։ Անշուշտ, կոմպոզիտորի տաղանդն երեւան է եկել նաեւ ունիպիսի ստեղծագործութիւններում, որոնք անմիջական կապ չունեն ժողովրդական ակերտագրիւրի հետ (անաւարտ Անուշ օպերայի հատուածները, Քաղաքալարում քնան վնասները կոմիկական պատկերները, Առ գետն Բարեկցաց սաղմոսը, Ուր ես գալիս, ա՛յ գարուն խմբերգային պոէմը եւ այլն)։

Այս բոլոր գործերում խորապէս տպաւորէ կերպարներով ներկայացուած են Հայաստանի ժողովրդի կեանքի խիստ ինքնատիպ էջեր։ Դրանցում յուզականութիւնը ազնուօրէն դուստ է, արտայայտւում՝ պարզ, բնութագրական ազգային լեզուն թարմ է, երաժշտական ձեւը կատարեալ, յիշուած։ Գոյներն ու երանգներն նրբութիւնը եւ շարադրանքի թեթեւութիւնն ու նրբագեղութիւնը ընդգծում են բովանդակութիւնը, խմբերգերում բարձր կատարելութեամբ է ներկայացուած ակապելլա դրութեան արուեստը։

Կոմիտասը վճռականօրէն մերժեց կոմպոզիցիայի աւանդական միջոցները։ Իր շատ երկերում նա կիրառել է հարմոնիայի եւ պոլիֆոնիայի բացառիկ ինքնատիպ, եւ այն ժամանակուայ եւրոպական երաժշտութեան համար նորութիւն հանդիսացած ճշմարտ, որոնք արտակարգ թարմ հնչում են տուել այդ երկերին։

Կոմիտաս-կոմպոզիտորը Հայ երաժշտութեան դասական հեղինակ է։ Միաժամանակ, նա համաշխարհային երաժշտական մշակութի խիստ հետաքրքրական ու ինքնատիպ երեւոյթներից է, որ մինչեւ հիմա, դժբախտաբար, դեռ քիչ է ճանաչուած։

Հայրենի երաժշտագետները Կոմիտասի կեանքը յաճախ բնութագրել են նաեւ որպէս սխրագործութիւն։ Այդ բնութագրութիւնն ակնարկում է ոչ միայն Կոմիտասի երաժշտական յանդուգն յայտնագործութիւնները, այլեւ այն դժուարին պայմանները, որոնք ամբողջ կեանքի ընթացքում հետապնդեցին բարձր արուեստի համար մաքառող, իր ժողովրդի երաժշտական մշակոյթ


թի զարգացման համար պայքարող արուեստագէտին։

Կոմիտասի մկրտութեան անունը Սողոմոն Սողոմոնեան էր։ Մինչեց 1869 թուականի Սեպտեմբերի 26-ին Քէօթահայում (Հայաստակ քաղաք Անատոլիայում), արուեստով շնորհուած, բայց աղքատ ծնողների ընտանիքում (Հայրն արհեստաւոր էր), Տասնմէկ տարեկան հասակում որբացաւ։ Մէկ տարի յետոյ նրան բերեցին Էջմիածին եւ ուսման տունն Գէորգեան հոգեւոր ճեմարան։ Շուտով պատանին երդի եւ երաժշտութեան արտակարգ ընդունակութիւններ երկան բերեց։ Կաթողիկոս Մկրտիչ Որմեաներ տեսնելով այդ, ամէն կերպ աջակցեց տղայի ընդհանուր եւ երաժշտական ուսմանը։ Ինտելիցում ստացած եռամեայ բարձրագոյն կրթութիւնը նրան զարժեց քաղաքում մասնագէտ։ Իսկ յետոյ՝ ճեմարանում մանկավարժական երկարամեայ հիւժիշ աշխատանք, վանքի երգչախմբի հետ անմիջապապմունք։...

Էջմիածնում Սողոմոնը հոգեւոր կոչում էր ընդունել։ Հենց այս առիթով էլ ստացել էր Դ-րդ դարի Հայ Նշանաւոր երաժիշտ ու ճարտարապետի անունից անուանւած իր նոր՝ Կոմիտաս անունը։

Նա վարդապետ էր։ Բայց նա եկեղեցու սովորական սպասաւոր չէր։ Հոգեւոր կոչում ունենալով, նա չուզեց սահմանափակել իր երաժշտական — լուսաւորական, բնականօրէն զործական ու արտիստական (կատարողական) լայն գործունէութիւնը։ Իր համոզմունքներով ու գործունէութեան բուն իսկ բնոյթով նա քաղաքացի-արուեստագէտ էր բառիս լիակատար իմաստով։ Նրա գործունէութիւնն իր բոլոր բնազատներում մէկ միասնական նպատակ հետապնդեց՝ փառաբանել ժողովուրդը, վեր հանել ու ցոյց տալ նրա հզոր ստեղծագործ ուժը։ Հենց ինքն էր, որ երկար տարիների ստեղծագործական շփման արդիւնքով արտայայտուեց՝ «Ժողովուրդն է ամենամեծ ըստեղծագործողը, սովորեցէ՛ք նրանից»։

Այսպիսի գործունէութեան համար էջմիածին միջավայրը չափազանց նեղ էր։ Նա ձգտեց լայն հորիզոնների, Տեղափոխուեց



Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Գործ: ՓԱՆՈՍ ԹԵՐԼԵՄԵՅԵԱՆԻ

Պոլիս, հայկական մշակույթի խոշոր կենտրոններից մէկն այն ժամանակ, ծառայեց այստեղ լայն գործունէութիւն:

Նա շարժողեցրեց Պոլսում իրականացնել իր մտադրութիւնը՝ ազգային կոնսերվատորիա բանալ: ազդի «մեծամեծները» շնորհապատեցին գործին, ասեմք, Թրքական բռնապետութեան պալատներում նա հնարաւոր էլ էլէր: Բայց, նա ամէն տեսակի խռրովներէ յաղթահարելով, կարողացաւ ոչ միայն ստեղծագործել ու հազարաւոր ժողովրդական երգեր հաւաքել, այլեւ իր կազմած բաղամարդ երգչախմբերով տուեց բազմաթիւ համերգներ, հանգէս եկաւ Հայրենիքում ու արտասահմանում՝ Փարիզում, Շվեյցարիայի, Ինչպէս եւ Մերձաւոր Արեւելքի քաղաքներում, ամենուր հնչեցրեց իր ժողովրդի երաժշտութիւնը, այդ երաժշտութեան իր մշակումները: Եւրոպայում նա հանգէս եկաւ նաեւ դիտական համաժողովներում, միշտ Հայ ժողովրդական, նաեւ հայկական միջնադարի արուեստաւոր երաժշտութեան հարցերի շուրջ:

Կոմիտասի այս բոլոր ելույթներն աննախադէպ յաղորդութիւն դառն: Քննադատները երբեք ու խմբավար Կոմիտասին նոյն իսկ դերբնական յատկանիշներ վերագրեցին: Հայրենիքից կտրուած Հայերն ամենուր ասացին՝ «Կոմիտասը մեզ Հայաստան բերեց»: Նրա համերգներն ու դրոշմները նպաստեցին Հայ ժողովրդի ցրել դանդաղածները ազգային ժառանգման, նրանց ազգային դիտակցութեան արթնացման ու բարձրացման: Կոմիտասի ստեղծագործութիւնները, Հայ երաժշտութեան տեսութեան ու պատմութեան բնագիտական նրա դիտական եղբայրանդամները արժանապատեան եւրոպական խոշոր հեղինակութիւնները բարձր գնահատականին:

Այսպէս, գեռեւ ՁՈ՛ական Թուականներին վերջին, Կոմիտասի գերմանացի ուսուցիչները նրան գրում էին. «Ձեր խորապէս մտածուած դասախոսութիւնների միջոցով դուք մեզ խորունկ հայեացք ձգել տուեցիք՝ դէպի այն երաժշտութիւնը, որը մեզ ցարդ պիտի անյայտ էր եւ որը մեզ արեւմտեաններէ շատ խոշոր էր ուսուցանել: Դուք արդի դիտութեան անպիսի ծառայութիւն կարող էք մատուցանել, եթէ Ձեր աշխատութիւնները հրապարակէք»:

Կոմիտասի Փարիզի համերգներէ մասին (1906-1907), ուր կատարուել էին նրա Հայ գեղջուկ եւ հոգեւոր մեղեդիների մենբրային եւ խմբերային մշակումները, «Սրտը Թերթը գրեց». «...Մենք ըմբռնեցինք բնականաբար իսկ համը եւ զմայլեցանք դաշնակումին վրայ, որ նոյն ինքն կոմիտաս վարդապետը բարձր հմտութեան եւ հանճարաւորութեան գործն է: Ու նուազ չաքանչաքանք Կոմիտաս վարդապետի տաղանդին ու հմտութեան վրայ կեղեցական երգերուն մէջ՝ զոր ինքն իսկ երգեց ձայնով սը, որուն հնչիւնը՝ խորապէս արտայայտուի, որտեղ կը ցնցէր...»:

Այդ նոյն օրերին, նոյն ատեղծագործութիւնների ծանօթացել եւ զրանցով հիացել են Վեհապետ զ'էնդին, Կլոդ Դեբիւսսին, Մ. Ռաւելը, Ծ. Շոպենը, Դ. Դե-Սեպիւրը, Ա. Ռուսսելը, Բուրգոմ-Յալովուրդէն, Ռ. Ռոյլանը, եւ ուրիշներ: Յայտնի է Դեբիւսսիի կարծիքը, երբ նա միայն «Անտուան» երգի հիման վրայ Կոմիտասին բնութագրելի որպէս մեծ ստեղծագործող: Մի չաքաւ նշանաւոր երաժիշտներ մէկից անելի անգամ նշել են այդ գլուխաւորութիւնների դիտական բարձր արժէքը, որոնք Կոմիտասը կարգաց միջնադարին երաժշտական ընկերութեան 1911 թուականի Փարիզի համաժողովին, երբ նրա հոգեւոր գործերի համերգն եւս դնահատուեց որպէս համաժողովի բոլոր համերգներից ամենապարտաւոր:

Այսպէս Կոմիտասը արարածուած էր Կոմիտասի՝ որպէս ինքնատիպ կոմպոզիտորի եւ երաժիշտ դիտականի համբար: Բայց Առաջին Համաշխարհային Պատերազմի տարիներին, երբ Կոմիտասի գործունէութիւնն էլ անպատեհիտէր բնահատուեց, այս բոլորը մոռացութեան տրուեց: Կոմիտասի գործունէութիւնը ընդհատուեց 1915-ի սղբերգական իրադարձութիւնների հետեանցով, երբ տեղի ունեցաւ իր գաղմարութեամբ մարդկային ողջ պատմութեան:

թեան մէջ չըսուած ցեղասպանութեան ակաբը՝ Երիտասարդ Թուրքերի կառավարութեան կարպազութեամբ ոչնչացուեց Արեւմտեան Հայաստանի բնակչութեան մեծագոյն մասը։ Թէեւ Կոմիտասին աջակցող միջոցառումներով վերագործարկին Կ. Պոլիս, բայց տեսածի ու վերապրածի տպաւորութեան տակ նրա հոգեկան հաստատարակաւորութիւնը խախտուեց, երեւան եկան նաեւ հոգեկան հիւսաղորդութեան նշանները։

Բուժելու նպատակով Կոմիտասին փոխադրում են Փարիզ, բայց բժշկականութեան միջոցները զբաղան արդիւնք չտուեցին։ Դեռ երկար տարիներ Կոմիտասը հոգեկան հիւսաղորդութեամբ ապրեց Փարիզում։ 1935 թուականի հոկտեմբերի 22-ին, 66 տարեկան հասակում նա վախճանուեց։ Թաղուած է Երեւանում, գերեզմանը ու արուեստի գործիչների պանթէոնում։

Կոմիտասի՝ հանճարով օժտուած երաժշտի ու գիտնականի կեանքը, որ լինէր անխոնջ աշխատանքով ու պայքարով, ամոնացող նուիրուած էր հարգաւոր ժողովրդին։ Նրա արուեստին։ Կոմիտասի ազգայնական աշխատանքները Հայ երաժշտութեան զարգացման համար մեծական դեր կատարեցին, քանի որ այն ժամանակ, Հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի մեկնարկն չբացուած, համաշխարհային դասական երաժշտութեան փորձը մարմնաւորելուց լացի, պահանջում էր նաեւ ստեղծագործարար իւրացնել ազգային — ժողովրդական արուեստի դարաւոր աւանդութիւնները։ Նրա ստեղծագործութիւնները Հայերի երաժշտական նոր մշակոյթի զարգացման համար լայն հեռանկարներ բացին, քանի որ դրանք Հայ երաժշտութեան մէջ ներդրեցին աւանդութիւնների վրայ հիմնուած, բայց ժամանակակից կոմպոզիտորական արուեստի միջոցներով հարստացած երաժշտական լեզուն, ցոյց տուին այդ երաժշտութեան հետագայ զարգացման ճանապարհը։

Պատմական այս կարեւոր դերը կատարելով հանդերձ, Կոմիտասի ստեղծագործութիւնները բնաւ չխառանցին եւ իրենց դեղարուեստական պարզութեան մէջ գնալով շարունակ աւելի փայլում են թարմութեամբ ու ինքնատպութեամբ։

Երեւան

Վերջին տասնամեակներին Կոմիտասի երգերը աւելի ու աւելի յաճախ են հնչում Հայաստանից դուրս։ Հայ երաժշտութեան տասնօրեակներին կամ սովորական համերգներին, Հայ երգչախմբերի կատարմամբ Կոմիտասի խմբերգերը բազմիցս հնչել են Մոսկուայում եւ Բալթիկ ունկնդիրներին ու մասնադէտների անկեղծօրէն խոնարհեցրել կոմպոզիտորի մեծ արուեստի առաջ։ Արտասահմանի մի քանի ակադեմիկոսները հանդէս են գալիս որպէս Կոմիտասի մենեջերներին հիւսաղորդներ։ Մոսկուայի Միութեան մէջ, Եւրոպայի շատ երկրներում եւ Ամերիկայում Կոմիտասի ստեղծագործութիւնները փոխադրուած վիճակում մեծ բաւականութեամբ ունկնդրուել են Մոսկուայի լաւագոյն լարային կուլտուրայից մէկի՝ Կոմիտասի անունը կրող Հայաստանի պետական կուլտուրի կատարմամբ։

Այս բոլորը Կոմիտասի ստեղծագործութիւնների մէջ նոր՝ երկրորդ կեանքի սկիզբն է։ Թէեւ Կոմիտասի երկերը դեռեւս թարգմանուած չեն աշխարհի տարբեր ժողովուրդների լեզուներով, բայց կասկածից վեր է՝ երբ դրանք մատչելի դառնան միջազգային երաժշտական (կատարողական եւ ունկնդիր) լայն հասարակութեան, առաջ կը բերեն հեղինակի, նրա ստեղծագործութեան եղանակի նկատմամբ աւելի եւս մեծ հետաքրքրականութիւն։

Հայաստանում Կոմիտաս անունը պաշտօնաբար է համաժողովրդական ջերմ սիրով ու կրօնազէյն յարգանքով։ Կոմիտասի երաժշտական, — գրական մեծ ժառանգութիւնը, որի մի փոքր մասը նա կարողացաւ հարստարկել եւ որը նրա հիւսաղորդեան սկզբնական շրջանում բաւական ցրիւ եկաւ, այժմ աստիճանաբար յայտնաբերուած, հաւաքուիլ եւ, իւրօրինակութեամբ է։

Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիան ձեռնարկել է Կոմիտասի երաժշտական ստեղծագործութիւնների, գիտական ու աղագորական աշխատութիւնների 12 հատորանոց ժողովածուի հրատարակութեան, որի երրորդ հատորը լոյս կը տեսնի մեծ երաժշտագէտի մենագիտական 100-ամեակի օրերին։

ՌՈՒՆԵՐՏ ԱՍՍԵՅԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

•

Քո երգերում՝ փարփարոտ
 Հերկերի մէջ անջրդի,
 Հատ-հատ ցոբեն են ցանում
 Որպէս յոյս ու յիշատակ.
 Քո երգերում՝ ամօթխած
 Հարսը իր ծոցն է բացում,
 Պառկած դէզին, աստղալոյս
 Գիշերներին կապուտակ:
 Քո երգերում՝ որբացած
 Խնկի ծառերն են ծաղկում,
 Ազդիկները՝ կծերով
 Զուր են բերում աղբիւրից,
 Քո երգերում՝ ամպում են
 Հայոց սարերն երազկոտ,
 Եւ ձիերն են խրխնջում
 Հովիտներից, ձորերից:
 Քո երգերում՝ վամֆերից
 Ազանիներն են թռչում,
 Հացի բոյր է տարածւում
 Երդիֆներից կանաչած,
 Քո երգերում՝ ճամբորդը
 Յոգնած նստում է ֆարին,
 Նրան պէտք է մի թաս ջուր,
 Նրան պէտք է պատառ հաց:
 Քո երգերում՝ իր տանից
 Քշուած մարդն է հեկեկում,
 Քո երգերում կայ կորուստ
 Հայրենի տան ու ծառի,
 Քո երգերում կայ թախիծ,
 Եւ կայ անմեղ մի բողոք,
 Եւ տիրոջից թալանած
 Մայիւնը՝ ուլ ու գառի...
 Քո երգերում՝ հորովելն
 Երկարում է ծխի պէս,
 Եւ սարերի լանջերին
 Լոյսն ու մութն են համբուրում,

Քո երգերում՝ եղեգնեայ
Սրինգներն են սլսում,
Մեր դարաւոր, մեր յոգնած
Խենդ գետերի ափերին:
Քո երգերում՝ սայլերը
Քար ու ծաղիկ են տանում,
Արեւի շողն են տանում
Խրճիթներին հողածածկ.
Քո երգերում՝ մեր երկրի
Հորիզոնն է լայնանում.
Եւ կռուկներն են չոււմ
Թւիկներով շողարձակ:
Դու դարաւոր մեր վշտի,
Մեր արթնութեան ճայնագիր
Դու ճայնաւոր մեր հոգու
Մեկամագձիկ աշտարակ,
Մեր արտերին՝ դու անձրեւ,
Մեր օճախի արդար ծուխ,
Դու արինը մեր ազգի,
Դու մեր սիրոյ պատարագ...

ՎԱՀԱԳՆ ԿԱՐԵՆՅ

Երեւան

ՀԱՅՈՑ ԵՐԳԻ ԱՍՏՈՒԱԾԸ

•

Երաժշտութիւնը համաշխարհային լեզու է: Բայց ամէն երգահան չէ որ դառնում է համաշխարհային: Բարի բնութիւնը չարութեան չափ ժլատ է երբ հաննար է ստեղծում: Անցնում ես դաշտերով՝ կանաչ-կանաչ, խոտ, խոտ, խոտ. բայց ահա մի ծաղիկ, դարձեալ խոտ, անսահման կանաչութիւն, բայց ահա մի բոյլ կակաչներ, մի աստղաբոյլ մեխակ ու վարդեր, որոնք մեկ-տարով են ողողում դաշտերի դառնութիւնը:

Կոմիտասի ծնունդը այդպէս եղաւ: Հայոց եղեռնը աչ-բով տեսած, Հայոց մեծ վշտից խելագարուած իմաստունը իր երգերով անկրկնելի է: Կոմիտասը ինքը Հայ ժողովուրդն է: Մեզուի պէս նա տուն էր բերում մեր գեղջուկ երգերի նկատարն ու անշուշտիւ մանանամ: Կարո՞ղ է մեզուն թղթէ փաղիկներից մեզը բերել. ի հարկէ՞ ոչ: Հայ ժողովրդի բազմադարեան երգերը թղթէ վարդեր չէին, այլ իրական, եւ Կոմիտասը իր հաննարով ոսկէ մեզուի նման հանդիպեց նրանց: Իր հաննարեղ ոգու հնոցում ձուլեց Հայ մեղեդու նախանիւթը, հանձնաւորեց եւ դուրս բերեց այնպիսի ֆնֆռութիւններ, երաժշտական ձեւերի եւ խօսքի այնպիսի յոյզ ու թարմութիւն, որոնք յուզեցին ոչ միայն իրեն՝ Հայ ժողովրդին, այլեւ համաշխարհային երաժշտական աշխարհում ազօթփի արժանացաւ Կոմիտասի անունով Հայ ժողովրդի անունը:

Հայ ժողովրդի ապրումները, խոհերը, վշտերը երգերի փոխարկելու համար պիտի գտնուէր այնքան մի մեծ սիրտ, որ կարողանար վերածնել գրեթէ անվերածնելին, այսինքն՝ հարկաւոր էր Կոմիտաս իւր փառահեղ եւ ծիածանաճուրք հաննարով: Մի անգամ էլ լսեցէ՛ք գութանի երգերը, նրանցից յատկապէս մէկը մի վիթխարի պոէմ է, մի անկրկնելիութիւն եւ ընդամենը մի կարճ՝ երեք թէ չորս քառեանկանի հառաչամբ, որից մարդն զգում է Սիփանայ սարերի վրայ Հայ հորովելի համբոյրի տակ բացուող հողի ակօսների հայրենաւանդ բուրմունքը, վայրի դրախտային լեռնածեքրոնի արմատների խնկաբոյրը: Կոմիտասը ինչքան ազգային է, այնքան է համաշխարհային: Ինչպէս աստուածընծայ կաւից հաննարեղ բրուտն է արցունքի կամ գինու նրբաշուրթ գաւաթներ կերտում, արարում, այդպէս է կերտել Կոմիտասը իր անկրկնելին, եւ արդէն բոլոր մեծութիւնները այդպէս են ծնում: Այդպէս է ծնուել ինքը՝ Շէյֆսփիրը, չէ՞ որ նախանիւթեր են ունեցել եւ «Օթելլո»ն, եւ «Համլէթ»ը. այդպէս է ծնուել և Կէօթէի



Կ Ո Մ Ի Տ Ա Ս

«Ֆաուսթ»ը, որի նախանիւթը բխել է ժողովրդի երազամբներէց: Ինչպէս որ ամէն մի ազգ մեծ է, եթէ իր մշակոյթն է մեծ, այնպէս էլ ամէն մի ազգ անմահ է՝ եթէ պահպանում է իր լեզուն, իր մշակոյթի ոսկէ աւազանը: Ինչպէս Մեսրոպ Մաշտոցի, Սայաթ-Նովայի, այնպէս էլ մեծ Թումանեանի եւ ահա Կոմիտասի ու ապա մեծ Խորենացու, մեծ Շիրակացու, աստուածահամնաբ Նարեկացու եւ այլոց յորելեանները կը դառնան Հայութեան անունը վեր բարձրացնող մարմարէ սանդուխներ, աշխարհով մէկ հայապահպանման մկրտութեան աւազաններ:

Ծագկատի երիտասարդի մահը նման է ծովի պորտում խորտակուող նաւի՝ դեռ չհասած իր երազների ափին: Հապա ինչպիսի դժնատեսիլ նաւաբեկութիւն է մահը կամ ցնորումը համարի, որը գտնուում էր տակաւին երիտասարդ հասակի մէջ: Եւ Կոմիտասի մահը իրաւ, նմանուեց մի ոսկէ նաւի, որը բռնաբարձուած էր Հայոց երգամշակոյթի աղամանդներով, գինդերով, մարգարիտներով, հագար-հագար անգին ֆարերով: Խորտակուող, սուգուող նաւի նմանուեց Կոմիտասի եւ Կոմիտասների կեանքը: Բայց Հայաստանը փինիկուեց առասպելական թռչունի նման, ելաւ կրակէ մոխիրներից եւ այժմ աշխարհով մէկ հնչեցնում է իր երգը, Կոմիտասի երգը...

Թէ չծնուէր մեծ Կոմիտասն իմաստուն՝
Հայ ժողովուրդն այսօր քարձր չէր լինի,
Թէ չլինէր Հայ ժողովուրդն աշխարհում՝
Կոմիտասն էլ այսօր ֆաղցր չէր լինի:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Երեսան



ԿՈՄԻՏԱՍՆ ԱՅՍՈՐ

Այսօր էլ, երբ մենք նշում ենք Կոմիտասի սուրբ ծննդեան 100-ամեակը, հակառակ այդ հարիւր տարուայ հեռաւորութեան՝ Կոմիտասը ամենապարզն է բոլոր ապրող-ներին մէջ: Բայց միաժամանակ նա շատ վաղուց է դարձել նաեւ խորհրդանշիչ:

Եւ ահա, նկատի ունենալով այն յայտնի իրավիճակը, որի մէջ է գտնուում աշխարհասփիւռ մեր Ժողովուրդը, մենք պարտաւոր ենք ասելու նաեւ՝ որ հիմա, տուեալ իրական եւ տիրական հանգամանքներում մայր հայրենիքի շուրջ համախմբուելու, արտասահմաններում Հայ համազգային ու դին կենդանի պահելու խնդրում Կոմիտասի գործը վիթխարի է:

Կոմիտասն է այն կաժուրջը, որին չի հակում ո՛չ մի զսահմանադահ՝ որով անցնելու համար չի պահանջուում ո՛չ մի չփոքաց՝ ո՛չ մի կողմից եւ ո՛չ ոքի կողմից:

Այս է Կոմիտասի առաքելութիւնն այսօր: Արծէ աւելացնել նաեւ, որ շոր չէ այս առաքելութիւնը: Մօտ վաթսու տարի առաջ, դիմելով Կոմիտասին, ականաւոր Տ. Կամաքարականն ասել է. «Անցեալ դիշեր ... երդերով ու բարբառելով ... Հայաստան ուխտագնացութեան տարիք զմեզ, կամ լաւ ես է ըսել՝ քիչ մը Հայաստան բերիք Եդիպտոսի Հայերուս. մենք կը կարծէինք թէ Հայ Պրոֆեսուրը որ էլ միածնէն կու գայ, միւռն միայն կը բերէ. դուք Մասիսն ու Արապածը փոխադրեցիք հոս պահ մը. ո՞վ ըսաւ թէ լիռները չեն քալեր...»:

Այս ար ճշմարիտ է առուած վաթսուն տարի առաջ, վաթսուտասութիւ ակելի ճըլմարիտ է այսօր, որովհետեւ Կոմիտասն այսօր վաթսուտասութիւ ակելի է շիններ քալեցնում», «քիչ մը Հայաստան» է տանում

ամենուրեք՝ որտեղ Հայաստան չկայ բայց կայ Հայ, իսկ բուն Հայաստանում էլ «եկաւ, ոիրցնել մեզ ինչ որ մերն էր, բացաւ մեր վարադուրուած աչքերը մեր սեփական արժանիքներուն առջեւ, վերադարձուց մեզի դէպի մեր հայրենի բնագաւառն ու օճախը, մեր անդն ու անդաստանը, բառիւ առարկայական թէ այլաբանական իմաստով»:

Սա էլ խոստովանութիւնն է ոչ թէ Կոմիտասի սաներից մէկի միայն (Վ. Սարգսեան), ոչ էլ միայն մէկ սերնդի, այլ մի քանի սերունդների, խոստովանութիւնն ու վրկայութիւնն ոչ միայն հառաջի Աստուծոյ եւ մարդկան», այլ «Եանդիման փորձութեան ու փրկութեան»:

Ահա թէ ո՞վ է Կոմիտասը...:

Բայց Կոմիտասը, այս ամէնից առաջ ու յետոյ՝ աւաղցիչն է, ինչպէս՝ որ է նաեւ Մեսրոպ Մաշտոցը:

Ուրեմն եւ՝ մեր պարտքը միայն պաշտամունք չէ, այլեւ ուսանել, ուսանել ո՛չ միայն իր գործից՝ այլեւ կեանքից:

Կոմիտասին լսելուց յետոյ Վիեննայի աւանաւոր դատախոսներից մէկը շատ յուզուած ասել է. «Ձեմ հակահեղուս. եթէ Աստուած Հայոց ձայնը չլսի, ապա ո՞ւմ ձայնն է շնելու»: Վերջիւնեք, որ նմանօրինակ մի ճիշ էլ արձակել է ինքը Կոմիտասը՝ իր նամակներից մէկում յայտնելով այն հոգեխաբարի միտքը, թէ ինչո՞ւ է երկրագունդը բոլորի համար կլոր եւ միայն Հայերի համար անկիւնաւոր. անկիւն՝ որի առջեւ կանգնեցնում են պատժուածին:

Եկէք ապարդիւնօրէն դուրս չջարգենք այս անեղծուածի վրայ: Եթէ մեզ համար երկրագունդը կլոր չէ, այլ անկիւնաւոր, ա-



Գրքի շնորհիվ հեղինակը

Կ Ս Տ Ր Ս Ս Ս

պա մենք պիտի ապրենք նրա ինչ-որ ան-
կիսնում, որ է հայրենիք մասնաժողով:

Ու եթէ խօսքը ապրելուն է հասել, ապա
ինչպէ՞ս չիլենք որ կոմիտասը քնում էր
չոր քաղաքի, իսկ եթէ դա էլ չկար՝ չոր
տախտի վրայ:

Եւ ուր առիթով չիլենք Փ. Թէրլէմէզ-
եանի վկայութիւնը: Փարիզում այցելելով
կոմիտասին եւ հարցնելով. «Կ'երգե՞ս», նա
իւր մտերմից ի պատասխան լսում է. «Ես
չիմա երգում եմ միայն ինձ համար»:

Սարսուղդու խօսք է:

Բայց այդպէս ասել է ... անառողջ կո-
միտասը: Եկէ՛ք ... առողջ լինենք և դէմ լի-
նենք այս աշուշտ խօսքին: Եկէ՛ք երգենք ...
ոչ մեզ համար միայն:

Կոմիտասեան ե՛ւս մի գառ:

Ինչքան կոմիտասեան է պնդում, որ ամէն ուղի

ունի իր անուրանալի եւ անշփոթելի կոկոր-
դըն ու հազազը:

Ուրեմն չմոռանանք, որ ի՛նչ լեզուով էլ
խօսելու լինենք՝ մեր կոկորդն ու հազազը
մնում է հայկական: Այլ կերպ ասած՝ ամէն
մէկս խրոփի, ամէն մէկս իր բնապատուած
ապրելիք եւ դորձենք կոմիտասաբար, ջա-
նանք ամէն կերպ նմանուել նրան՝ ամէն
ինչով:

Ամէն ինչով, բայց ո՛չ իր ... վերջով:
Եթէ կոմիտասը «սխալ է» արել, ապա դա
այն է որ ... խելագարուեց: Մենք դրա ի-
րաւունքը չունենք: Նա խելագարուեց ...
բոլորի՛ս փոխարէն եւ բոլորի՛ս համար:

Նաեւ այն բանի համար, որ մենք խել-
ներս դուրսներս պահենք՝ խելօք ապրելու,
խելօք դորձելու եւ խելօք մեռնելու՝ յա-
նուն այն ազդի, որ կարող է կոչուել ...
կոմիտասեան:

ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Երեւան



ԹՈՌԱՆ ՊԱՏԿԱՌԱՆՔՈՎ

Վերջերս Ջանգեզուրում պատահեցի մի մարդու: Մի ֆանի մամուռ մաշած, գրեթե ջնջուած ֆայլոզ մի մատուռ: Հարցրի տարիքը: Հարկւրեքեք էր:

— Յովհաննէս Թումանեանից էլ մեծ ես, ասացի:

— Մեծ եմ, բայց նա յաւիտեանութիւնից է գալիս: Նա իր ապրած ժամանակ էլ ինձ քուտ էր քէ իմ պապն է: Աչքս բաց եմ արել «Մի կաթիլ մեղր»ը բերանումս, «Շունն ու կատուն» աչքիս տուաջ, «Հին օրհնութիւն»ը ականջիս մէջ: Երիտասարդ չեղաւ, բայց երիտասարդ ... լեզուս չի բռնում ասեմ ... շողֆն ու շունչը կայ ... խօսքն ու խրատը կայ, խելֆն ու խորհուրդը կայ, բոյրն ու բուրմունքը կայ, ցանն ու ցնորքը կայ, բայց ինքը ... չկայ: Այսինքն կայ, բայց իր լինելը չի գգում:

— Իսկ դուք իրեն տեսե՞լ էք, — հարցնում եմ: — «Էն գիլ ձէնեքն եմ միմակ իմ ականջում մնացել...»:

Մարդ—մատուռը մնաց իր յուշերի հետ, իսկ ես ընկայ իմ մտքերի ետեւից:

Ու միտք եմ անում. եթէ մի հրաշքով Թումանեանը բարձրանար գերեզմանից, մենք հասակակիցներ կը լինէինք: Եւ դարձեալ նա իմ պապը կը լինէր: Ես նրա հետ կը խօսէի քոռան պատկանաւորով, նա ինձ հետ՝ պապի իրաւունքով: Պետրոս Դուրեանը տասնութ տարով մեծ էր, բայց նրա էլ պապն էր: Հանգիստը Արովեանին, հաչատուր պիտի ասէր: Սայաթ—Նովային պիտի ասէր Արութին, Գուշակին՝ Նահապետ եւ Նարեկացուն՝ Գրիգոր: Ինչո՞ւ է մեզ այդպէս քուտ: Ինչո՞ւ է այդպէս...: Այդպէս է քուտ եւ այդպէս է, որովհետեւ անտէր տան տղաները մանկութիւն չեն ունենում, երիտասարդ չեն լինում, շուտ են այրանում:

Յովհաննէս Թումանեանը ծնուեց անտէր—անտիրական մի Հայաստան աշխարհում, իր նախնեաց աւերակների վրայ:

Ուտքը հոգին դրեց քէ չէ, նա իր ուսերին առաւ այդ աւերակների վրայ ապրող գարկուած ու գրկուած Հայ ժողովրդի հոգսերը: Եւ որպէսզի հոգար ժողովրդի կարիքները, ապրելու, ամբողջանալու, գոյատեւելու ոգի տար նրան, հարկաւոր էր ճանաչել նրան, իմանալ նրա ծագումը, կենսագրութիւնը, նրա բնութիւնը, տիպը, հոգին, առաքինութիւններն ու ակնկալութիւնները, նրա տեղն ու կշիռը ժողովուրդների պատմութեան մէջ: Եւ նա գնաց. գնաց քափառելու «հին ժամանակների յուշերի ու մշակութային մէջ, անցած—գնացած առեղծուածային աշխարհի բնութիւն, հեռացած—մոռացուած աստուածների հետ»:

Յետոյ ետ գալիս, նախապարհին տեսաւ իր ժողովրդի արած մեծամեծ գործերը, մեծամեծ ֆաջութիւնները, տեսաւ նրա թռիչքներն ու անկումները, տեսաւ նրա օրհասական կռիւները Ասորեստանի, Պարսկաստանի, Յունաստանի, Բիւզանդիոնի դէմ, տեսաւ Թուրք-Թաքար, Մոնկոլ ցեղերի ասպատակութիւններն ու առեւանգումները: Տեսաւ, հըպարտացաւ, գայրացաւ, յուսալուեց, ինքնիրեն յուսադրեց, հասաւ Լոռի, այնտեղ, որտեղից գնացել էր եւ որտեղ ծնուել էր ու մեծացել: Լոռում նստեց, մտքերն ի մի բերեց: Տեսաւ որ օտարների ոտի կոխան իր ժողովուրդը դառնացել է, փոխել է իր տիպը, հոգին, լեզուն, բնութիւնը, բայց կառուցելու իր կորովը, որ իր տոհմիկ յատկութիւնն էր, պահել է...: Եւ սկսեց իր մեծ արուեստի շինարարութիւնը: Շինեց մի նոր անկրկնելի Լոռի-Հայաստան: Եւ այդ Լոռի-Հայաստանը աշխարհի մեծ արուեստի դոհերից ներս տարաւ: Պուշկինով հարստացաւ, լցուեց Շէյքսպիրով եւ դարձաւ Հայոց Շէյքսպիրը: Եւ ինչպէս Գարլայլը Շէյքսպիրի մասին է ասել, մենք էլ մեր Թումանեանի մասին ենք ասում. «Այլեւ ոչ մի հայկական թագաւոր չի կարող էդ ցեղի վրայ տարածել իր իշխանութիւնը եւ իր գայիսոնի տակ պահպանել նրա ազգային միութիւնը: Եւ միմիայն մի թագաւոր կայ, որ կարող է ու կարողանում է տիրել համատարած հայկական ցեղին ամէն տեղ, ու պահպանել նրա ազգային միութիւնը, որտեղ էլ նրանք չեն, — դա Թումանեանն է»:

Թումանեանի արուեստը մի տիեզերք է, որտեղ ամէն մի սերունդ իր համար գտնելու է նոր համաստեղութիւններ:

ՀԱՄՕ ՍԱՀԵԱՆ

Երեւան

* * *

Թէպէտեւ բախտը մեզ շատ հարուածեց
 Երկար դարերով, ահեղ հարուածով,
 Թէպէտեւ էսպէս ցրուեց, տարածեց,
 Զըգեց հողէ հող, փրոեց ծովէ ծով,

Վկայ է սակայն բովանդակ երկիր,
 Որ մենք կարեւի՛ր ապրում ենք կրկին,
 Եւ ուր հասնում է Հայի գիրքն ու գիր-
 Կենդանի է դեռ Հայութեան ոգին:

Եւ թարմ ազմուկով մանկունք մեր մատաղ
 Առաջ են խաղում լուսաւոր տենչով,
 Եւ թնգում են դեռ Հայի երգն ու տաղ
 Հարագատ լեզուով, հայրենի շնչով:

Եւ իր փլատակ տների տակից
 Ելնում է ահա հզօր ժողովուրդ,
 Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,
 Խորունկ հայեացքում մեծ կեանքի խորհուրդ:

Ով դու սրբազան Մասիս, Արագած,
 Էդ ձեռ երկնամուխ գոհար թագերով,
 Եւ, որ նրանցից վերեւ խոյացած
 Փայլատակում է՛ք լոյս-պըսակներով-

Սահակ ու Մեսրոպ, եւ շատ պանծալիք,
 Որ լըցրիք Հայոց աշխարհին ու սրտեր
 Լուսաւոր կեանքի սիրով երջանիկ
 Ու ձրգտում տուիք- ձրգտել դէպի վեր,

Քանի որ դուք կաք, քանի կը մնաք,
 Հոյակապ սիւներ Հայութեան ոգու,
 Մենք միշտ անսասան առաջ տի գնանք,
 Ինչքան մեր մամբան լինի ահարկու:

Եւ տօն կը տօնենք էսպէս խնդագին,
 Եւ թող իմանայ բովանդակ երկիր-
 Ապրում է անմեռ Հայութիւնը հին,
 Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(1893)

ՍՒԱԻՈՐՈՂ ՈԳԻ

Թումանեանը սիրում էր կրկնել Անգլիայի նշանաւոր քննադատ Գարլայլի խօսքերն այն մասին, թէ աշխարհով մէկ տաքածուած, նոյնիսկ տարբեր աշխարհամասերում ինքնուրոյն պետութիւններ հիմնած անգլիական ցեղի վրայ իշխող, նրա ազգային միութիւնը պահպանող միայն մի ղեկավար էր։ Եւ դա Շէյքսպիրն է։ Այո, արուեստի հանճարեղ վարպետները, արտայայտելով իրենց ժողովրդի ոգին եւ ճրատումները, դառնում են նրա ազգային նշակարարի լաւագոյն զօնրի խոսացման եւ պահպանման հզոր ուժ։ Առաւել եւս դա վերաբերում է Հայ ժողովրդին, որը պատմական ճակատագրի բերումով զրկուել է միասնութիւնից, մասնատուել եւ ցրուել է աշխարհով մէկ։

Յովհաննէս Թումանեանն աւելի քան որեւէ ուրիշ Հայ գրող, իր ստեղծագործութեան մէջ կրում էր ազգային միաւորման այդ մեծ ոգին։ Նա իրական ազգային բանաստեղծ էր ոչ միայն հարազատ երկրի ու ժողովրդի պատմական անցեալն ու ներկան ամենայն լայնութեամբ ընդգրկելու առումով, այլեւ մանաւանդ, իր քաղաքիկ խոր եւ իմաստուն հայրենասիրութեամբ։ Թումանեանին խորթ էր Հայ ժողովրդի երկու մեծ հատուածներին՝ արեւելահայութեան եւ արեւմտահայութեան, նրանց մշակոյթի եւ զրականութեան որեւէ հակադրութիւն, մէկի գերադասում կամ նսեմացում միւսի հաշուին։ Ամէն ինչ նա դիտում էր Հայ ժողովրդի, իրեն ազգային-քաղաքական ամբողջութեան ճակատագրի եւ հեռանկարների տեսակէտից։ Հայոց պատմութիւնը, Հայ մշակութիւնը, հոգեբանութիւնը, «Հայոց վիշտը» բանաստեղծն ընկալում եւ գնահատում

էր իրենց իրական միասնութեան մէջ։ Ամբողջ Հայ ժողովրդի պատմական բախոր նկատի ունէր Թումանեանը, երբ գրում էր. «Իմ սրտին շատ է ծանրանում էս ժողովրդի պատմական բախորը, էն սոսկալի տաժման, որ կոչւում է Հայոց պատմութիւն»։

Լինելով արեւելահայ գրող, Թումանեանը բազմիցս հպարտութեամբ կրկնել է այն աւանդութիւնը, որի համաձայն իր նախնիները դարեր առաջ Լոռի են եկել Արեւմտեան Հայաստանի Տարօն գաւառից։

Մինչեւ Առաջին Աշխարհամարտը, Թումանեանն անձամբ չէր եղել Արեւմտեան Հայաստանում։ Բայց դեռ երիտասարդ տարիներին նա արեւմտահայութեան կեանքից պրկել է շատ բանաստեղծութիւններ, ինչպէս նաեւ «Մենհիթ» պոէմը։ Այդ սամանակ է նա սկսել նաեւ իր «ազգային մեծ պոէման» — «Նին կոխը», որի նիւթը Թրքական բռնապետութեան մէջ տառապող Հայութեան կեանքն է, Կովկասից օգնութեան գնացող երիտասարդների պատկերումը։

Իր գրական-քննադատական գործունէութեան մէջ Թումանեանը արժանի տեղ է յատկացրել արեւմտահայ մշակոյթին։ Ինչպիսի՞ սիրով եւ բանիմացութեամբ է նա խօսել եւ գրել Ալիշանի, Դուրեանի, Պէշիկթաշլեանի, Աղաճեանի ու Պարոնեանի մասին։ Թումանեանի մասնակցութեամբ կազմուած «Հայ գրողներ» հասցեալների մի ամբողջ մեծադիր, հոյակապ հատոր նուիրուած էր արեւմտահայ գրականութեանը։ Դա կովկասահայ իրականութեան մէջ առաջին այդպիսի ժողովածուն էր, որը ցայսօր պահպանում է իր ճանաչողական եւ գիտական արժէքը։

Մեծ բանաստեղծը ցաւով էր նկատում

արեւմտահայութեան եւ արեւելահայութեան անըմբռնողութեան, իրար լաւ չըճանաչելու փաստերը: Ժամանակակիցները պատմում են որ 1921-ի աշնանը, Կ. Պոլսում գտնուած Ժամանակ, Ներկայ լինելով իր ստեղծագործութեանը նուիրուած երեկոյին, Թումանեանը տխուր ժպիտով ասել է. «Ես այստեղ հանգուցի, որ ոչ գութ էք մեզ ճանաչում ինչպէս հարկն է, ոչ էլ մենք՝ ձեզ»: Կովկասահայերի կողմից արեւմտահայ գրականութեան վատ իմացութիւնը, եւ ընդհակառակը նա անուանել է «մի անբնական եւ աննորմալ երեւոյթ, որը վերացնելու առանձին հոգ պէտք է ունենանք»: Եւ բաց անելով իր նախազանաւ Հայ գրողների կովկասեան ընկերութեան երեկոյթներից մէկը, որը նըշխիրուած էր արեւմտահայ գրականութեանը, Թումանեանն ասում էր փոխադարձաբար միմեանց աւելի լաւ ճանաչելու շնորհիւ զմեր առջեւ կը բացուի ազգային հարս-

տութեան մի նոր դանձարան, մեր դիմաց կը յառնեն մեզ ծանօթ, բայց աւելի շատ՝ անծանօթ տաղանդաւոր գրողներին գէմքեր, եւ մենք աւելի հարուստ, աւելի ուժեղ եւ աւելի հպարտ կը դռանք զմեզ...»:

Մեր օրերում Թումանեանի այդ իղձը մարմին է առնում ամէն քայլափոխի. մեր ժողովրդի տարբեր հատուածները գնալով աւելի ու աւելի լաւ են ճանաչում միմեանց կեանքը, մշակոյթը, գրականութիւնը: Այդ մեծ գործում Թումանեանի ստեղծագործութիւնն իր ազգային անխարդախ ոգով, իսկական ժողովրդական հայրենասիրութեամբ եւ մարդասիրութեամբ օգնում է աշխարհով մէկ ցրուած Հայութեանը հոգեպէս միաւորուելու, պահպանելու իր ինքնութիւնը, դառնալու աւելի ուժեղ, իր ազգային հարստութիւններով հպարտ:

Եւ թող մեր ժողովրդի վրայ մշտապէս թեւածի Ամենայն Հայոց Բանաստեղծի միաւորող պայծառ ոգին:

ԵՂՈՒԱՐԴ ԶՐԲԱՇԵԱՆ

Երեւան

ԳԵՂՈՆ ՐԻՏԻՆԿԻ ԲԱՆՏԻՆ

Ու թըշուառն այդ ծածկայթ մը ունի՝
Որուն պէս փշեքը կ'ունենան.
Խորքին մէջ հոն բանտի բակին, մերկ,-
Աւելի անարգելու համար գայն,
Շղթայուած ոտքերով, փաթթըւած.
Բոցեղէն սաւանով,- կ'պառկի ան:

Եւ այդ կիրը կիզող յարածամ,
Կ'ուտէ միսը անոր ու ոսկորն,
Գիշերը՝ ոսկորը դիւրաբեկ,
Ցերեկն ալ փափուկ միսը անոր.
Կ'ուտէ միսն ու ոսկորն փոխնիփոխ,
Կ'ուտէ բայց սիրտը միշտ, ամբողջ օրն:

Ու երեք տարիներ երկար,
Չը ցանուի պիտի հոն, ոչ տունկեք պիտ' տընկուին
Եւ ամուլ պիտ' մընայ կէտը այդ
Երեք լման տարիներու երկայնքին,
Զմեղադրող յառումով պիտ' նայի,
Զարմացող երկինքին:

Մարդսպանի մ' սիրտը, կը խորհին
Պարզ սերմը վարակել կըրնայ.
Ճիշդ չէ: Աստուծոյ բարի հոգն,
Կարծուածէն աւելի է արդար,
Կարմիր վարդն՝ եւս կարմիր կը բացուի,
Ճերմակն ալ աւելի կ'ներմըկնայ:

Բերանէն իր՝ կարմիր, կաս-կարմիր,
Իր սիրտէն ալ վարդ մը ըսպիտակ,
Զ'ն՝վ գիտէ անսովոր ի՛նչ նամբով,
Կը յայտնէ Քըրիստոս իր կամքն,
Քանի որ չոր փայտն ուխտաւորին,
Ծաղկեցաւ մեծ Պապին աչքին տակն:

Սակայն ոչ ներմակ վարդ, ոչ կարմիր
Կը փըթթին բանտին մէջը օդին.
Ու խեցի, ու կոպին, ու կայծֆար,
Կը տըրուին մեզի մէջ բանտին.
Զի գիտեն՝ ծաղիկներն կը բուծեն,
Հոգին հասարակ վըհատիմ:

Ուստի գինեթոյր կամ ներմահ
 Ձը թափին շափրակները վարդին
 Պիտի հոն, աւագին տիգմին մէջ,
 Ահաւոր բանտին տակը պատին,
 Ըսելու հոն շրջող մարդոց՝ թէ
 Մեռաւ վասն ամենուն Միածինն:

Ու թէպէտ բանտին պատն ահաւոր,
 Կ'եզերէ շուրջն անոր տակաւին,
 Ու ոգի մ' գիշերը չի կրնար
 Շրջիլ, երբ ռաբերը շրջթայուին,
 Ոգի մ' դեռ կըրնայ լայ սակայն, երբ
 Թաղուի մէջն այդպիսի պիղծ հոգին:

Խաղաղ է իր հոգին – կամ շուտով
 Պիտ' դժբախտն այն հանգիստ ունենայ–
 Ոչինչ կայ ալ գանի խնդեցնող,
 Ձի շրջիլ ա'լ Անն իսկ կէսօրուայ-
 Անկապտեք Հոգն ուր ան կը տառկի,
 Ոչ Արեւ ունի, ոչ Լուսընկայ:

Կախեցին գայն ինչպէս մ'անասուն,
 Մահագանգն նայնիսկ չը հրնչեցին,
 Որ կըրնար խաղաղ'թիւն բերել,
 Անոր առաջափած հոգիին.
 Շուտափոյթ առին ու տարին գայն,
 Ծակի մ' մէջ պահեցին:

Պահնորդներն՝ հանեցին հագուստներն,
 Ու գանի ճաններուն յանձնեցին,
 Կարծրացած իր աչքերը պաղած,
 Կարմրուած կոկորդը ծաղրեցին.
 Ու պատանքն, որուն մէջ կը պառկէր
 Խընդուփով իրար վրայ բարդեցին:

Երեցը ծրնկաչոփ աղօթել
 Զուգեց՝ իր շիրմին վրայ անպատուած,
 Ոչ կընքէ օրհնումած խաչովն, որ
 Մեղաւոր մարդոց համար էր տրւած
 Քրիստոս. գ'այն մէկն էր մարդոցմէ
 Զոր Յիսուս փըրկելու էր զրկուած:

Լաւ է բայց. անցած է անիկա
 Կեանքին՝ որոշուած սահմանն,
 Եւ օտար արցունքներ պիտ' լեցնեն,
 Կոտորուած սափորը Գըթուքեան,
 Զի պիտի գայն սըգան մերժուածներն,
 Մերժուածներն արդէն միշտ կը սըգան:

Զեմ գիտեր թէ Օրէնքն արդար է,
 եթէ ոչ անարդար է Ան,
 Ս'եր ամբողջ գիտցածն՝ բանտին մէջ,
 Որ ամուր պատ ունի զընտանն,
 Մէն մի օր նըման է տարիի մ'
 Տարի մ'ուր օրերն են երկայն:

Այս գիտեմ բայց՝ թ'ամէն մէկ Օրէնք
 Որ մարդիկ յօրինած են Մարդուն
 Համար,— երբ առաջին Մարդն եղբօր
 Կեանքն առաւ ու սկըսայ այս տըրտում
 Աշխարհն—, կը վանէ ցորենն ու յարդը
 Կը պահէ՝ եղանով յոռեգոյն:

Եւ այս ալ գիտեմ— եւ լաւ էր որ
 Ամեն մարդ նոյն բանը գիտնար—,
 Որ մարդոց կառուցած 'մէն մի բանտ,
 Ամօթի քարերով է բերուեր ի կատար,
 Եզերուած ձողերով՝ որ Գրիստոս
 Զը տեսնէ մարդն ինչպէս կ'ձըւատէ իր եղբայրն:

Կ'մթագնեն Լուսինը ձողերով,
 Կը կուրցնեն արեւը գեղադէմ,
 Լաւ կ'ընեն պահելով դըժոխքին,
 Քանզի հոն բաներ կը կատարեն,
 Ոչ Աստծոյ, ոչ Մարդոյ որդին,
 Պէտք է որ դիտեն:

Լաւ կ'աճին՝ օդին մէջ բանտին
 Գէշ արարքն նման թռնոտ սէզերուն,
 Կը թօշնին այնտեղ ու փրտին,
 Միայն ինչ որ բարի է մէջ Մարդուն
 Անձկութիւնը դեղին՝ կը հըսկէ
 Դարպասին, պահպանն է վհատութիւն:

Ահաբեկ մանուկը անօթի կը թողուն,
 Որ ողբայ ան ցերեկ ու գիշեր,
 Եւ խենդն ու տրկարը կ'մտրակեն,
 Կը ծաղրեն ծերուկն ու գորշաներն,
 Ու ոմանք կ'ըլլան խենդ, ոմանք՝ չար,
 Եւ ոչ ոք կըրնայ բառ մը ըսել:

Ամեն մէկ խուցը նեղ ուր կ'ապրինք,
 Նըման է գարշահոտ արտաքնոցի,
 Ու Մահուան կենդանի՝ կըծու շունչն,
 Ամեն մէկ վանդակորմն կը խըցի.
 Մարդկայնութեան մաշինին մէջ ամեն բան փոշի
 Կը դառնան, ցանկութեան բացի:

Ազտադի ջուրը գոր կը խմենք,
Կ'սողայ վար կը պանծով զըզուելի,
Ու դառն հացը՝ տըրուած կը շիտեմ,
Խառնուած է կաւնի հոտ, ու կիրի,
Եւ քունը չի պառկիր. կը շըրջի
Խենդաչուի, կը նըչայ ժամերին:

Բայց թէպէտ նիհար Բաղն ու Ծարաւը կանանչ
Պայքարին որպէս իժն ու լորտուն,
Մեր հոգը չէ բանտին կերակուրն,
Ինչ որ կը սառեցնէ, կ'մեռցնէ իսկոյն,
Այն է որ ցերեկը վերցուցած մէն մի քար՝
Կը դառնոյ մէկու մ' սիրտը ցայգուն:

Կէս գիշերն միշտ մարդուն սիրտին մէջ,
Մըթընշաղն ալ մարդուն խըցիկին,
Կը դարձնենք մանիչն ու չըւանը
Կը քըրքրենք, անձնիւրն մէջն իր դժոխքին,
Ու լուսիւն է եւս ահաւոր,
Քան թէ ձայնն արոյրէ գանգին:

Ու բընաւ մարդու ձայն չի գար մօտ,
Խօսելու քառ մը քաղցր,
Եւ աչքն որ կը դիտէ դրան նեղէն
Անգութ է ու կարծր,
Ամենքէ մոռցուած կը նեխինք՝
Վերաւոր հոգով ու մարմնով ալ:

Եւ այսպէս մենք կեանքի երկաթէ շրջափ
Կ'ժամգոտենք, անարգուած, միևնույն,
Ու ումանք կ'անիծեն, այլ կ'հեծեն,
Ու ումանք չեն հաներ հառաչ ալ,
Բայց Աստուծոյ Օրէնքներն մըշտատեւ
Բարի են, կը կոտրեն սիրտը քար:

Եւ 'մեն մէկ կոտրած սիրտ մարդկային,
Ըլլայ բանտի խուցին մէջ կամ բակին,
Է որպէս կոտրած տուփն որ տըւաւ
Տիրոջը՝ գանձը իր սըրտակին.
Ու լեցուց բոբոտին տունն ազտոտ,
Բուրմունքովը նարդին քանկագին:

Երջանիկ է ան ա'հ, սիրտն որու կը կոտրի,
Ու ներման խաղաղութիւն կ'ունենայ,
Այլապէս՝ մարդ ինչպէ'ս ուղղէ իր
Ծըրագիրն, ու հոգին իր մեղքէն մաքրէ նա,
Չէ որ միայն կոտորած սիրտէ մը
Ներս մըտնել, Տէր Յիսուսը, կըրնայ:

Ու անի, կարծրք ու սեւեռում
Աչքերով, կոկորդով կարմրուած,
Կրսպաւէ սուրբ ձեռքերուն,
Աւագակն որ Դրբախտ էր տարած.
Եւ Տէրը չը պիտի անգոսնէր,
Զըղջացող սիրտ մը կոտրած:

Կարմրագգեստ մարդն Օրէնքն ընթերցող,
Տըւաւ երեք շաբաթուայ կեանք իրեն,
Երեք կարն շաբաթներ որ բուծէ
Իր հոգին՝ իր հոգու պայքարէն,
Եւ դանակ բրոնզ ձեռքը լուայ,
Արիւնի բոլոր բիծերէն:

Արցունքովն արիւնի լուաց ձեռքն,
Ձեռքը որ պողպատն էր շարժեր.
Զի արիւնն լոկ կըրնայ արիւնը
Սըրբել, եւ արցունքը՝ լոկ բուծել,
Եւ կարմիր ներկն մնացած Կայէնէն,
Քրիստոսի ձիւն-նեքմակ կընիքն էր դարձեր:

Րիտինկի բանտին մէջ, բովն Րիտինկ
Քաղաքին, փոս մը կայ 'նարգանքի,
Թըշուառ մը կը պառկի անոր մէջ,
Կ'կրծեն գայն ակռաները կրակի,
Փաթթուած է պատանքի մ' մէջ բոցէ.
Անանուն՝ շիրիմն ուր կը պտուկի:

Ու լուրթեան մէջ պառկի թող՝ միմչեւ
Քըրիստոս կանչէ մեռելներն,
Հարկ չկայ խեղդ արցունք վատնելու,
Հեալու օդային հառաչներն.
Մարդը իր սիրածն էր ըսպանած,
Ուստի պէտք է մեռնէր:

Ամեն մարդ կ'ապանէ բայց սիրած բանն,
Ամենքը՝ ասիկա լըսեն թող,
Ուսման կծու նայութեով կ'ընեն այդ,
Իսկ ուսման շողոքորթ մի բառով,
Վախկտող կ'ընէ այդ՝ համբոյրով,
Կըտրիմը՝ սուրով:

OSCAR WILDE

Թրգմ. Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վ Ե Ր Զ

!

[. . .]

ԳՐԱԿԱՆ

ԱՆՏԻՊ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ Ն Ա Հ Ա Պ Ե Տ Ռ ՈՒՍԻՆ Ե Ա Ն Ի

ՀԱՄԱՌԹԻՆԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՄՏԱՄՈՒԹԻՒՆՔ

ԿԱՆԹԵՂ ՏԱՃԱՐԻՆ

կամ

ՀՈԳԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԱԼ ԱՌ ԱՍՏՈՒԱՍ

Տժգոյն կանթեղ սեղանոյ, հիմ ի ստուեր սուրբ տեղւոյ,
անտես եւ միայնիկ սպառիս դու առ Աստուծոյ:

Ո՛չ ի ձգել զաղօթիցն դեռ եւ զսիրոյ, եւ ո՛չ ի լուսաւորել
կայծակնդ անզօր զակն այնորիկ որ զտիւ արար:

Ո՛չ ի հերքել զստուեր քայլից նմին երկրպագուաց, զի նը-
ռեմաստուեր տեսանի արդ լայնաձիգ ինչ կողմն տաճարին առ հե-
ռաւոր եւ ընդադօտ լուսով քով:

Ո՛չ ի մատուցանել նմին զյարգանս հրոյն որ փայլեացն ընդ
հետովք նորին, քանզի երկինք նմին վկայ եւ արեւք վառին առա-
ջի նորին:

Այլ սակայն, պահեցէք դուք ո՛վ կանթեղք նշանակունք
դանմահ զձեր հուր եւ հեղիկ հողմն եկեղեցեաց գլխաւորաց օրրէ՛
դձեղ ի վերայ համայն տաճարաց:

Եւ յօղայինդ յայդ վառարան ակն իմ սիրէ կալ մշտալաւ,
եւ անխելամուտ՝ ասեմ ցնոսին. Բարոք առնէք ո՛ր ջահք բարե-
պարիշտք:

Գուցէ, չողոզողուն մաաւունք անհուն արարչութեանն բեր-
ցնե զսիրպ եւ զնմանութիւն զպաշտօնին յաւիտենական եւ զերկր-
պագութեանն առ նորին իսկ աթոռոց:

Եւ ցհոգի իմ ասեմ. Զսոյն օրինակ ահա՛ ո՛վ բոցդ անտե-
սանելի, վառիս դու ի ստուեր ստորնոյս առ Աստուծոյ քոյ:

Ճւ բնաւ, ուղղել զսիրտ իմ առ նա, շմոռանաս դու բնաւ,
եւ այս կանթեղք լցեալք ոչ բնաւ ի տառանիլ առ Տեառն:

Յոր կողմն եւ հնչեացէ հողմն, ո՛ր եւ իցէ հողմն, ակն կալ-
նուս դու դան բեւեռ համայն ուխտիցդ առարկոց, եւ իբրեւ զամպ
պահես այս միշտ զլուսաւոր կողմն քո:

Ի գիշերի զգալի այս աշխարհի զգամ անվթար, թէ է կէտ
ինչ անմատչելի ի խաւարէն երկրայնոյ:

Նշոյլ ի բլրի որ հսկէ զգիշերն ողջոյն, եւ ասալ որ զլոյս առնու ի միայնոյ լուսաւորէ որ լուսատու է միշտ:

Հուր որ բնակի ի սափորին անշէջ եւ անսպառ, ուր կտրէ ոք արկանել յամենայն ժամու հատ ինչ խնկոյ ի վառել զայն:

Եւ մինչ ընդ ակամբ որ զքեզն նկատէ, շիջցիս դու, հոգի իմ, ո՛չ զքեզ ոչ ոտն նորին կոխեսցէ ի սալալատակս ծխաշունչ տա՛ճարին:

Այլ կենդանւոյն, ի վառարանն վսեմ ի սկաւառակ անքուն տունջեան միաւորել ունի զքեզ ինքն իսկ իրք զճառագայթ յարեւ իւր:

Եւ քայլեսցես նորին ի լոյս, ի լոյս այնր որոյ լուսաւորք եւն փոշի որ ելանէ եւ անկանի առաջի նորին:

ԵՐԳ ՄԱՆԿԱՆ ԶԱՐԹՈՒՑԵԼՈՅ Ի ՔՆՈՑ

Ո՛վ հայր երկրպագեալ ի հօրէ իմմէ, դու որ զոչն անուա՛նելն բայց ի ծուկն. դու որոյ անուն ահեղ եւ քաղցրիկ խոնարհեցուցանէ զճակատ մօր իմոյ:

Ասեն թէ այս արեւ լուսաճաճանչ է խաղալիկ գրօսանայք բում զօրութեանդ եւ ի ներքոյ ոտից քոց տատանեալ ծփայ իրրեւ զամպար կարմրափայլ:

Ասեն թէ դու ես որ ծնանիս զթռչունս յարտորայս, եւ մանկանց փոքունց շնորհես հոգի առ ի ճանաչել զքեզ:

Ասեն թէ դու ես որ վերընձիւղես զամենայն ծաղիկ ի դարդ պարտիգաց, եւ թէ առանց քո զրախտ միշտ ագահ զուրկ ի պաղտըն լինի:

Առ պարգեւան զոր բարութիւն քո չափէ, ամենայն տիեզեր է հրաւիրեալ. ոչինչ էակ է մոռացեալ յայս ի հանդէս բնութեան:

Գառն ճարակ զոստոցն առնէ զգալարեաց, այժ ի յառուտոտ պատաղի եւ ճանճ առ չրթամբք անօթոյն հանէ զիմ կաթինս շիթս սպիտակս:

Արտուտն ունի զհատ դառնահամ զոր թողաւ գողանայ հասկաքաղն. ճնճղուկ զհետ կրթի խարթալողացն գցորեան, եւ մսո՛նուկ յառի ի մայր իւր:

Եւ ի վայելս համայն պարգեւաց զոր բղիւնս հանապազօր, ի միջօրէի, բնդ երեկոյ եւ ընդ այգ, զի՞նչ ուրեմն մնայ առնել, այլ հնչել միայն զանուն քո:

Ո՛վ Աստուած. բերան իմ թոթովէ զայս անունն սոսկալի հրեշտակաց. եւ մանուկ անգամ լսելի է քեզ ի պարս երգեցողաց որ փառաբանեն քեզ:

Ասեն թէ սիրէ ընդունիլ զուխտս մատուցեայս ի մանկութենէ, յաղագս անմեղութեանն զոր ունիմք յանդէտս:

Ասեն թէ քաջ եւս յառնեն գովութիւնք նոցա ի լսելիս նորին, թէ հրեշտակք ընուն գերկինս, եւ թէ զհրեշտակացն բերեմք զնմանութիւն:

Եւ զի լսէ նա ի հեռուստ զուխտս զոր բերան մեր մատուցանէ, խնդրել կամ իմ ի նմանէ անդադար զայն օր այլոցն է կարեւոր:

Աստուած իմ՝ տայ վտակաց զալիս եւ ճնճղկոց զիեւտուր,
դառանց զգեղմն եւ դաշտաց հովանի եւ ցօղ:

Տայ հիւանդին առողջութիւն եւ մուրողին հաց զոր խնդրէ,
որբոյն յարկ բնակութեան, բանտարգելոցն ազատութիւն:

Տայ ընտանիս բազմածին՝ հօր երկրւոյս Տեսուն, ինձ ի-
մաստութիւն եւ բարօրութիւն առ յերանութիւն ծնօղիս:

Զի բարի եղէց ես թէ եւ փոքրիկ, զօրէն մանկանն ի տաճա-
րին զոր նկատեմ յամենայն առաւօտ ժպտեալ զվերջաւորօք ան-
կողնոյս:

Դի՛ր դարդարութիւն ի սրտի իմում եւ զճշմարտութիւն ի
շրթունս, զի անկայի բան քո ի սրտի իմում յերկիրդ եւ ի հնազան-
դութիւն:

Եւ զի համբարձցի առ քեզ ձայն իմ որպէս զբաղցրիկ բու-
րումն անուշահոտ բուրվառին ի ձեռին մանկան ինձ նմանատիպ:

Ա Ր Տ Օ Ս Ր

կամ

Մ Խ Ի Թ Ա Ր Ո Ի Թ Ի Խ Ն

Անկերո՛ւք լուռ արտասուք, անկերո՛ւք յերկիր անդորով,
ո՛չ եւս ընդ մէջ ձեռաց բարեպաշտից, ո՛չ եւս իսկ ի ծոց բարեկա-
մութեան:

Անկերո՛ւք իբրու անձրեւ անբերրի ցայտեալ ի յալստած,
զոր ոչինչ չող երկնածիր կամ բնաւ ինչ չունչ դայ վճարել ի ցամա-
քութիւն:

Զի՞ փոյթ մարդկանս եղբարց իմոց զբեկեալ սրտէ ուրուք
թշուառականի, նա՛՝ կարի անխնամ յիմ չարաբաղդիկ վիճակ,
թշուառութիւն իմ այսչափ հեռի է ի նոցանէ:

Բնաւ արդեօք ոչինչ արտասուք խաւարեսցեն նոցա զերկի-
նըս աներկբայ, ապագայ նոցին անբաժ համայն աղէտից եւ բա-
ժակ նոցին ի դառնութենէ:

Ո՛չ երբէք այս խումբ անպիտան որ անցանէ ծրծաղելով
դառաջեալ իմով, չունիցի ինչ պէտս զի ասասցէ ոք նմա թէ լա՛մ
բնդ քեզ:

Եւ արդ, մի՛ եւս լիցուք անդուլ ի խնդրի անօգուտ խնամոց
մարդկային ազգի, ալ լ տածեսցո՛ւք զանձինս տրտմութեամբ ի-
մով եւ ծածկեսցո՛ւք զճակատ իմ ընդ ձեռովք իմովք:

Ի ժամուն յորում հողին մենաւոր արկանէ զիւրին քօղ ինչ
սեւորակ, եւ լսէ ոչ եւս ինչ ի յերկրէ, այրիացեալ ի յետին իսկ
յուսոյ իւրմէ,

Յորժամ բարեկամութիւն որ մոռանայ զնա, դառնայ յետս
ընդ ճանապարհ իւր, եւ յետին ցուպ նորին թեքեալ պատառէ ըլ-
ձեռն նորին,

Եւ երբ մարդ տկար որ եւ զանգիտէ զարհուրեալ ի տարա-
փոխիկ վարակմանէ ապականարար չարեաց, թողու զմեզ առան-
ձին ի ճանապարհ մեր դէմ յանդիման վշտաց դառնութեան,

Իբրեւ չէ եւս ապագային հրապոյր ինչ գեղեցկութեան, որ տացէ մեզ ցանկալ զօր վաղուին, եւ դառնութիւն արտասուաց է միայնիկ ճաշակ մերոյս հացի,

Յայնժամ համարունայ ձայն քո ի լուութեան սրտիս, եւ ձեռն քո, Աստուած իմ, բառնայ զձանրութիւն սառուցեալ վըլ-տացս:

Զգամք թէ բան քո գթալիր ոչ կարէ խառնիլ յայլոցն, Տէ՛ր, եւ միտթարէ միայն զորս ոչ կարացին ընդունիլ զմիտթա-րութիւն:

Բազուկ քո երկնային ձգէ զմեզ իբրեւ բարեկամ ի սիրտ իւր, եւ աշխարհ որ անսանձ զծիծաղիլ մեր, ասէ ցինքն, ուստի՞ զայ նոցա այս երջանկութիւն:

Եւ հոգի ընկղմի յաղօթս, եւ խօսակից լինի ընդ Երկինս, եւ արտասուք արտեւանաց ցամաքին յինքեանց յաշտ մեր,

Որպէս ճառագայթ ձմերան սրբէ յոստ եւ յալատաժ րդ-վերջին շիթ զոր ոչինչ ստուեր կարաց ցամաքել:

Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Մ Օ Ր

Յաւուր միում, աչք պարտասեալք ի հսկմանէ եւ յարտա-ուաց որպէս ըմբիշ յաղթահարեալ պատրաստ յրնկենուլ զղէնս իւր, ասէի ցարշալոյս. Ի զուր փայլեցես ի շող լուսափառ, բը-նութիւն զոչոտէ՝ զաշտ մեր յիւր հրաշալիս եւ ժպիտ երկնից յե-րանգ կարմրափայլ ի ծաղրել է մեզ:

Ոչ ճշմարիտ ինչ գոյ եւ ոչ սուտ, ամենայն երազք են եւ պատրանք, եւ անուրջք սրտին երկարաձգեալք ի սնոտի յուսոյ. ճշմարտութիւնք մեր միայնիկք են ցաւք մեր ո՞ր մարդիկ, եւ նը-շոյլի շողեալ յաշտ մեր զոր եւ զկեանս անուանեմք, կայծակն՝ յորմէ՝ հազիւ լուսաւորեալ հոգի գնայ այլուր վառիլ յարծարծ լուսաափիւռ:

Ըստ բանալ աշաց, աղջամղջին պատահի մեզ գիշեր. Աստու-ում՝ բառ իմն է երազեալ ի մեկնել զաշխարհ, եւ վիրապ իտու-արշտին յոր ձկեցաւ ոգի. ամենայն ծփսոյ, բնաւն անկանի իբրեւ զփոշի զոր ոտն յիմարի հողմայոյց հանէ յերաշտ առպարէզ:

Ասէի, եւ աչք իմ նախանձէին ընդ ամենայն սրոց ընկալալ էր կեանս անդդալս, եւ զորոց քուն չունի վրդովել ոչինչ արթնու-թիւն. ակն յառէի ի հողակոշտ եւ յապառաժ եւ ի հայիս իմ ա-սէի. Ընդէ՞ր գոնէ չմանեցայ սողնոյ կամ քարի:

Հայեցումս՝ յողգ.յողգ իբրեւ զաչաց նաւուղիի որ դանդունդս տատանեալս հարցանէ գիւրոց շաւղաց, յանկարծ պնու ի շիրիմ ինչ. շիրիմ՝ տարփալի սիոփանք ցաւոց դառնութեան, ուր բանտ պաշտելի ծածկոյթ մօր իմոյ անէ յուրտասուաց որ ի խրճթին:

Անդ՝ այն ինչ հրեշտակն քօղարկեալ ի կերպարանս կնոջ արձակեաց զուգի իւր յԱստուած ի լոյս իւր որպէս փշի ճրագ ի մերձիլ աւուր, եւ ինքն փորեցի նմա յարկ անձուկ ի ստուեր սե-ղանոյն զոր միշտն սիրէր, եւ դուռն ի բնակութիւն յայլ:

Անդ ննջէ յուսով նա՝ որոյ ժպիտք յարձակիլ ոգւոյն ինդ-
րէին դաշտ իմ, սիրտն աղբիւր իմոյն, արգանդն որ զիս յղեցաւ,
յանջրն որ սնուց զիս կաթամբք եւ գորովով, բաղուկքն որ եղեն
ինձ յօրոց խանդադատանաց, շրթունքն յօրոց դամենայնն րն-
կայալ:

Անդ ննջին ամբ վաթսուն ի մի եւեթ մասիսոհ, կեանք պա-
րասկեալք ի բարեգործութիւն միայն, անմեղութիւն, սէր, յոյս,
մաքրութիւն, այնչափ թառաչք առ Աստուած կրկնեալք, այնչափ
հաւատք ի մահուն, այնչափ առաքինութիւնք ի գրաւ եղեալք ան-
մահութեան:

Այնչափ գիշեր տքնութեան ի սպաս մգնութեան, այնչափ
հաց բրդեալ ի ջամբ աղքատին, այնչափ արտասուք յաջողք ար-
տասուաց, եւ հառաչմունք սրտակէղք ի տարփանս այլոյ գաւա-
սի, եւ համբերութիւն ի տանիլ կենաց որոյ պսակն էր այլուր:

Եւ առ ի՞նչ այս ամենայն. զի փոս յաւաղուտս յինքն առցէ
յաւէտ զայս էակ անվախճան. զի այս խոտան հողակոյտք պարա-
րեացին սովաւ. զի ուռճասցի խոտ մեռելոց որով ծածկի շիրիմ
սորա. որ աստէն իսկ ընդ իմով ոտիւք թաւ եւս է եւ զալարագեղ-
առ այս բաւէր դոյդն ինչ աճիւն:

Ո՛չ, ո՛չ, զայս անհուն յոյս չստեղծ Աստուած ի լուսաւորել
ոտնաչափս փոշւոյ. այս ոգի հեռանկար եւ վեհագործ ո՛չ ի զուր
ինչ աչս արձակեաց յայս ցուրտ ի վէմ. ո՛ր առաքինութիւն, տեսիլ
քո զօրաւոր է քան զշիրմին եւ յայտնագոյն քան զմահուն:

Եւ իմ աչք հաւանեալք ընդ մեծ այս վկայութիւն ամբարձալ
յերկրէ, վերացալ յամպոց, եւ սիրտ իմ միացեալ ստացաւ զիւր
ջահ: Երանի՛ր մարդոյն որում տալ Աստուած մայր սուրբ: Ի զուր
է կենաց լինիլ անտանելի եւ մահու դառնանալ, եւ ո՛ր երկրայեացէ
ի շիրմի նորա:

ԿՈՉՈՒՄՆ ՅԱՂԱԳՍ ՅՈՒՆԱՅ

1826

Ո՞չ եւս իցես դու Աստուած զօրութեանց, ո՞չ եւս իցես դու
Աստուած պատերազմաց. կորնչին Տէ՛ր՝ եթէ ոչ տալ պատաս-
խանի. ստուեր սրոյն է ի վերայ չաւղաց նոցա. յաղօտափայլ ճա-
հանչ քաղաքաց բորբոքելոց ի հուր տեսանէ՞ն զղէնընկէց վաշտս
նոցա, զմանկունս նոցա եւ զծերս եւ զկուսանսն ահաբեկս. մատ-
նեալքս ի նախատինս՝ ծփան առ ի մահ, հայեցեալք թժով՝ ձեռս
կարկառեն քեզ. ո՞չ եւս իցես դու Աստուած զօրութեանց. ո՞չ եւս
իցես դու Աստուած պատերազմաց:

Յառնէիր երբեմն. ժողովուրդք քո աղաղակէին՝ Տէ՛ր,
Տէ՛ր, կամ վաղիւ կամ ոչ եւս. դու բաշխէիր զամենայն գունդ,
դու պատերազմէիր. Աստին հարեալ արկանէր ո՛չ տեսանելով
դու պատերազմէիր. Աստին երկիւղի քա աւել ամէնիւ վրասնաց նոցա. յո-
պիտակացեալ ոսկերք նոցա ցուցանէին մեզ չաւիղ. ո՞րք են, ո՞րք

են վսեմ տեսարանքն զոր տեսին հեղեղատն Գաղայ, եւ լեառն Սէիր. եւ զի՞նչ. գոն յերկրի մարտիրոսք, եւ յերկնից ո՞չ գոն հրաշք: Սակայն ժողովուրդ մի համօրէն աղաղակեաց. Փրկեա՛ւ բո՛մեզ, անկանիմք յանուն քո, կորնչիմք վասն քո:

Լերինք լուան գնա, արձագանք Աստիկոյ յանձաւոց յանձաւս կրկնեցին զգոչումն նորա. Աթէնք շարժեցաւ ի ներքոյ հին աւերակացն. Սպարդա թաւալեաց զնոսա յաւերակաց յաւերակս: Ծովք լուան գնա. ալիք ի վերայ ծալուածոցն, նաւք անցորդք, կայմք լուան գնա. առիւծն ի վերայ իջայ, արծիւ ի գիրկս ամպոց, եւ դու միայն Աստուած իմ, ո՛չ ետուր պատասխանիւ:

Աղաչեցին զքեզ, Տէ՛ր, յերեկոյէ ցարշալոյս, յամենայն անուն աստուածային որով տիեզերք պաշտեն զքեզ. խորտակեցին վասն քո զաստուածս իւրեանց, զաստուածս մահացուս. զանգեցին Տէ՛ր ջրով բլրոց զհող շիրմաց, զաճիւն փլածոց ի կանգնել քեզ սեղանս:

Սեղանս ի Դեզոս, սեղանս ի վերայ Եգիպտոյ, սեղանս ի Բլատիւ, ի Լիւկերա, ի Մարաթոն. սեղանս ի բարձունս ուր ողբայ Սաղամին, սեղանս ի հրուանդանին ուր խորհէր Պղատոն:

Երիցունք ամին յափամբք ծովուց իւրեանց զկանայս եւ յծերս՝ որ կցորդիւք առ քեզ կարգային, մանկունս ծաղկոնկէցս առաջի սրբոց պատկերաց, այբիս սգաղգեացս որ ծածկէին զգէմս յարտօսրալից ձեռս իւրեանց:

Փայտք նաւուց նոցա, ապառաժք նոցա եւ պարիսպք նոցա կենդանոյն՝ մատնեցին զնոսա հայածչաց նոցա. գլուխք նոցա թաւալէին ընդ ծանրութեամբ յաղթողաց իրբիւ ոռոմբս մեռեալս ի դաշտ պատերազմաց. դահիճք միեցին զձեռս իւրեանց յընդերս նոցա. այլ ո՛չ երկաթ այրիչ, Տէ՛ր, եւ ո՛չ քերիչք չկարացին հանել զքեզ ի սրտից նոցա:

Եւ զի՞նչ առին Տէ՛ր, այս աղինք զինեալք ընդդէմ անունս քո սրբոյ զորոյ չինդրես զվրէժ. ո՛չ եւս իցես դու Աստուած դորութեանց. ո՛չ եւս իցես դու Աստուած պատերազմաց:

ԵՐԳ ԱՌ ՍՈՒԱԿՆ

Մինչ երկնային քո դայլայլիկք սկիւր առնեն երգոց ի լրութեան գեղեցկազոյն գիշերին, թեաւ ո՛րք գուսան իմումս առանձնութեան, ո՛չ գիտիւ եթէ զչափոյ քո նկատեմ: Ո՛չ զիտեռ թէ ի քաղցրագոյն երգոցդ ապուշ ունկն իմ ի ներքոյ ծառատնկոցն յակճիւտս ի դիտակ ոստոց արբեալ զմայլի ընդ հրաշալիոն յաւերժ:

Ո՛չ զիտես թէ եւ ո՛չ ընդ շրթունս իշխէ անցանել չունչ եւ ոտն իմ հաղիւ զտերեւ կոխէ յուշիկ, յերկիւղէ փշրեոյն: Եւ թէ ի միանձանի այլ ոմն հագներգու որոյ քնար ոչ այնչափ ծածկազէտ՝ նախանձ բերեալ հոգի իւր կրկնէ զերգ քո գիշերին ի յուր անտառաց:

Այլ իթէ լուսաւորն գիշերի խոնարհացի զարտեանամբք լերանցն ի լուր ձայնիդ գեղապանծ, ծածկես դու զանձն յոստոց յոստս յերեսաց լուսոյն որ գայ անդ ծածանիլ:

Եւ եթէ աղբիւրակն ի բաց վտարեալ զտրուպն գայլախազ որ յարգելանս էր նմին, ձայն տացէ ընդ մամռովն, խռովի քոյդ յայնժամ եւ չփոթեալ լռէ իսկոյն:

Բարէ՛, գերաշխարհիկ քո ձայն սրտառու՛ յաւէտ անապական ի ստորինս յայս, եւ այս նուազ քեղ ի իւրախոյս աղբումն է բնական որ ելանէ առ Աստուած:

Մըմունջ քո եւ դայլայլիլք յողեալք են ի գեղգեղ յամենայն քաղցրագոյն հնչմանց բնութեան եւ յամենայն գեղեցիկ շնչոց երկնից:

Ձայն քո որ թերեւս անդէտ յինքենէ, ձայն է կապուտափայլ հաստառութեանն, ձայն ծառոյ, հնչումն ձայնատու անձաւոյ, ձայն հովտի ընդ ստուերաւ նիրհելոյ:

Ձայնս հանգունակեն քեզ կարկաչիւն ալեաց, շրշիւն տեւոց, եւ անկրկնող ձայն արձագանաց, ջուր որ ի մերձ ժալոյց քամեալ չիթ առ չիթ կաթէ յաւաղան եւ ի ծածանիլ զկապուտակս ծոցոյն ձայն արձակէ ընդ պղպջակօքն:

Ախորժ հեծութիւնք ելեալք յաստոց գիշերոցն, դրդչիւն մկանանց բաշխելոց ընդ աւազ կամ ընդ եղէգունս ջրայինս:

Եւ ի քաղցրագոյն ձայնիցս այսոցիկ յոր խառնի եւ բնական աղբումն երկնատուր քեզ ի հրահանգ, կալեաց Աստուած դժուաւաչս, ո՛ր Երգեցիկ, եւ դու երգես ի գիշերի:

Ո՛ր բնութիւն, այդ քաղցր հանդէս գիշերային եւ բարեպարիշտ խորհուրդք երեկոյրեայ, եւ խոնարհել ծաղկանց գիւրեանց բուրանոցս որպէս զբուրվառին, եւ զողողջել սաղարթից ծանրելոց ի ցօղ, եւ զովագիրն շունչ անտառաց չափազանց ունին վայելչութիւն, պակասեալ ձայնիդ առ ի նոցանէ:

Եւ այս նուազ խորհրդական որում ես եւ հրեշտակք ունկն գնեմք, այս հառաչանք նուիրական գիշերին, քաղցրանուազ թըռչուն, դո՛ւ միայն ես եւ ոչ այլ ոք:

Ո՛հ, խառնեա՛ր զձայն քո ընդ իմումս, նոյն ունկն իսկ լսող է մեզ. այլ լաւ եւս ելանէ յերկինս հայցուած քո օգական, որում երկին կայ յակճիւս:

Այս պատկեր է ձայնի բնութեան, որ սէր է եւ սրբութիւն, բոցակէզ դայլայլիկ եթերականն բարձանց, նուագածու մշտածուփ ամարայնոյն գիշերաց:

Եւ յայս ձայն մեր յանախորժ որ հեծէ յելսն ի սրտէ միշտ յսի սարսափ արտասուաց կամ գոչիւն ցաւոց:

Մ Տ Ա Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Ա Ռ Ա Ն Ձ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Բազում անգամ ի վերայ լերին, ի ստուեր կաղնւոյն ծերունւոյ, նստիմ ես տրտմութեամբ ի մուտս արեւուն, յածեմ բաղդովի գիւմ հայեցուածս ի դաշտավայրին որոյ պատկեր փոփոխական լայնի առ ոտիւք իմովք:

Աստ սպառնայ գետն փրփրալից ծփանաց, սողայ եւ ընկղմի խորասոյզի մի թագին հեռաւորութեան. անդ լին անշարժական տարածէ զջուրս իւր նիրհեալս, ուր աստղ երեկոյին յառնէ ի կտապաւորակաւ:

Ի կատար լեռանցս պսակելոց նսեմաստուեր անտառօք վերջալոյս ձգէ տակաւին ճառագայթ ինչ վերջին, եւ շողելից կառք թափուհետն ոտուերաց ելանէ եւ սպիտակ գործէ զարդիս զեզերս հորիզոնին:

Սակայն ձայն ինչ եկեղեցական թռուցեալ ի նետէն գոթական, ծաւալի յօդս ի սփիւռ. ճանապարհորդ զկայ առնու եւ զանգակ շինական խառնէ զսուրբ ներդաշնակս ի վերջին աղաղակս տունջեան:

Այլ իմ հոգի անփոյթ եղեալ զայս քաղցրագոյն տեսութեանց, շառնու առ նոքիմք ոչ զգեղեցկութեանն ճաշակ եւ ոչ իրիք փոխադրութեան. նկատեմ զերկիր իբրու ստուեր ինչ թափառիկ եւ արեգակն կենդանեաց ոչ եւս ջերմացուցանէ զմեռեալս:

Ի բլրոյ ի բլուր յածեցուցեալ զաչս ի գուր, ի հարաւոյ ի հիւսիս, յաշարջոցն ի յարեւմուտս, ընթանամ յամենայն ծագս անհուն տարածութեանն, եւ ասեմ. Ոչ ուրեք ինձ սպասէ երջանկութիւն:

Զի՞նչ առնեն ինձ այս հովիտք, այս ապարանք, և այս խորհիթք, սնտոի առարկայք որոց գեղեցկութիւն խուսափեալ է վասըն իմ. գետք, ապառաժք, անտառք, ըղձալի առանձնութիւնք, մի միայն ինչ պակասի ի ձէնջ. եւ ամենայն է անբնակ:

Ի սկզբնաւորել արեւուն զըջմանս իւր կամ ի կատարել՝ յաւըն անխտր հետեւիմ յընթացս նորին. մտցէ յերկին ինչ մթագին կամ անամպ եւ կամ ելցէ նա, զի՞ կարեւոր է ինձ արեգակն. իմ չիք բնաւ եւ ոչ մի ակնկալութիւն յաւուրս:

Յորժամ կարէի հետեւիլ նմին յասպարէզ նորին բայնատարր, տեսեալ էր աչաց իմոց զգատարկութիւն եւ զամայիս. ինձ չիք ինչ ցանկալի յամենայնէ զոր նայն լուսաւոր առնէ. եւ խնդրեմ ինչ ո՛չ յանհուն տիեզերաց:

Այլ թերեւս անդր քան զեզերս իւրոյ աշխարհի, տեղի՝ ուր արեգակն ճշմարիտ լոյս առայ այլոց աշխարհաց, եթէ բաւ է ի թողուլ յերկրի զիմ մարմին, մատուցեալ էր ի տես աչացս այն գործէ անբջեալ է իմ ընդ երկար:

Անդ արեւալ էր իմ արդեօք յազդերական աննշալի եւ գրտեալ զյոյս եւ զսէր եւ զայն բարի գաղափարեալ որում ամենայն հոգի ցանկայ, որում եւ չիք անուն յերկրաւոր կայանս:

Զի՞ ես անկարող, ելեալ ի կառս Խչապրջոցն, ո՞ր գեղեցիկդ առարկայ իմոց փափագանաց, սրանալ մինչ առ քեզ. յերկիր աքսորանաց ընդէ՞ր կացից ես տակաւին. չիք ինչ հասարակ ընդ իս եւ ընդ երկիր:

Մինչ տերեւ անտառաց անկանի ի մարգագետին, հողմ եւ շեկորեայ յառնէ եւ խլէ զայն ի ձորս, եւ ես նման թառամեալ տերեւոյ, տա՛ր եւ զիս իբրու զայն, մըրկայա՛յզդ հիւսիս:

Հրտ. Ա. Գ. 1

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԻԻԹԵՐ ՍԵՐԱՍԱՅԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Բ

1592—ԻՆ ՍԵՐԱՍԱՏԻՈՅ ՄԷՋ ԳՐԶԱԳՐՈՒԱԾ ԱՒԵՏԱՐԱՆ
ՄԸ ԵՒ ԻՐ ԿԱՐԵԽՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ

«Սիմոնի Մայրի-Յունիս միացեալ թիւին մէջ Որթագիւղի ձեռագիրներէն քաղելով սերաստացի մի քանի հին գրիչներ եւ ստացողներ ներկայացուցած էինք: Մեր ներկայ յոգուածով ալ սլիտի ծանօթացնենք 1592 թուականին Սերաստիոյ մէջ գրչագրուած Աւետարան մը, որուն Մարտիրոս Երէց Քլօմիւրճեանի կողմէ 1676-ին գրի առնուած յիշատակարանը մեծ կարեւորութիւն ունի երբեմնի Այ-Թէոդոսիա եւ այժմու վլանկայի Հիսարտիպի թաղը հինէն գոյութիւն ունեցող Ս. Սարգիս եկեղեցւոյ պատմութեանը համար: Մայր եկեղեցւոյ սեպհակահոթութիւնը եղող յիշեալ Աւետարանը ներկայ տարւոյն Յունիսի ամսուն մի քանի օր մեր տրամադրութեան տակ դնել հաճեցաւ տեղւոյն նախորդ հոգեւոր հովիւ՝ Արթ. Տ. Շաւարշ Քհնյ. Պալմեան, որ համեմատաբար իր կարճ պաշտօնավարութեան շրջանին զխաւորաբար գանձատան տուաւ ներկայանալի վիճակ մը:

Նախ կ'ուզենք տալ ձեռագրին նկարագրութիւնը, բովանդակութիւնը, յիշատակարանները եւ յիշատակագրութիւնները, ապա աւելցնել մեր ծանօթագրութիւնները:

Ա. ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ՝ 35-47-932, գրիչ եւ ծաղկող՝ անյայտ, ստացող՝ սկզբնական ստացողը անյայտ, 1676-ին Մահտեսի Փաշուկ, ապա կամարակապցի Նէփից Մալումի որդի Մահտեսի Ալիքաան (ժողովրդապէս ժԸ. դարու սկիզբներէն), տեղի՝ Սերաստիա,

ժամանակ՝ 1592, ծաւալ՝ 26×18×7 սմ., գրութեան չափ՝ 20×13 սմ., թուղթ՝ 243, էջ՝ 486, տող՝ 21, գիր՝ միջակ բոլորագիր, գրութիւն՝ երկսիւն, ցիւթ՝ հաստ բամպակեայ ողորկ ձեւով թուղթ, քանա՝ սեւ, զլուխներու առաջին եւ երկրորդ տողերը կարմիր թանաքով, սկզբը նստաձիւ՝ զլուխներուն թռչնադիր, ձկնագիր կամ ցարդապիր, համարներուն կարմիր թանաքով երկաթագիր, լուսանցագրով՝ իւրաքանչիւր զլուխի սկիզբը, միջակ արուեստով, ցկար՝ էջ 2, Մատթէոս Աւետարանի նկարը նստած վիճակի մէջ, ձախ ձեռքով բռնած է Աւետարանը, դէմը հրեշտակ մը, ետեւն ալ եկեղեցիի նման շէնք մը. էջ 1:36, Մարկոս Աւետարանի նկարը, նոյնպէս նստած վիճակի մէջ եւ ձախ ձեռքով բռնած Աւետարանը, դէմը նստած վիճակի մէջ թեւաւոր առիւծ մը, ետին ալ եկեղեցիի նման շէնք մը. էջ 224, Ղուկաս Աւետարանի նկարը նստած վիճակի մէջ, ձախ ձեռքով բռնած է Աւետարանը եւ ալ ձեռքով ալ գրիչ մը, դէմը նստած վիճակի մէջ թեւաւոր ցուլ մը՝ ետին ալ եկեղեցիի մը. էջ 278, Յովհաննէս Աւետարանի նկարը նստած վիճակի մէջ, ալ կողմը կը տեսնուի արծիւ մը, իսկ ձախ կողմն ալ սուրբ մը, ձեռքը գրիչ մը բռնած, վերը ձախ անկիւնը կը նշարութի լուսին մը, իսկ ալ անկիւնն ալ երկու նոճի, բոլոր նկարներն ալ արուեստի տեսակէտով միջակ գործեր են. կիսախորքով՝ էջ 3, 137, 225 եւ 379, ընդհանուր առմամբ անարուեստ գործեր են, կազմ՝ խաւաքարտեայ սրճագոյն կաշեպատ

կողքով, հանգամանք՝ խոնարհվելով ազդուած հւ այս պատճառաւ էջերը գունաթափ եղած կամ արտաւորուած, էջերուն ծայրերը թուղթ փակցուելով նորոգուած, մաս մը էջերու վարի մասերը թեթեւ ցեցակեր:

Բ. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւետարան ըստ Մատթէոսի (էջ 3-135բ)

Աւետարան ըստ Մարկոսի (էջ 137-222բ)

Աւետարան ըստ Ղուկասու (էջ 225-376բ)

Աւետարան բոտ Յովհաննու (էջ 379-482ա)

Գ. ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

1. Գլխաւոր յիշատակարան. էջ 482բ-483ա, բոլորագիր.

Փառք ամենայնորք Երրորդութեանն.

Որ մեր է յոյ(ս) անգուգական.

Փառք եւ պարծանք մեր դարւանման.

Այժմ եւ յաւիտ եւ յաւիտեան:

Որք Աստուծոյ սիրոյն հրով վառին. միշտ յԱստուած խոյան. եւ յԱստուծոյն իրողութիւնն փութոն բանիւ և իրօք: Բառնի ի դաւանելն. եւ յաղութելն. եւ իրաւ ի վաւսակ գործոյ. անձանձորք: Նաեւ սիրեն արձան. եւ յիշատակ բարի. ի փառս Աստուծոյ կանկնել (այսպէս): եւ յԱստուծոյ սիրով: Վրաստանաւ ի յոյսն ամենայն եղելոցս: յաւիտեանս ամէն:

Այդ շնորհիւ Տեառն եւ ոգորմութեամբ մօրին յանգ ելեալ աւարտեցաւ շնորհաբաշխ մատենան Աստուածաբան եւ կեն (էջ 483ա) սատար Աւետարանն ի քաղաք Սեբաստիայ, ԲՎ. ռխա (1592):

2. Նուիրատուին յիշատակարանը, էջ 483ա-485ա, բոլորագիր.

Յիշատակ է սուրբ Աւետարանս մահդասի Փաշուկին. եւ ծնողացն Արիւանին. եւ մօրն Մեհրանին. կենակցին մահդասի Աւրակուրին եւ եղբորն մահդասի Տիւակին, տալոյն մահդասի Մանուշակին. եւ դստերն Թաթար իրիցկնոջն և ամենայն արեան մերձաւորացն ի Քրիստոս փոխեցելոցն, ի քաղաք յԼստամբօլ. ի բանդայարկին, որ ասի տանիկ բառով Պապայ ձափար. Ուր գպար-

